UNFPA
NORWEGIAN MINISTRY OF FOREIGN AFFAIRS
հասարակագիտական հետազոտությունների կենտրոն

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ԶԵԿՈՒՅՑ

### ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԵՐԵՎԱՆ 2011

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

# ԶԵԿՈՒՅՑ

## ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԱԲՀ «ԸՆԴԴԵՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԾՐԱԳԻՐ/ՀԱՅԱՍՏԱՆ

«ԿՈՎԿԱՍ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆ 2011

Հետազոտությունը իրականացվել է «Կովկաս հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում ծրագրի շրջանակներում:

Զեկույցում արտահայտված կարծիքները հեղինակային են և կարող են չհամընկնել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տեսակետին:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԶԵԿՈՒՅՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

© 2011 ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում ծրագիր

Պետրոս Ադամյան 14, Երևան 0010
Հայաստանի հանրապետություն

Հեռ.՝ (+374) 10 541792
Էլ. փոստ՝ sargizova@unfpa.org

Զեկույցի հեղինակներն են.

**Հովհաննես Հովհաննիսյան**՝ ՄԱՍ I. Քաղաքացիական և քաղաքական մասնակցության ընդհանուր ցուցանիշներն ու դրանց գենդերային առանձնահատկությունները

**Լիլիթ Զաքարյան**՝ ՄԱՍ II. Մասնագիտական և քաղաքական կարիերայի գենդերային տեսանկյունները

**Վլադիմիր Օսիպով**՝ ՄԱՍ III. Մասնակցային գործընթացներ. գործոններ, խոչընդոտներ, դիրքորոշումներ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՄԱՍ I. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հասարակական-քաղաքական գործընթացներով հետաքրքրվածության և իրազեկության մակարդակը
2. Մասնակցությունը տարբեր մակարդակների ընտրություններին
3. Անդամակցությունը հասարակական, քաղաքական կազմակերպություններին ու շարժումներին
4. Հասարակական և քաղաքական ակտիվության հիմնական խոչընդոտները
5. Քաղաքական կառավարման տարբեր մակարդակներում կանանց համար քվոտաների սահմանման սկզբունքը և հանրային կարծիքը
6. Եզրակացություններ և երաշխավորություններ

ՄԱՍ II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Կարիերայի գենդերային տեսանկյունները ՄԱԿ-ի և Եվրոպայի Խորհրդի ռազմավարության խորապատկերում
2. Մասնագիտական կարիերայի գենդերային տեսանկյունները
3. Քաղաքական և բիզնես կարիերայի գենդերային տեսանկյունները
4. Քաղաքական կարիերայի ասպարեզում կանանց հարաբերական պասիվության պատճառները
5. Եզրակացություններ և երաշխավորություններ

ՄԱՍ III. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ. ԳՈՐԾՈՆՆԵՐ, ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ, ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. Հաղթահարվա՞ծ է արդյոք կանանց նկատմամբ խտրականությունը Հայաստանում
2. Ո՞ր ոլորտներում է առավելապես դրսևորվում կանանց նկատմամբ խտրականությունը
3. Գենդերային հավասարության ճանապարհի խոչընդոտները
4. Վերաբերմունքը կանանց քաղաքական ազդեցության մեծացման նկատմամբ
5. Կանանց քաղաքական մասնակցությանը նպաստող գործոնները
6. Քաղաքացիական և քաղաքական ակտիվության մակարդակը
7. Եզրակացություններ և երաշխավորություններ

ԱՄՓՈՓՈՒՄ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՎԵԼՎԱԾ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ժամանակակից պայմաններում հասարակության զարգացումը ենթադրում է ներկայացուցչական և մասնակցային ժողովրդավարության սկզբունքների ապահովում: Դժվար է պատկերացնել հասարակական համակարգի կայուն առաջընթացն առանց սոցիալական տարբեր խմբերի ու խավերի ներգրավվածության, տեղի ունեցող իրադարձություններին ակտիվ մասնակցության, առանց հանրային կառավարման և որոշումների ընդունման գործընթացների վրա նրանց ազդեցության: Մինչդեռ, վիճակագրական տվյալների ուսումնասիրությունները, տեղի ունեցող գործընթացների դիտարկումները, ինչպես նաև միջազգային և տեղական տարբեր կազմակերպությունների իրականացրած ուսումնասիրությունները[1] վկայում են, որ ինչպես աշխարհի շատ երկրներում, Հայաստանում ևս քաղաքական որոշումների կայացման մակարդակներում, տնտեսական, սոցիալական գործընթացներին մասնակցության ոլորտում առկա են գենդերային անհավասարության ու խտրականության դրսևորումներ, լուծման կարոտ խնդիրներ:

Թեև Հայաստանը բնակչության կրթվածության առումով ունի բավական բարձր ցուցանիշներ, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների կեսից ավելին կանայք են[2], այդուհանդերձ, կանանց ներկայացվածությունը քաղաքական որոշումների կայացման մակարդակում, բիզնեսի և տնտեսական կառավարման, տեղական ինքնակառավարման, տարածքային և պետական կառավարման կենտրոնական օղակներում, ինչպես նաև կուսակցությունների ղեկավար մարմիններում բավականին ցածր է: Դա նշանակում է, որ կանանց ներուժը լիարժեք չի իրացվում հանրային կառավարման, որոշումների կայացման, տնտեսական, հասարակական-քաղաքական կառավարման ասպարեզներում:

Վերջին տարիներին Հայաստանում իրականացվել են առանձին ուսումնասիրություններ կանանց նկատմամբ խտրականության երևույթների, որոշումների կայացման մակարդակում նրանց ոչ բավարար ներկայացվածության պատճառների բացահայտման, գենդերային բռնության տեսանկյունից ՀՀ օրենսդրության փորձաքննության նպատակով[3]:

Սակայն, ներկայացուցչական ժողովրդավարության ապահովման ճանապարհին եղած խոչընդոտների համակողմանի ուսումնասիրման և դրանց հաղթահարման սկզբունքների մշակման առումով շարունակում են կարևորվել Հայաստանում տղամարդկանց և կանանց հասարակական-քաղաքական ակտիվության ու մասնակցության առանձնահատկությունների բացահայտմանն ու վերլուծությանը նվիրված առավել ներկայացուցչական, սոցիալական տարբեր խմբեր և խավեր ընդգրկող հետազոտությունները, որոնք միտված են ինչպես իրավական, այնպես էլ սոցիալ-

---

[1] Տես, օրինակ, Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. Գենդերային հավասարության չափումը: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Ժողովրդավարության և խաղաղության կենտրոն: Երևան, 2006; Համահանրապետական հարցում Հայաստանում կանանց հանդեպ ընտանեկան բռնության վերաբերյալ. 2008-2009: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ: Երևան, 2010; Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2002-2007 թթ.: Այլընտրանքային զեկույց: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն: Եր., 2007; Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին: Վերլուծական տեսություն: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն: Եր., 2007; Որոշումների կայացման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայացվածության պատճառների ուսումնասիրություն: Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ՀՀ ազգային ինստիտուտ: Եր., 2008:

[2] Տես ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները: Երևան, 2003, էջ 243-245; Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: Երևան, 2010, էջ 50-53:

[3] Տես Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. Գենդերային հավասարության չափումը: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Ժողովրդավարության և խաղաղության կենտրոն: Երևան, 2006; Կանայք զարգացման մեջ. Ժամանակակից հասարակության գենդերային հիմնահարցեր (ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքների): Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոն: Երևան,1999; ՀՀ օրենսդրության փորձաքննություն գենդերային բռնության տեսանկյունից: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ: Երևան, 2009:

մշակութային, բարոյահոգեբանական, ավանդույթային, տնտեսական, կարծրատիպային և այլ գործոնների ու դրանց ազդեցության ուսումնասիրությանը:

Այդպիսի առաքելություն ուներ նաև 2010 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հովանավորությամբ իրականացված հետազոտական ծրագիրը:

*Հետազոտության նպատակը*

Աջակցել պետական գենդերային քաղաքականության մշակմանն ու իրագործմանը, կառավարման ոլորտում կանանց ներկայացվածության, որոշումների ընդունման և հասարակական-քաղաքական գործընթացներին նրանց մասնակցության մակարդակի բարձրացման մեխանիզմների հզորացմանը:

*Հետազոտության խնդիրները*

***ա)*** Իրականացնել սոցիոլոգիական հարցման վրա հիմնված քանակական հետազոտություն՝ հասարակական-քաղաքական գործընթացներին կանանց և տղամարդկանց մասնակցության համեմատական բնութագիրն ու դինամիկան, ինչպես նաև հանրային կարծիքի դրսևորումներն այդ խնդիրների վերաբերյալ վեր հանելու նպատակով,

***բ)*** բացահայտել այդ գործընթացներին կանանց լիարժեք մասնակցությանը նպաստող և խոչընդոտող սոցիալական, տնտեսական, քաղաքական, կրթական, քարոզչական, բարոյահոգեբանական, ավանդույթային, կարծրատիպային և այլ մոտիվացիոն գործոնները,

***գ)*** մշակել հասարակական-քաղաքական մասնակցությանը խոչընդոտող գործոնների ազդեցության թուլացման ու դրանց վերացման երաշխավորություններ գենդերային քաղաքականության հիմնադրույթները մշակող պետական օղակների և շահագրգիռ ոչ կառավարական կազմակերպությունների համար:

*Հետազոտության ընտրանքը և գործիքները*

Սոցիոլոգիական ուսումնասիրությունն իրականացվել է ընտրանքային հետազոտության սկզբունքով՝ Երևան քաղաքում և ՀՀ չորս մարզերում: Ընտրանքային համախումբը ձևավորվել է բազմաստիճան քլաստերային, համամասնական և սիստեմատիկ ընտրանքային սկզբունքների համադրմամբ: Առաջին փուլում որպես քլաստերներ առանձնացվել են Երևան քաղաքը և ՀՀ չորս մարզեր՝ երկուսը գյուղական բնակչության գերակայությամբ, երկուսը՝ քաղաքային: Երկրորդ փուլում իրականացվել է շերտավորված ընտրանք՝ ըստ Երևան քաղաքի համայնքների և մարզերի քաղաքայի ու գյուղական բնակչության, ընտրության միավորը՝ բնակավայր: Երրորդ փուլում ընտրանքի բաշխումն ըստ քլաստերների ու շերտերի կատարվել է համաձայն դրանցում վերջնական միավորների համամասնական ներկայացման սկզբունքի: Չորրորդ փուլում տվյալ բնակավայրում բնակարանների ընտրության նպատակով կիրառվել է երթուղային-սիստեմատիկ ռազմավարություն. սահմանվել է քայլ՝ բազմաբնակարան շենքերում n+4, իսկ առանձնատներով փողոցներում՝ n+3: Վերջին փուլում ռանդոմիզացիան իրականացվել է մոտակա ծննդյան օրվա սկզբունքով:

Հետազոտությունն իրականացվել է Երևանի տասը համայնքներում, ՀՀ Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի մարզերի տասներկու քաղաքային և երեսունվեց գյուղական բնակավայրերում:

Ծրագրի աշխատանքներն իրականացվել են 2010 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Նախնական սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաքագրումն իրականացվել է ստանդարտացված հարցազրույցի մեթոդով:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը բաղկացած է երեք մասից: ***Առաջին մասը*** նվիրված է հասարակական-քաղաքական գործընթացներով հետաքրքրվածության, իրազեկության և մասնակցության ընդհանուր ցուցանիշների և դրանց գենդերային առանձնահատկությունների վերլուծությանը: ***Երկրորդ մասում*** վերլուծվում են մասնագիտական և քաղաքական կարիերայի գենդերային տեսանկյունները և հանրային կարծիքի գնահատականներն այդ խնդիրների վերաբերյալ: ***Երրորդ մասը*** նվիրված է գենդերային հավասարությանը խոչընդոտող գործոնների վերլուծությանը, կանանց քաղաքական մասնակցությունը խթանող պայմանների հետազոտմանը, գենդերային խտրականության դրսևորումների և դրանց հաղթահարման հնարավորությունների քննարկմանը:

## ՄԱՍ I. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1. Հասարակական-քաղաքական գործընթացներով հետաքրքրվածության և իրազեկության մակարդակը

Հանրության առջև ծառացած խնդիրների արդյունավետ լուծման և կայուն զարգացման կարևորագույն երաշխիքներից մեկը հասարակության տարբեր խմբերի ու խավերի ակտիվ քաղաքական դիրքորոշումն է և կառուցողական մասնակցությունը տեղի ունեցող գործընթացներին:

Քաղաքական մասնակցությունը հասարակության անդամների ներգրավվածությունն է քաղաքական հարաբերություններում, անմիջական կամ միջնորդավորված ներկայությունը քաղաքական կյանքում, ընդգրկվածությունը քաղաքական ինստիտուտների ձևավորման, որոշումների ընդունման և դրանց իրագործման գործընթացներում:

Սոցիալական փիլիսոփայության, քաղաքագիտության, սոցիոլոգիայի և հոգեբանության շրջանակներում կան քաղաքացիական և քաղաքական մասնակցության վերաբերյալ տարբեր, նույնիսկ տրամագծորեն հակադիր հայեցակարգեր:

Քաղաքական մասնակցության հարցերի վերաբերյալ **ազատական** դիրքորոշում ունեցող տեսաբանները գտնում են, որ քաղաքական գործընթացներին մասնակցության ծավալների հնարավորինս ընդլայնումը քաղաքական լեգիտիմության հուսալի գործոն է, մրցակից քաղաքական կուսակցությունների փոխադարձ անվտանգության ապահովման լավագույն ձև: Մինչդեռ, **պահպանողական** դիրքորոշում ունեցողները քաղաքական մասնակցության ծավալների ընդլայնման մեջ տեսնում են ազգային միասնության և համակարգի կայուն հիմքերի խաթարման վտանգ: Նրանք նորովի են փորձում հիմնավորել դեռևս հին հունական մշակույթից հայտնի հերակլիտ-պլատոնյան սկզբունքը, թե լավագույն փոքրամասնության իշխանությունը նախընտրելի է ոչ իրազեկ մեծամասնության կառավարումից: Այս տեսակետի համաձայն՝ քաղաքական որոշումները պետք է կայացնեն մարդիկ, ովքեր առավել տեղեկացված են, հմուտ են և ունակ քաղաքական կառավարման հարցերում: Ոմանք էլ առավել արդյունավետ են համարում չափավոր, իրազեկ և ինստիտուցիոնալացված (քաղաքական և հասարակական ինստիտուտների կողմից կարգավորվող ու նորմավորվող) մասնակցությունը: Այս հայեցակարգերի մրցակցությունը երկար ճանապարհ է անցել Պլատոնի, Դեմոկրիտի ու Արիստոտելի ժամանակներից մինչև մեր օրերը՝ Ստենլի Կացս և Գյունտեր Գրաս[4]:

Ժամանակակից այլ տեսաբաններ էլ առանձնացնում են հասարակության անդամների մասնակցությունը «սիմվոլիկ» (խորհրդանշական) քաղաքականությանը, այսինքն՝ ընտրություններին ու քվեարկություններին և, համարելով դա անբավարար, կարևորում են մարդկանց անմիջական մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացներին[5]:

Քաղաքական մասնակցության անմիջական և միջնորդավորված (կամ ներկայացուցչական) ձևերից զատ, Ու. Միլբրայթն առաջարկում է դասակարգման այլ սկզբունք, առանձնացնելով մասնակցության **կոնվենցիոնալ**՝ լեգալ և օրենքով կարգավորվող (օրինակ՝ մասնակցություն կուսակցությունների գործունեությանը, ընտրական գործընթացներին, արտոնված ցույցերին, շփումները պաշտոնական դեմքերի հետ և այլն), և **ոչ կոնվենցիոնալ**՝ անօրինական և հասարակության մեծ մասի կողմից մերժված ձևերը (օրինակ՝ մասնակցությունը չարտոնված

[4] Տես Грасс Г., ,"О периодах застоя в прогрессе из дневника улитки." СПб., 1999, էջ 311-312; Katz S., «Shaping the political structures for Democracy: Introduction», New London, CT, 1998, էջ 7; Օսիպով Վ., «Քաղաքական մասնակցությունը և ժողովրդավարությունը. ՀԿ-ների դերը անցումային փուլի հասարակությունում»: Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. Գենդերային հավասարության չափումը: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Ժողովրդավարության և խաղաղության կենտրոն: Երևան, 2006, էջ 60-63; Շափաղաթյան Հ., Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրներ: Երևան, 2007, էջ 16-17:

[5] Տես Pateman C., Participation and Democratic Theory. Cambridge, 1970, էջ 5:

ցույցերին, պիկետներին, խռովություններին, բռնարարքներին և ահաբեկչական գործողություններին)[6]:

Վերջապես, քաղաքացիական ու քաղաքական ակտիվությունն ու մասնակցությունը կարող են լինել **տարերային** (ինքնաբուխ, հախուռն, չկազմակերպված) և **կազմակերպված** (հասարակական-քաղաքական ինստիտուտների կողմից կարգավորվող և վերահսկվող):

Այնուհանդերձ, կարևոր է մշակել քաղաքացիական-քաղաքական ակտիվության և մասնակցության՝ թվարկված բոլոր ձևերի համար չափման ընդհանուր մի սանդղակ, որը թույլ կտա արձանագրել մասնակցության տարբեր մակարդակները: Այդ առումով ուշագրավ է ռուս քաղաքագետ Ա. Վ. Մելնիկի՝ մասնակցության և ակտիվության ցուցանիշների դասակարգումը, որը մասնակի խմբագրմամբ որպես հիմք է ընդունվել սույն հետազոտության մեթոդաբանական փաստաթղթերում: Նա առաջարկում է մասնակցության ձևերի ու մակարդակների հետևյալ դասակարգումը.

1. քաղաքական համակարգի, ինստիտուտների և/կամ նրանց ներկայացուցիչների գործողությունների նկատմամբ ձևավորված ռեակցիան,
2. մասնակցություն այնպիսի գործողությունների, որոնք կապված են ներկայացուցչական իրավասությունների հետ,
3. մասնակցություն քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների գործունեությանը,
4. քաղաքական գործառույթների կատարում այն ինստիտուտների շրջանակներում, որոնք մտնում են քաղաքական համակարգի մեջ կամ ուղղված են դրա դեմ,
5. ուղղակի մասնակցություն քաղաքական գործողություններին (հանրահավաքներ, քվեարկություն, ստորագրահավաք և այլն),
6. ակտիվ, նաև ղեկավարող գործունեություն քաղաքական շարժումներում[7]:

Դասակարգման այս տարբերակում թերևս կարելի է ավելացնել նաև քաղաքական ու քաղաքացիական մասնակցության ծայրահեղ՝ ոչ կոնվենցիոնալ դրսևորումները (մասնակցությունը չարտոնված ցույցերին, պիկետներին, խռովություններին և այլն): Որպես քաղաքական և հասարակական գործընթացներում ինտեգրվածության նախապայման պետք է առանձնացնել նաև քաղաքացիների ա) հետաքրքրվածությունը և տեղեկացվածությունը այդ գործընթացների ու իրողությունների վերաբերյալ, բ) դրանց նկատմամբ որոշակի գնահատականի, դիրքորոշման ու վերաբերմունքի առկայությունը: Այս սանդղակում պետք է ներառնել նաև քաղաքացիների որոշակիորեն մոտիվավորված և գիտակցված իներտությունը, ապատիան կամ «անգործությունը», որն ընդունված է անվանել քաղաքական մասնակցության **իմոբիլ** (անշարժ ձև): Այսպիսով կստացվի քաղաքացիական և քաղաքական մասնակցության վերլուծության՝ տասը բնութագրիչներից կազմված սանդղակ:

Կատարված հետազոտության տվյալները վկայում են, որ հասարակական-քաղաքական իրադարձություններով ու գործընթացներով հետաքրքրվածության ընդհանուր ցուցանիշը կազմում է 49,9% (13,2%-ը մշտապես հետաքրքրվում է կատարվող իրադարձություններով, իսկ 36,7%-ը հետաքրքրվում է ընդհանուր առմամբ): Տարիքային ցենզի աճին զուգընթաց հասարակական-քաղաքական իրադարձություններով հետաքրքրվողների թիվն աճում է՝ 61 և ավելի տարեկանների մոտ կազմելով 58,5%: ***Տես Գծապատկեր 1:***

[6] Ըստ Շափաղաթյան Ղ., Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրներ: Երևան, 2007, էջ 79; տես նաև Шестопал Е.Б., Очерки политической психологии. М., 1990, էջ 388:
Սույն հետազոտության տվյալներով, օրինակ, հասարակական-քաղաքական գործընթացներին «ոչ կոնվենցիոնալ» մասնակցություն է դրսևորել հարցվողների 6%-ը: Նույն տվյալներով՝ այդ ցուցանիշը որոշակի պայմաններում կարող է եռապատկվել՝ հասնելով 18.3%-ի: Տես Հավելված 1, հարց 38:

[7] Տես Мельник А.В., Политология, М., 1996, էջ 338

*Գծապատկեր 1. Հասարակական-քաղաքական իրադարձություններով հետաքրքրվողների տեսակակար կշիռը տարիքային տարբեր խմբերում*




Տղամարդ ռեսպոնդենտների շրջանում հասարակական-քաղաքական իրադարձություններով հետաքրքրվածության ցուցանիշը 9,4%-ով ավելի է, քան կանանց մոտ: ***Տես Գծապատկեր 2:***

*Գծապատկեր 2. Հասարակական-քաղաքական իրադարձություններով հետաքրքրվածության ցուցանիշը տղամարդկանց և կանանց շրջանում*




Տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացներով հետաքրքրվածության ցուցանիշը որոշակիորեն պայմանավորված է նաև հարցման մասնակիցների կրթամակարդակով: Վերջինիս աճին զուգընթաց այդ ցուցանիշն ավելացման հստակ միտում է արձանագրում:***Տես Գծապատկեր 3:***

*Գծապատկեր 3. Հասարակական-քաղաքական իրադարձություններով հետաքրքրվածության ցուցանիշն ըստ հարցվողների կրթամակարդակի*




Հասարակական-քաղաքական գործընթացներով հետաքրքրվածության ցուցանիշը Երևան քաղաքում (47%) փոքր-ինչ ավելի ցածր է, քան հետազոտության ընտրանքում ընդգրկված մարզերում (51,3%):

Հետազոտության արդյունքները վկայում են, որ քաղաքացիների հետաքրքրվածությունն ու ակտիվ դիրքորոշումը պայմանավորված է նաև նրանց ֆինանսական և սոցիալական կարգավիճակով: Հասարակական-քաղաքական իրադարձություններով հետաքրքրվածության ցուցանիշն համեմատաբար բարձր է միջին եկամուտ ունեցող ընտանիքներ ներկայացնող ռեսպոնդենտների շրջանում: Մինչդեռ սոցիալապես անապահով և լավ ապահովված ընտանիքների ներկայացուցիչների մոտ այդ ցուցանիշի անկում է արձանագրվում: Տես Գծապատկեր 4:

*Գծապատկեր 4. Հասարակական-քաղաքական իրադարձություններով հետաքրքրվածության ցուցանիշի կապն ընտանիքի միջին ամսական եկամուտի հետ*



Հարցման մասնակիցների մի զգալի մասի մոտ էլ նկատելի է հասարակական-քաղաքական իրադարձությունների նկատմամբ պասիվ (33,7%), երբեմն էլ՝ իներտ, ապատիկ և խոհեմ դիրքորոշում (16,5%): Հասարակական-քաղաքական իրադարձություններով ընդհանրապես չհետաքրքրվողները կանանց շրջանում կազմում են 17,5%, իսկ տղամարդկանց մոտ՝ 15,3% (հարցման մասնակիցների համապատասխանաբար 9,5%-ը և 7,0%-ը): Իներտության երևույթն առավել նկատելի է երիտասարդների՝ 18-30 տարեկանների՝ 19,8%, և 31-45 տարեկանների՝ 17,8%, շրջանում[8]:

Քաղաքացիական, քաղաքական պասիվության, աբսենտեիզմի[9] և դրանց հաղթահարման հիմնահարցերի վերլուծությանն է նվիրված սույն հետազոտության առաջին մասի չորրորդ բաժինը:

Քաղաքացիական ու քաղաքական ակտիվության հաջորդ կարևոր ցուցանիշը **տեղեկացվածությունն է առկա գործընթացների ու իրողությունների մասին** և դրանց **տրվող գնահատականներն ու ռեակցիաները:**

Փորձը ցույց է տալիս, որ ռեսպոնդենտների ինքնագնահատականը միշտ չէ, որ համապատասխանում է իրականությանը: Մի զգալի մասի մոտ դրանք միտված են սեփական կարողությունների ու հնարավորությունների գերագնահատմանը, համեմատաբար փոքր մասի մոտ՝ թերագնահատմանը:

ՀՀ բուհերն ավարտած երիտասարդ մասնագետների շրջանում 2005թ. անցկացված հետազոտության տվյալներն արձանագրում են, որ նրանք իրենց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները 5 միավորանոց սանդղակով գնահատելիս, ընդհանուր առմամբ մեկ միավոր ավելի բարձր են գնահատել, քան գործատուները, որոնց մոտ աշխատում էին երիտասարդները[10]:

Ներկայացվող հետազոտության շրջանակներում հարցվողներին առաջարկվել է նշել ՀՀ-ում գործող պետական կառավարման ձևը՝ «նախագահական», «պառլամենտական» և «կիսանախագահական» տարբերակներից: Թեև Հայաստանի Երրորդ Հանրապետությունում գործում է պետական կառավարման կիսանախագահական ձևը և 2005 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում խորհրդարանի ու կառավարության իրավասությունների ընդլայնումից հետո էլ այն ըստ էության մնում է կիսանախագահական, այդուհանդերձ հարցման մասնակիցների 47,8%-ը ՀՀ կառավարման ձևը համարել է «նախագահական», 6,2%-ը՝ «պառլամենտական» և միայն 31,2%-ն է այն սահմանել որպես «կիսանախագահական»: 12,6%-ն էլ դժվարացել է որևէ պատասխան տալ[11]: Ընդ որում, հասարակական-քաղաքական իրադարձությունների նկատմամբ հետաքրքրության տարբեր մակարդակներ ունեցող ռեսպոնդենտների մոտ այդ ցուցանիշները շատ չեն տարբերվում: Կարելի է ընդգծել, թերևս, այդ իրադարձություններով «մշտապես» և «ընդհանուր առմամբ» հետաքրքրվողների պատասխանները, որոնց 36%-ն է ՀՀ պետական կառավարման ձևը սահմանել կիսանախագահական: Առանձնանում է նաև ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերը ներկայացնող ռեսպոնդենտների պատասխանը, որոնց 38,2%-ը ևս տվել է քաղաքագիտական առումով առավել ճիշտ պատասխան՝ ՀՀ պետական կառավարման ձևը սահմանելով որպես «կիսանախագահական»[12]:

Պետք է ենթադրել, որ այս հարցի պատասխաններում, ըստ էության, ավելի շատ արտացոլված է երևույթի հանրային ընկալումը, քան խնդրի իրավաբանական կողմի իմացությունը: Գաղտնիք չէ, որ նախագահի գործոնը նորանկախ Հայաստանում իշխանության մյուս

---

[8] Իներտությամբ աչքի ընկնող քաղաքացիների խմբում 18-30 և 31-45 տարեկանները կազմում են համապատասխանաբար 36,4% և 31,3%, կանայք՝ 57,6%, տղամարդիկ՝ 42,4%:

[9] Աբսենտեիզմ – լատ. absens (absentis) – բացակայող: Հասկացությունն արտացոլում է քաղաքական ընտրություններին, գործընթացներին չմասնակցելու, խուսափելու երևույթը: Տե՛ս Краткий политический словарь. М., 1989, էջ 5:

[10] Տես ՀՀ մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության զարգացման հայեցակարգային մոտեցումներ: ՄԱԶԾ, ՀՀ ԿԳՆ, 2005: Մաս 6.5: http://www.undp.am/docs/publications/2005publications/edication.pdf

[11] Հարցվողների 2,1%-ն էլ տվել է հարցի պատասխանների տրամաբանությունից դուրս՝ այլ, հիմնականում բացասական գնահատականներ՝ «կլանային», «օլիգարխիկ», «ստրկատիրական», «անտանելի» և այլն:

[12] Մարզերի քաղաքները և Երևանը ներկայացնող ռեսպոնդենտների մոտ այդ ցուցանիշը կազմում է համապատասխանաբար՝ 33,1% և 22,3%:

ինստիտուտների ու օղակների համեմատությամբ եղել և դեռևս մնում է քաղաքական հարաբերություններում առավել ազդեցիկ, երբեմն էլ՝ վճռորոշ իրողություն:

Հարցվողների իրազեկության գնահատման նպատակով առաջարկված երկրորդ հարցը բացառում էր հնարավոր տարըմբռնումները, խնդրի դե-ֆակտո և դե-յուրե մեկնաբանումները: Նրանց առաջարկվել էր նշել, թե քանի խմբակցություններ կան ՀՀ 2007-2012 թթ. գումարման Ազգային ժողովում[13]: Աժ խմբակցությունների թիվը ճիշտ է նշել հարցման մասնակիցների 27,7%-ը: 48,1%-ը դժվարացել է պատասխանել հարցին: Իսկ 24,2%-ը տվել է սխալ պատասխաններ: Ընդ որում, հասարակական-քաղաքական գործընթացների նկատմամբ «մշտապես» կամ «ընդհանուր առմամբ» հետաքրքրություն դրսևորողների *(տես Հավելված, հարց 1, կետ 1,2)* միայն 38,6%-ն է տվել ճիշտ պատասխան, 35,5%-ը դժվարացել է պատասխանել, իսկ 25,9%-ը նշել է սխալ պատասխաններ:

Ուշագրավ է, որ այս հարցին ճիշտ պատասխանողները տղամարդկանց մեջ ավելի շատ են (34,5%), քան կանանց շրջանում (21,8%): ***Տես Աղյուսակ 1:***

***Աղյուսակ 1. ՀՀ Ազգային ժողովում գործող խմբակցությունների թվի վերաբերյալ հարցի պատասխաններն ըստ հացվողների սեռի***

| | Հարցվողների ընդհանուր թվի | Տղամարդկանց | Կանանց |
|---|---|---|---|
| Ճիշտ պատասխան | 27,7% | 34,5% | 21,8% |
| Սխալ պատասխան | 24,2% | 26,9% | 21,8% |
| Դժվարացել են պատասխանել | 48,1% | 38,5% | 56,9% |

Աղյուսակից երևում է, որ տղամարդկանց շրջանում համեմատաբար մեծ է տեղեկացվածների և «համարձակորեն սխալվողների» թիվը, իսկ կանանց շրջանում՝ միանշանակ պատասխան չունեցողների և դրանից խուսափողների թիվը:

«Տեղյակների» տեսակարար կշիռը համեմատաբար մեծ է նաև 46-60 և ավելի տարեկանների (31,8%) և բարձրագույն կրթությամբ ռեսպոնդենտների (33,6%) շրջանում: Ընդ որում, մտահոգիչ է, որ տաիքային ցենզի նվազմանը զուգահեռ իրազեկ ռեսպոնդենտների թիվը նվազում է: Ամենաքիչ ճիշտ պատասխանները (23,9%) և ամենաշատ սխալ պատասխաններն (26,4%) արձանագրվել են հենց 18-30 տարեկանների մոտ:

Այսպիսով, հասարակական, քաղաքական իրողությունների ու գործընթացների մասին հանրության լայն խավերի բավարար տեղեկացվածությունը դեռևս մնում է իշխանությունների, քաղաքական կուսակցությունների և, հատկապես, ոչ կառավարական կազմակերպությունների ու զանգվածային լրատվամիջոցների օրակարգում: Քանզի ոչ բանիմաց ակտիվությունը, վարքագծի ինքնաբուխ և նեղ-իրավիճակային դրսևորումները կարող են խոչընդոտող դեր խաղալ հասարակական կայունության ու զարգացման գործընթացներում:

Ինչ վերաբերում է **հասարակական-քաղաքական իրողություններին տրվող գնահատականներին ու դիրքորոշումներին**, ապա ստացված տվյալները որքան որոշակի, նույնքան էլ մտահոգիչ են: Հարցման մասնակիցների միայն 24,6%-ն է Հայաստանում հաստատված վարչակարգն համարում ժողովրդավարական: Մինչդեռ 25,8%-ն այն համարում է ոչ ժողովրդավարական (այդ թվում՝ 9,2%-ը՝ ավտորիտար, 13,7%-ը՝ամբողջատիրական), իսկ 39,3%-ը՝ խառը (այսինքն՝ կառավարման թե՛ ժողովրդավարական, թե՛ ոչ ժողովրդավարական ձևեր

[13] Աժ-ում կային իշխանական կոալիցիան ներկայացնող երեք (ՀՀԿ, ԲՀԿ և ՕԵԿ) և երկու ընդդիմադիր (ՀՅԴ և ԺԿ) խմբակցություններ:

ներառող): Թեև նախկինում կատարված որոշ ուսումնասիրությունների[14] տվյալների հետ համեմատելիս նկատելի են դրական տեղաշարժեր, սակայն ընդհանուր առմամբ իրողությունը մնում է մտահոգիչ. դանդաղ են զարգանում քաղաքական ու քաղաքացիական մասնակցությունը խթանող միջավայրը ու կառուցակարգերը: Դա են վկայում այն հարցի պատասխանները, թե «բարելավվե՞լ է արդյոք քաղաքացիական և քաղաքական իրավունքների ու ազատությունների համակարգը վերջին 3 տարիների ընթացքում»: Հարցվողների 39,3%-ը հարցին տվել է ընդհանուր առմամբ դրական պատասխան, 30,2%-ը գտնում է, որ վիճակը մնացել է նույնը, իսկ 25,9%-ն էլ համարում է, որ վիճակն ընդհանուր առմամբ վատացել է:

Քաղաքական կուսակցություններն ու իշխանությունները պետք է ներկուսակցական և հասարակական կյանքի ժողովրդավարացման վճռական գործողություններ իրականացնեն, խրախուսելով հասարակության անդամների քաղաքացիական ակտիվությունն ու քաղաքական մասնակցությունը, որպեսզի հաղթահարվի երկրի զարգացման տեսանկյունից վտանգավոր ապատիան, իներտությունն ու նիհիլիզմը, ձևավորվի սոցիալական գործընկերության առողջ մթնոլորտ:

## 2. Մասնակցությունը տարբեր մակարդակների ընտրություններին

Քաղաքական և քաղաքացիական ակտիվության կարևոր ու հիմնական ցուցանիշներից է մասնակցությունը իշխանության տարբեր մակարդակների ընտրություններին: Ժողովրդավարական ընտրությունները, որոնք նպաստում են քաղաքացիների մասնակցությանը պետության կառավարմանը, իշխանության լեգիտիմության կարևոր գործոն են:

Հետազոտության տվյալները վկայում են, որ երկրի ու հասարակության համար ընտրությունների նշանակությամբ և կարևորությամբ պայմանավորված՝ մասնակցության ցուցանիշն ավելանում է[15]: *Տես Գծապատկեր 5*:

*Գծապատկեր 5. Հարցվողների մասնակցությունը տարբեր մակարդակների ընտրություններին*




14 Տես Օսիպով Վ., Քաղաքական մասնակցությունը և ժողովրդավարացումը. ՀԿ-ների դերը անցումային փուլի հասարակությունում: «Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. Գենդերային հավասարության չափումը»: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Ժողովրդավարության և խաղաղության կենտրոն: Երևան, 2006, էջ 66-67:

15 Այդ են վկայում նաև ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալները: Տե՛ս http://www.elections.am/

Նշված բոլոր ընտրություններում կանանց և տղամարդկանց մասնակցության ցուցանիշները գրեթե նույնն են, թերևս՝ կանանց փոքր-ինչ գերակշռությամբ: *Տես Աղյուսակ 2:*

*Աղյուսակ 2. Տարբեր մակարդակների ընտրություններում տղամարդկանց և կանանց մասնակցության ցուցանիշները*

| Ընտրության տեսակը | Մասնակցությունը | |
|---|---|---|
| | Տղամարդկանց | Կանանց |
| Հանրապետության ղեկավար կազմի ընտրություն | 43,3% | 47,2% |
| Համայնքի ղեկավար կազմի, ավագանու ընտրություն | 66,0% | 68,2% |
| Ազգայի ժողովի 2007 թ. ընտրություն | 68,5% | 68,0% |
| ՀՀ նախագահի 2008 թ. ընտրություն | 79,8% | 82,2% |

Ամերիկացի քաղաքագետներ Գ. Ալմոնդը և Ս. Վերբան առանձնացնում են քաղաքացիական մասնակցության երեք հիմնական տեսակներ. **ա) նահապետական մշակույթ, բ) հպատակային կամ կախվածության ու ստորադրության մշակույթ և գ) մասնակցային (պարտիցիպատիվ) մշակույթ**[16]: **Առաջին տարբերակում** բացակայում են քաղաքական արժեքների, իրողությունների ու նպատակների մասին գիտելիքները, նորմատիվ դատողությունները: Մասնակցության այս ոճը հանդիպում է բոլոր, ինչպես նաև անցումային համակարգերում, որտեղ քաղաքացիներից շատերի մտահորիզոնը պարփակվում է ավանդական շրջանակներում: **Երկրորդ տարբերակում** մասնակցությունն արտահայտվում է վարքի այնպիսի մոդելով, որի ժամանակ քաղաքական ղեկավարությունն ընդունվում է հիմնականում պատժի և խրախուսման նորմերով և հանձնարարականներով, որոնց պետք է ենթարկվել: Այս մոդելի հիմնական հոգեբանական դրդապատճառը պարգևի ստացման սպասումներն են և պատժի վախը: **Մասնակցության մշակույթը** ենթադրում է վարքի ավելի բարդ և գիտակցված մոդել: Այս տարբերակը կարելի է բնութագրել որպես սոցիալական գործընկերություն, երբ պետական իշխանությունը դիտարկվում է ոչ միայն նորմերի (որոնց պետք է ենթարկվել) և հանձնարարականների (որոնք պետք է կատարել) համատեքստում, այլև քաղաքական որոշումների ընդունմանը մասնակցելու գործիքներ առաջարկողի դերում:

Այսպիսով, հաշվի առնելով քաղաքական իրողությունների վերաբերյալ ռեսպոնդենտների համեմատաբար թույլ, երբեմն էլ ոչ բավարար տեղեկացվածությունը և մյուս կողմից՝ քաղաքական իշխանության տարբեր մակարդակների ընտրություններում նրանց մասնակցության համեմատաբար խոսուն ցուցանիշները *(տես Հավելված, հարց 2)*, կարելի է եզրակացնել, որ Հայաստանում քաղաքացիական և քաղաքական մասնակցության մշակույթը դեռևս պարտիցիպատորային, ասել է թե՝ գիտակցված և ազատ կամ գործընկերային համարել չի կարելի: Այն աչքի է ընկնում «հպատակայինին» և «մասնակցայինին» բնորոշ արժեհամակարգերի մրցակցությամբ, հին և նոր արժեքային կողմնորոշումների միջև հակասական գործընթացներով:

Մասնակցային ժողովրդավարության ամենագլխավոր առավելությունը իշխանությունից քաղաքացիների օտարվածության հաղթահարումն է, ինչը հաճախ է նկատվում անգամ զարգացած ժողովրդավարության երկրներում և հազվադեպ չէ, որ հանգեցնում է սոցիալական ճգնաժամերի ու կոնֆլիկտների: Ժողովրդավարության մասնակցային մշակույթի արմատավորման գործընթացը մեկ գործողությամբ իրականացնել հնարավոր չէ: Հասարակական գիտակցության, արժեքային կողմնորոշումների, քաղաքական վարքի ստանդարտների վերափոխման գործընթացները

[16] Տես Almond G. and Verba S., The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Prinston Univ.Press,1963:

միջոցներ ու ժամանակ են պահանջում՝ հաճախ ծավալվելով ժամանակի միջսերնդային միջակայքերում: Այդ խնդիրների իրականացման գործում էական անելիքներ ունեն պետական իշխանության մարմինները, կուսակցությունները և քաղաքացիական հասարակության ինստիտուտները Հայաստանում:

### 3. Անդամակցությունը հասարակական, քաղաքական կազմակերպություններին ու շարժումներին

Հարցման ընթացքում ստացված տվյալները վկայում են Հայաստանում ոչ կառավարական կազմակերպությունների դաշտի դեռևս ոչ բավարար ձևավորվածության և կուսակցությունների՝ հաճախ ինքնաուռճացման մարտավարության մասին: Պարզվում է, որ հասարակական կազմակերպություններին անդամակցողներն ավելի քիչ են՝ 5,2%, քան քաղաքական կուսակցությունների անդամները՝ 10,7%: Նույնն է պատկերը նաև դրանց համակիրների առումով. համապատասխանաբար՝ 25,3% և 31,1%: Մինչդեռ առողջ տրամաբանությունը հուշում է, որ հասարակության մեջ ակտիվ դիրքորոշում ունեցող մարդկանց թիվն ավելին պետք է լինի, քան քաղաքական գաղափարակիրներինը, և որ վերջիններս կազմում են ակտիվ քաղաքացիների բազմության մի մասը:

Այնուհանդերձ, կանայք ավելի շատ են ներկայացված հասարակական կազմակերպություններում, քան տղամարդիկ: Կուսակցությունների դեպքում պատկերը հակառակն է: ***Տես Աղյուսակ 3:***

***Աղյուսակ 3. Հարցման մասնակից կանանց և տղամարդկանց ընգրկվածությունը հասարակական կազմակերպություններում և կուսակցություններում***

| Կազմակերպության տեսակը | Հարցման մասնակիցների անդամակցությունը | | | |
|---|---|---|---|---|
| | տղամարդկանց | կանանց | տղամարդիկ | կանայք |
| Հասարակական կազմակերպություն | 4,7% | 5,5% | 49,1% | 58,1% |
| Կուսակցություն | 13,3% | 8,5% | 57,0% | 43,0% |

Ուսումնասիրության արդյունքները հաստատում են, որ թե՛ հասարակական կազմակերպություններում և թե՛ կուսակցություններում կանայք ունեն հիմնականում շարքային անդամի կարգավիճակ, քիչ են ներկայացված ստորին և միջին ղեկավար օղակներում և գրեթե բացակայում են բարձր ղեկավար կազմում: Վիճակը համեմատաբար մխիթարական է հասարակական կազմակեպությունների պարագայում: Սակայն այստեղ էլ՝ կարիերայի սանդուղքն ի վեր կանանց թվի նվազման շարժընթաց է արձանագրվում: ՀԿ-ների շարքային անդամ կանայք երկու անգամ ավելի շատ են, քան շարքային անդամ տղամարդիկ: Ստորին և միջին ղեկավար օղակներում նրանց թիվը գրեթե հավասար է, իսկ բարձր ղեկավար մարմիններում տղամարդկանց թիվը երեք անգամ գերազանցում է կանանց թիվը:

Հարցման մասնակիցների գնահատականները ցույց են տալիս, որ ոչ ֆորմալ հասարակական շարժումներում որոշումների ընդունման գործընթացի վրա ազդելու՝ անդամի հնարավորությունն ավելի մեծ է (2,9 միավոր), քան հասարակական կազմակերպություններում (2,1 միավոր) և քաղաքական կուսակցություններում (2,0 միավոր)[17]: Այս իրողությունը մեկ անգամ ևս հաստատում է կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների ներքին կյանքի ժողովրդավարացման անհրաժեշտությունը:

[17] Հարցման մասնակիցներին առաջարկվել էր 5 միավորանոց սանդակի միջոցով գնահատել սեփական ազդեցությունը կազմակերպության ներսում որոշումների ընդունման գործընթացների վրա: «1»-ը նշանակում էր, որ տվյալ անդամի ձայնն ընդհանրապես ազդեցություն չունի, «5»-ը՝ «ունի վճռական նշանակություն»:

4. Հասարակական և քաղաքական ակտիվության հիմնական խոչընդոտները

Քաղաքացիական պասիվության ու քաղաքական իներտության երևույթը, որը տարբեր ծավալներով առկա է բոլոր հասարակություններում, միանշանակ չի ընկալվում մասնագետների կողմից: Ոմանք դա դիտարկում են որպես հասարակական կայունությանը սպառնացող վտանգ, իշխանության լեգիտիմության նվազման միտում, քաղաքացիների և իշխանության օտարում-բևեռացում: Ոմանք էլ, ընդհակառակը, դա համարում են կանոնավոր երևույթ ժամանակակից հասարակության համար, որը մեծացնում է քաղաքական ընտրությունների և որոշումների ձեռնհասությունը ի հաշիվ նրա, որ այդ գործընթացներին մասնակցում են քաղաքականությունից հասկացող ու իրազեկ մարդիկ[18]:

Այնուհանդերձ, պետք է նկատել, որ ինչպես պոպուլիզմն ու ամբոխավարությունը, այնպես էլ պասիվության ու գործընթացներին չմասնակցելու երևույթի լայն տարածումը բացասաբար են անդրադառնում հասարակության զարգացման վրա՝ նպաստելով առաջին դեպքում՝ անիշխանությանը, իսկ երկրորդ դեպքում՝ իշխանության կենտրոնացմանը, որոնք անհարիր են ժողովրդավարության սկզբունքներին: Հենց հասարակության անդամների ակտիվությունն է քաղաքական գործընթացներին հաղորդում ժողովրդավարական բովանդակություն՝ հնարավորինս բացառելով նեղ խմբի կողմից իշխանության յուրացումն ու չարաշահումը, բարենպաստ պայմաններ ստեղծելով հանրության տարբեր շերտերի իրավունքների ու շահերի առարկայացման համար: Քաղաքացիական անտարբերությունը թոթափելու և քաղաքական մասնակցության նշանակալից մակարդակ ապահովելու ճանապարհին անհրաժեշտ է հետազոտել այն պատճառներն ու գործոնները, որոնք խոչընդոտում են քաղաքացիների ակտիվությունը:

Հասարակական-քաղաքական գործընթացների նկատմամբ իներտության ու անտարբերության երևույթը կարող է ունենալ սոցիալ-հոգեբանական, մշակութային, ինստիտուցիոնալ, անհատական-հոգեբանական, սոցիալ-տնտեսական և այլ բնույթի դրդապատճառներ: Սոցիալ-հոգեբանական գործոնների վերլուծության հարցում արժեքավոր կարող է լինել 19-րդ դարավերջի ֆրանսիացի սոցիոլոգ և սոցիալ-հոգեբան Գաբրիել Տարդի ուսմունքը նախաձեռնության («գյուտարարության») ու ընդօրինակման օրինաչափության և հասարակական իրադարձության փուլերի մասին[19]: Բնության մեջ մակընթացությանը հաջորդում է տեղատվությունը: Համանման մի օրինաչափություն կա նաև հասարակական ոլորտում: Հասարակական ամեն մի շարժում նախապես սկիզբ է առնում օժտված անհատների գիտակցության մեջ: Ըստ Գ. Տարդի՝ առաջին փուլում կրեատիվ անհատականությունն առաջադրում է հասարակության լայն շերտերի համար առաջին հայացքից անսովոր ու արտառոց գաղափար, հակադրվում պահպանողական շրջապատին և օտարվում ու մերժվում նրա կողմից: Սակայն, նպատակասլացությունն ու հետևողականությունը տալիս են սպասված արդյունքները: Երկրորդ փուլում հասարակության լայն շերտերը հետզհետե հրապուրվում են այդ գաղափարով ու զինվորագրվում դրա իրագործմանը: Իրականացվում են քայլեր գաղափարի առարկայացման նպատակով: Ստացվում է արդյունք, որը, սակայն, միշտ չէ, որ լիովին համապատասխանում է սկզբնական իդեալ-գաղափարին, արձանագրվում են նաև չկանխատեսված և անցանկալի հետևանքներ: Հասարակական գիտակցության և հոգեբանության մակարդակներում տեղի է ունենում սկզբնական գաղափարի վերարժևորում, վրա է հասնում «հիասթափության», այդ գաղափարի նկատմամբ իներտության փուլը: Հետագայում հասարակության առանձին կրեատիվ անդամների շնորհիվ ցիկլը կրկնվում է:

Մեր հասարակության համար 1980-ականների վերջի, 1990-ականների սկզբի համընդհանուր քաղաքականացվածության փուլն անցել է: 1990-ականների երկրորդ կեսից նկատելի է հասարակական տարբեր խմբերի մոտ քաղաքական գործընթացների նկատմամբ հետաքրքրության որոշակի անկում և իներտություն: Դրան նպաստում են սոցիալ-տնտեսական պայմաններով մարդկանց ճնշվածությունն ու կլանվածությունը՝ հանգեցնելով կրկնակի պասիվության: Պակաս կարևոր չէ նաև հասարակայնորեն դրական արժեքավորվող

---

[18] Ըստ Շախաղաթյան Հ., Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրներ: Երևան, էջ 116:

[19] Տես Тард Г., Законы подражания. СПб, 1892, էջ 11-14:

գաղափարների, արժեքային համակարգերի ամորֆ վիճակը, որի հետևանքով առաջացած վակուումը հաճախ լցվում է այլազան գաղափարական ու կրոնական ենթամշակույթներով:

Հասարակական-քաղաքական ակտիվությանը խոչընդոտող հոգեբանական գործոնների շարքում էական դեր է խաղում անզորության, կյանքում ինչ-որ բան փոխելու անհնարինության զգացումը: Հատկանշական է, որ հարցման մասնակիցների 63,1%-ը համաձայն է այն կարծիքին, որ անհատ քաղաքացու մասնակցությունը ընտրություններին ոչինչ չի որոշում, քանի որ միևնույն է՝ արդյունքները կեղծվում են: 54,9%-ն էլ համաձայն չէ այն դրույթին, թե ընտրությունների ելքը պայմանավորված է անհատ քաղաքացու մասնակցության և քվեարկության արդյունքով: *Տես Աղյուսակ 4 (առավել մանրամասն՝ Հավելված, հարց 12):*

*Աղյուսակ 4. Հանրային կարծիքի վերաբերմունքը քաղաքական տարբեր մակարդակի ընտրությունների վերաբերյալ ձևավորված կարծրատիպերին*

| | Պնդումներ | Համաձայն են | Համաձայն չեն | Դժ. պ. |
|---|---|---|---|---|
| *12.1* | Ընտրությունների ելքը պայմանավորված է անհատ քաղաքացու մասնակցության և քվեարկության արդյունքով: | 39,3% | 54,9% | 5,8% |
| *12.2* | Ընտրություններին անհատ քաղաքացու մասնակցությունը ոչինչ չի որոշում, քանի որ միևնույն է՝ արդյունքները կեղծվում են: | 63,1% | 30,9% | 6,0% |
| *12.3* | Վատ իշխանություններին ընտրում են այն «լավ» քաղաքացիները, ովքեր չեն մասնակցում ընտրություններին: | 51,8% | 30,7% | 17,6% |

Ըստ տարբեր ուսումնասիրությունների՝ ունևոր խավը, որպես կանոն, հակված է կայունության պահպանմանը, ի տարբերություն քաղաքական կյանքից դեռևս չօտարված աղքատ խավի, որը ձգտում է փոփոխությունների[20]: Սակայն սոցիալապես անպաշտպան վիճակը նույնպես կարող է պատճառ դառնալ հասարակական պասիվության և օտարվածության, առաջ բերել անգամ ընկճախտային երևույթներ: Տեղի ունեցող գործընթացներին իր մասնակցությանը խոչընդոտող գործոնների շարքում ֆինանսական սուղ հնարավորությունները նշել է հարցման մասնակիցների 22,3%-ը: Ընդ որում, այդ գործոնը ավելի շատ անհանգստացնում է կանանց՝ 24,2%, քան տղամարդկանց՝ 20,7%, և գրեթե նույնն է տարիքային տարբեր խմբերում:

Հասարակական-քաղաքական իներտությունը և աբսենտեիզմի երևույթը պայմանավորված է լինում նաև քաղաքական և հասարակական ինստիտուտների ոչ բավարար և անարդյունավետ գործունեության արդյունքում առաջ եկած հիասթափությամբ, դրանց նկատմամբ հավատի ու վստահության կորստով: Այդ իրողությունը որպես քաղաքացիական ու քաղաքական ակտիվությանը խոչընդոտող գործոն նշել են հարցման մասնակիցների 25,6%-ը: Այս ցուցանիշը նույնն է թե տղամարդկանց, թե կանանց շրջանում: Հարցվողների 27,7%-ին էլ քաղաքական ու քաղաքացիական ակտիվ մասնակցություն դրսևորելու հարցում խոչընդոտներ հարուցում է ընտանեկան հոգսերով զբաղվածությունը: Ինչպես կանխատեսվում էր, այս գործոնն ավելի շատ խանգարում է կանանց (34,5%), քան տղամարդկանց (20,5%): Քաղաքացիական և քաղաքական ակտիվությանը խոչընդոտող գործոնների շարքում նշվել են նաև կենցաղային խնդիրներով զբաղվածությունը (19,7%), աշխատանքային զբաղվածությունը, գենդերային խտրականությունը, անբարենպաստ հասարակական կարծիքը՝ հասարակական, քաղաքական գործիչների վերաբերյալ, համապատասխան գիտելիքների և փորձի պակասը, ցանկության բացակայությունը,

[20] Տես Շափաղաթյան Հ., Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրներ: Երևան, 2007, էջ 113-114:

տարիքը: Վերջին հանգամանքը նշող բոլոր հարցվածները 61 և ավելի բարձր տարիքի քաղաքացիներ են: Քաղաքական և քաղաքացիական ակտիվությանը խոչընդոտող գործոններն ըստ կարևորության և ըստ գենդերային «կտրվածքի» ներկայացված են *Աղյուսակ 5-ում*:

*Աղյուսակ 5. Քաղաքական և քաղաքացիական ակտիվությանը խոչընդոտող գործոններն ըստ կարևորության*

| Գործոններ | Հարցման մասնակիցների | Տղամարդկանց | Կանանց |
|---|---|---|---|
| Ընտանեկան հոգսերով զբաղվածությունը | 27,7% | 20,5% | 34,7% |
| Այդպիսի ցանկության բացակայությունը | 26,3% | 28,3% | 25,3% |
| Հիասթափությունը քաղաքական և/կամ հասարակական կյանքից | 25,6% | 25,9% | 26,1% |
| Ֆինանսական սուղ հնարավորությունները | 22,3% | 20,7 | 24,2% |
| Կենցաղային խնդիրներով զբաղվածությունը | 19,7% | 14,4% | 24,7% |
| Աշխատանքային զբաղվածությունը | 15,3% | 17,4 % | 13,9% |
| Համապատասխան գիտելիքների և փորձի պակասը | 9,9% | 8,9% | 11,1% |
| Անբարենպաստ հասարակական կարծիքը հասարական, քաղաքական գործիչների վերաբերյալ | 8,7% | 9,1% | 8,6% |
| Գենդերային խտրականության երևույթը | 5,2% | 3,3% | 6,9% |
| Տարիքը | 2,7% | 3,1% | 2,3% |
| Այլ պատասխան | 2,0% | 2,4% | 1,7% |
| Չկա որևէ խանգարող բան | 9,7% | 12,9% | 7,2% |

Թեև հանրային կյանքի տարբեր ոլորտներում նկատելի է որոշակի օտարվածություն և անտարբերություն, այնուհանդերձ հետազոտության տվյալները լավատեսական կանխատեսումներ անելու հիմքեր ևս ընձեռում են: Հարցման մասնակիցների 51,8%-ը գիտակցում է այն իրողությունը, որ քաղաքացիական իներտությունն ու պասիվ կեցվածքը պարարտ միջավայր է ստեղծում զանազան մեքենայությունների ու կամայականությունների համար: Նրանք համաձայն են լիխտենբերգյան հայտնի դրույթին, թե վատ իշխանություններին ընտրում են այն «լավ» քաղաքացիները, ովքեր չեն ցանկանում մասնակցել ընտրություններին: Պասիվության, հիասթափության ու ոգնիության էներգիան որոշակի պայմաններում կարող է փոխակերպվել ինչպես ընդվզման ու ապստամբության էներգիայի[21], այնպես էլ համակերպվելու, հույսն Աստծո ողորմածությանը[22] կամ այլաշխարհիկ ուժերի վրա դնելու կոնֆորմիստական տրամադրությունների:

[21] Կյանքի գորշության, անիմաստության հաղթահարման այդ եղանակը նախնտրելի է համարում 20-րդ դարի ֆրանսիացի մտածող Ալբեր Քամյուն: Տես *Камю А.*, Бунтующий человек. М., 1990:

[22] Հիասթափության էներգիան կրոնական հավատի էներգիայի փոխակերպելու գաղափարն է հիմնավորում մեկ այլ ֆրանսիացի փիլիսոփա Գաբրիել Մարսելը: Տես Marcel G., Etre et avoir. Paris, 1935, էջ 112-115:

Հայաստանյան իրականությանը բնորոշ է նաև երրորդ՝ դժվարություններ ու դժգոհություն առաջ բերող երևույթներից և միջավայրից օտարվել-հեռանալու, արտագաղթի ճանապարհը բռնելու տարբերակը, որը ազգային հոգեկերտվածքի սիմվոլիկ դրսևորմամբ կարելի է դիտարկել ազգային էպոսի վերջին ճյուղում՝ Փոքր Մհերի կերպարում: Երեք տարբերակներն էլ, սակայն, անհեռանկարային են հասարակական համակարգի զարգացման տեսանկյունից:

Կարևորը հասարակական կյանքում նկատվող ապատիկ տրամադրությունները, երբեմն էլ հիասթափության դրսևորումները փոխակերպելն է ոչ թե ապստամբության և ոչ էլ կոնֆորմիստական կեցվածքի կամ խուսափողական վարքագծի, այլ կառուցողական ու գրագետ մասնակցության գործելակերպի:

Այդ խնդրի լուծման գործում լուրջ անելիքներ ունեն ինչպես քաղաքական իշխանություններն ու կազմակերպությունները, այնպես էլ քաղաքացիական կառույցներն ու զանգվածային լրատվամիջոցները:

Հասարակական-քաղաքական պասիվության հաղթահարման հիմնական տարբերակներից մեկը կապված է քաղաքացիական ինստիտուտների ցանցի զարգացման, դրանց մեթոդապես գրագետ գործունեության հետ:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն իրենց հաջող գործունեությամբ կարող են ոչ միայն ոգևորել, այլև ներգրավելով մարդկային ներուժը, որոշակիորեն ուղղորդել դեպի հասարակական զարգացումները՝ ապահովելով ինչպես հասարակական վերափոխումների նպատակային, կայուն ընթացքը, այնպես էլ քաղաքացիների արդյունավետ մասնակցությունը հանրային կառավարման գործընթացներին: Այդ գործոնները ռեալ երաշխիքներ են ժողովրդավարացման գործընթացների հաջողության և հասարակական համակարգի կայուն զարգացման համար:

## 5. Քաղաքական կառավարման տարբեր մակարդակներում կանանց համար քվոտաների սահմանման սկզբունքը և հանրային կարծիքը

Քաղաքական կառավարման տարբեր մակարդակներում կանանց բավարար ներկայացվածություն ապահովելու նպատակով արևմտյան ժողովրդավարության կայուն ավանդույթներ ունեցող մի շարք երկրներ կանանց հասարակական կազմակերպությունների ցանցի ու նրանց դրության բարելավման այլ մեխանիզմների ձևավորմանը զուգահեռ ընտրեցին օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններում կանանց քվոտաների օրենսդրորեն սահմանման մարտավարությունը:

Այդպիսի առաջարկություններ կան նաև հայ օրենսդիրների և հասարակական կազմակերպությունների կողմից:

Տվյալ հետազոտության առջև խնդիր էր դրված պարզել, թե հանրային կարծիքն ինչպես է վերաբերվում այդ գաղափարին և որքանով է այն պատրաստ դրա իրագործմանը Հայաստանում: Պարզվում է, որ հարցման մասնակիցների 57,2%-ն ընդհանուր առմամբ դրականորեն (25,3%-ը՝ միանշանակ դրական, 31,9%-ը՝ հիմնականում դրական) է վերաբերվում քաղաքական կառավարման մարմիններում կանանց համար քվոտաներ սահմանելու գաղափարին: Բացասաբար է արձագանքել հարցվողների ընդամենը 11,2%-ը: 24,3%-ն անտարբեր է այդ գաղափարի նկատմամբ, իսկ 7,2%-ն էլ դժվարացել է պատասխանել:

Կանանց համար քվոտաների սահմանման գաղափարին դրականորեն են վերաբերվում առանձնապես հասարակական-քաղաքական իրադարձություններով մշտապես հետաքրքրվողները (68,9%), ոչ կառավարական կազմակերպությունների անդամները (67,7%), քաղաքական կուսակցությունների անդամները (65,6%): ՀՀ Ընտրական օրենսգրքում կանանց քվոտաների ամրագրմանը կողմ են հարցման ենթարկված կանանց 60,3%-ը և տղամարդկանց 53,5%-ը:

Ըստ քվոտաներին կողմ ռեսպոնդենտների՝ քաղաքական կառավարման տարբեր օղակներում կանանց ինչպիսի՞ ներկայացվածությունը կարելի է օպտիմալ համարել: Այս հարցի պատասխանները թվաբանական միջինի սկզբունքով արտացոլված են ***Գծապատկեր 6-ում***:

*Գծապատկեր 6.Կառավարման տարբեր օղակներում կանանց ներկայացվածության օպտիմալ քվոտաների մասին պատկերացումներն ըստ հարցման մասնակիցների*




Այսպիսով, հաշվի առնելով պետական կառավարման տարբեր օղակներում կանանց բավարար ներկայացվածություն ապահովելու անհրաժեշտությունը, ՀՀ իշխանությունների ստանձնած միջազգային պարտավորությունները և հասարակական կարծիքի ու գիտակցության պատրաստվածությունը, նպատակահարմար է ՀՀ Ընտրական օրենսգրքում ամրագրել քվոտաներ կանանց համար, համապատասխան փոփոխություններ կատարելով նաև «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում:

Նկատի ունենալով, որ ՀՀ Ընտրական օրենսգիրքը նախատեսում է մեծամասնական ընտրակարգ 41 պատգամավորի համար, իսկ կանայք, որպես կանոն, տարբեր պատճառներով պակաս մրցունակ են, հետևաբար Ազգային ժողովում կանանց նվազագույնը 20% ներկայացվածություն ապահովելու համար պետք է կուսակցությունների ընտրական ցուցակներում ապահովել նրանց 30% ներկայացվածություն: Թերևս արդարացված կլինի նաև սահմանել սեռերի ներկայացվածության նվազագույն և առավելագույն շեմեր՝ 30% և 70%, բացառելով որևէ կողմի նկատմամբ խտրականության հնարավորությունը:

## 6. Եզրակացություններ և երաշխավորություններ

- Հասարակական-քաղաքական գործընթացներում հանրության անդամների մասնակցության քանակական և որակական ցուցանիշները բարելավելու առումով էապես կարևոր է այդ գործընթացների և իրողությունների վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածությունը, ինչը մեր հասարակության մեջ դեռևս բարելավման կարիք ունի: Այդ գործում օգտակար կարող են լինել թե՛ իշխանությունների ու քաղաքական կազմակերպությունների և թե՛, հատկապես՝ ոչ կառավարական կազմակերպությունների ու զանգվածային լրատվամիջոցների կողմից իրականացվելիք կրթական ու քարոզչական ծրագրերը:
- Կարևոր է մշակել կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան 1990-ականների վերջերից ի վեր հայաստանյան հասարակական կյանքում նկատվող ապատիկ տրամադրությունները, երբեմն էլ՝ հիասթափության դրսևորումները փոխակերպել ոչ թե ագրեսիվ ընդվզման և ոչ էլ կոնֆորմիստական կեցվածքի կամ խուսափողական վարքագծի, այլ կառուցողական ու մասնակցության գործելակերպի:

Հասարակական-քաղաքական պասիվության, անտարբերության ու աբսենտեիզմի հաղթահարման հիմնական տարբերակներից մեկը կապված է քաղաքացիական ինստիտուտների ցանցի զարգացման, դրանց մեթոդապես հիմնավորված գործունեության հետ:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն իրենց հաջող գործունեությամբ կարող են ոչ միայն ոգևորել, այլև ներգրավելով մարդկային ներուժը, որոշակիորեն ուղղորդել հասարակական զարգացումները՝ ապահովելով ինչպես հասարակական վերափոխումների նպատակային, կայուն ընթացքը, այնպես էլ հանրային կառավարման գործընթացներին քաղաքացիների արդյունավետ մասնակցությունը: Դրանց զարգացումն ու աշխարհագրության ընդլայնումը էական է նաև իշխանության և հասարակության տարբեր շերտերի միջև նկատվող օտարման ու բևեռացման երևույթների հաղթահարման տեսանկյունից:

- Ուստի անհրաժեշտ է մշակել Հայաստանում քաղաքացիական հասարակության հաստատությունների զարգացման հայեցակարգային ծրագիր՝ կարևորելով մասնավորապես ոչ կառավարական կազմակերպություններին իրավական, տեխնիկական, ֆինանսական աջակցության խնդիրները, պետական կառույցների կողմից ՈԿԿ-ների գործունեության համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու հարցերը:
- Որոշումների ընդունման մակարդակներում գենդերային զուգակշռություն ապահովելու նպատակով կանաց խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հզորացմանը զուգահեռ, անհրաժեշտ է ձևավորել կանանց ներկայությունն ու ներգրավվածությունն ապահովող իրավական գործուն մեխանիզմներ:

  Հաշվի առնելով գենդերային հավասարակշռության վերաբերյալ ՀՀ իշխանությունների ստանձնած միջազգային պարտավորությունները և հասարակական կարծիքի ու գիտակցության դրական տրամադրվածությունը, նպատակահարմար է ՀՀ Ընտրական օրենսգրքի նոր խմբագրված տարբերակում ամրագրել քվոտաներ կանանց համար՝ համապատասխան փոփոխություններ կատարելով նաև «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում:

  Նկատի ունենալով, որ ՀՀ Ընտրական օրենսգիրքը նախատեսում է մեծամասնական ընտրակարգ 41 պատգամավորի համար, իսկ կանայք, որպես կանոն, տարբեր պատճառներով պակաս մրցունակ են այդ տեղերը զբաղեցնելու համար, հետևաբար Ազգային ժողովում կանանց նվազագույնը 20% ներկայացվածություն ապահովելու համար պետք է կուսակցությունների ընտրական ցուցակներում ապահովել նրանց 30% ներկայացվածություն: Թերևս արդարացված կլինի նաև սահմանել սեռերի ներկայացվածության նվազագույն և առավելագույն շեմեր՝ 30% և 70%, բացառելով որևէ կողմի նկատմամբ խտրականության հնարավորությունը: Վերջապես, օրենսդրորեն ամրագրել ռոտացիայի այն սկզբունքը, որի համաձայն՝ համամասնական ցուցակից կնոջ թեկնածությունը հանելու կամ պատգամավորական մանդատից կնոջ հրաժարվելու դեպքում, նրա տեղը պետք է զբաղեցնի ցուցակում ընդգրկված հաջորդ կինը:
- Քաղաքացիական և քաղաքական մասնակցության ցուցանիշների բարելավման, այդ գործընթացներում գենդերային հավասարակշռության ապահովման և սոցիալական գործընկերության առողջ մթնոլորտի ձևավորման կարևոր գործոններից մեկն էլ քաղաքական կուսակցությունների, ոչ կառավարական կազմակերպությունների ներքին կյանքի ժողովրդավարացման ուղղությամբ իրականացվող վճռական քայլերը պետք է լինեն, որոնք իրական հնարավորություն կընձեռեն կին գործիչների առաջխաղացման համար:

## ՄԱՍ II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### 1. Կարիերայի գենդերային տեսանկյունները ՄԱԿ-ի և Եվրոպայի Խորհրդի ռազմավարության խորապատկերում

Յուրաքանչյուր հասարակության կայուն զարգացման գրավականը քաղաքացիների հնարավորությունների և հմտությունների լրիվ բացահայտումն է, հասարակության կարիքների համար դրանց լիարժեք օգտագործումը:

Մասնագիտական առաջխաղացումը անհատի կողմից պլանավորված և նպատակաուղղված գործունեություն է մասնագիտական ոլորտում որոշակի նպատակների իրականացման և հաջողությունների հասնելու ուղղությամբ: Այդ ամենի համար անհատը պետք է տիրապետի գիտելիքների որոշակի պաշարի, անընդհատ զարգացնի և հարստացնի այն, ձևավորի նպատակին հասնելու որոշակի կարողություններ: Դրա հետ մեկտեղ հաջողության հասնելու համար պետք է լինի նպաստավոր միջավայր, որը կարող է ստեղծել առանձին գործատուն, կազմակերպությունը, լայն առումով՝ հասարակությունը պետության միջոցով, որը ըստ էության խաղի կանոնների գլխավոր ձևավորողն ու պատվիրատուն է: Յուրաքանչյուր հասարակության մեջ անհատին ընձեռված աճի և առաջխաղացման հնարավորությունների չափը կախված է հասարակության զարգացման մակարդակից, ռազմավարական խնդիրներից, ժողովրդավարության որակից: Ընդ որում թե՛ մասնագիտական, թե՛ քաղաքական ոլորտներում որպես կարիերայի բարձրակետ դիտվում է որոշումների կայացման մակարդակի հասանելիությունը: Մեր նպատակն է բացահայտել այդ հիմնախնդրի գենդերային տեսանկյունները:

Կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությունը որոշումների կայացման մակարդակում զուգակշռված ժողովրդավարության կարևոր պայման է, քանի որ թույլ է տալիս վեր հանել երկու սեռերի շահերի և հետաքրքրությունների ամբողջ տարապատկերը: Այն շահեկան է հասարակության համար, քանի որ այդ դեպքում մարդկային ռեսուրսներն ավելի լիարժեք ու արդյունավետ են օգտագործվում: Այդ է պատճառը, որ հատկապես 1990-ականներից սկսած միջազգային առաջադեմ հանրությունը ավելի մեծ ուշադրություն սկսեց դարձնել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային մոտեցման ինտեգրմանը՝ դրա հետ կապելով հասարակությունների կայունությունն ու զարգացումը: Ինչ վերաբերում է քաղաքական ոլորտում որոշումների կայացման մակարդակի գենդերային հավասարակշռությանը, այն ժողովրդավարական կառավարման կարևոր բաղադրիչներից է, քաղաքականության որակի բարձրացման, քաղաքական օրակարգի հարստացման կարևոր խթան և, ի վերջո, նպաստում է կյանքի որակի բարձրացմանը և ապահովում ժողովրդավարության ավելի բարձր մակարդակ: Ահա այս հիմնավորումներն են, որ բազմիցս ապացուցվել են տարբեր երկրների փորձով և միջազգային ժողովրդավարական հանրությանը դրդել նպաստավոր պայմաններ ստեղծել քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածությունը ապահովելու համար:

Մասնագիտական և քաղաքական ոլորտներում կանանց հաջող կարիերայի համար կարևոր նախապայման է հանդիսանում հասարակության մեջ գենդերային հավասարությունը, այսինքն հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովումը կանանց և տղամարդկանց համար:

Գենդերային հավասարության անհրաժեշտությունը չափազանց դանդաղ ընդունվում է նաև հայ հասարակության կողմից:

1993 թ. Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, որը պարտավորեցնում է.

- գենդերային հավասարության սկզբունքն ամրագրել ազգային սահմանադրության կամ համապատասխան օրենսդրության մեջ,
- անհրաժեշտության դեպքում ընդունել խտրականությունը արգելող հատուկ պատժամիջոցներ,

- միջոցներ ձեռնարկել՝ փոխելու կամ վերացնելու համար այն գործող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, սովորույթներն ու պրակտիկան, որոնք ներկայացնում են խտրականություն կանանց նկատմամբ,
- կանանց և տղամարդկանց համար ապահովել տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական և քաղաքական ռեսուրսների հավասար մատչելիություն, ինչպես նաև կարիերայի միատեսակ պայմաններ:

ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրվեց սեռերի իրավահավասարության սկզբունքը: Ընդունվեց «ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը»: Հայաստանի Հանրապետությունը միացավ մի շարք այլ փաստաթղթերի, որոնք ուղղված են գենդերային հավասարության ապահովմանը: Այսպես, ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի 3-րդ նպատակը ուղղված է կանանց և տղամարդկանց հավասարության խրախուսմանը և կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնմանը: Հազարամյակի զարգացման նպատակների համատեքստում գենդերային հավասարության հարցը դրվեց պետական քաղաքականության նոր հարթության վրա: Պատահական չէ, որ այն տեղայնացնելիս Հայաստանի Հանրապետությունը պարտավորվեց «Մինչև 2015 թվականը ապահովել ՀՀ օրենսդիր մարմնի կազմում կին պատգամավորների առնվազն 25%-ի մասնաբաժին, իսկ համայնքների ղեկավարների պաշտոնում կանանց ընդգրկվածությունը հասցնել 10%-ի»[23]: «Կայուն զարգացման ծրագրով»[24] նախատեսվում է աղքատության կրճատում և բարեկեցության ապահովում գենդերային մոտեցման հաշվառմամբ: Հայաստանը վավերացրեց նաև Եվրոպական սոցիալական խարտիան, որի մի շարք հոդվածներում ամրագրված է գենդերային հավասարության սկզբունքը: ՀՀ կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագրում ընդգծվեց, որ հանրային համերաշխության հաստատման, սոցիալական պետության կերտման, սոցիալական արդարության արմատավորման համար պետության քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու… գենդերային հավասարությանը՝ հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը:

Եվրոպայի Խորհրդի կողմից ընդունված «Հռչակագիր կանանց և տղամարդկանց հավասարության՝ որպես ժողովրդավարության հիմնական չափանիշի մասին», «Համալիր մոտեցում կանանց և տղամարդկանց իրավահավասարության խնդիրներին», «Սեռերի հավասարություն. առանցքային հարց հասարակությունների համար փոփոխությունների փուլում», «Քաղաքական և պետական որոշումների կայացման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին» փաստաթղթերում գենդերային հավասարության ապահովումը դիտվում է որպես սոցիալական արդարության հիմնախնդիր և հասարակությունների զարգացման հիմնական պայման: Դրանցում նախատեսվում է ապահովել կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացման մակարդակում, սահմանել հավասար վարձատրություն համարժեք աշխատանքի դիմաց, ինչը կնպաստի կանանց տնտեսական անկախությանը և աշխատաշուկայում գենդերային հավասարության ապահովմանը, աշխատանքի և ընտանեկան կյանքի համատեղմանը, խորհուրդ է տրվում զուգակշռության շեմերի սահմանման համար անցկացնել օրենսդրական բարեփոխումներ, այսինքն՝ տեղական, ազգային և վերազգային ընտրությունների ցուցակներում թեկնածուների ընդհանուր թվում ապահովել կանանց և տղամարդկանց պարտադիր թվաքանակ: Հետևողական է եվրոպական առաջավոր հանրությունը նաև մասնագիտական ոլորտում գենդերային հավասարության ապահովման հարցում: Պատահական չէ, որ Եվրոպայի Խորհուրդը կոչ է անում պետություններին և գործատուներին նպաստել «մասնագիտական առաջխաղացման

---

[23] Տես Հազարամյակի Զարգացման նպատակները (ՀԶՆ-ները ծագել են ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրից, որն ընդունվել է 2000 թ. Հազարամյակի գագաթնաժողովի շրջանակներում):
[24] Ընդունվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ:

զարգացմանը, ներառյալ պաշտոնեական առաջխաղացման հնարավորությունը, ընդսմին ստեղծելով այնպիսի աշխատանքային պայմաններ, որոնք հնարավորություն տան ներդաշնակորեն համատեղել մասնագիտական և ընտանեկան պարտականությունները», և նշում, որ կառավարությունների «...ռազմավարությունները պետք է նախատեսեն համապատասխան միջոցներ (այդ թվում և հատուկ ժամանակավոր միջոցներ՝ ուղղված կանանց և տղամարդկանց արդյունավետ հավասարության ձեռք բերման գործընթացի արագացմանը), որոնք մասնավորապես առնչվեն... բոլոր մասնագիտությունների մատչելիությանը, պաշտոնեական առաջխաղացմանը և աշխատանքի վարձատրությանը...»[25]:

Վերոնշյալ փաստաթղթերի հանձնարարականները մասամբ արտացոլվեցին «ՀՀ Գենդերային քաղաքականության պետական հայեցակարգում», որով նախատեսվում է կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքը ներդնել բոլոր ոլորտներում, քաղաքական գործունեության բոլոր մակարդակներում հավասարության հասնելու համար մշակել և իրականացնել «աջակցող գործողություններ»[26], անհրաժեշտության դեպքում կիրառել նույնիսկ «պոզիտիվ խտրականության» միջոցներ, օրինակ քվոտաներ: Փաստաթղթում առաջին անգամ պետականորեն կարևորվեց ազգային մեխանիզմի ստեղծման հիմնախնդիրը:

Ազգային և միջազգային հետազոտություններում քաղաքականության մեջ որոշումների կայացման պաշտոններում կանանց ավելի քիչ ներկայացվածությունը կապվում է կանանց և տղամարդկանց միջև ռեսուրսների (եկամուտներ, ղեկավար պաշտոններում աշխատանքի փորձ և այլն) անհամաչափ բաշխման հետ: Տարբեր երկրների փորձը վկայում է, որ կանանց նկատմամբ բացահայտ և թաքնված խտրականության, գենդերային կարծրատիպերի, կանանց կրկնակի ծանրաբեռնվածության և այլ պատճառների հետևանքով կանանց պաշտոնեական և քաղաքական առաջխաղացման հնարավորությունները տղամարդկանց համեմատությամբ ավելի փոքր են: Բնականաբար տարբեր են նաև արդյունքները: Տարբեր մասնագիտությունների և քաղաքական վերնախավերում հիմնականում տղամարդիկ են:

## 2. Մասնագիտական կարիերայի գենդերային տեսանկյունները

Միջազգային հարուստ փորձը և վերջին տարիներին Հայաստանում կատարված հետազոտությունները[27] ցույց տվեցին, որ մասնագիտական ոլորտի հաջողությունները մեծապես նպաստում են քաղաքական կարիերային, հատկապես եթե խոսքը վերաբերում է կանանց: Հայաստանում մասնագիտական կարիերայի ասպարեզում կանայք և տղամարդիկ հավասար իրավունքներ ունեն: Կանանց կարիերայի համար բավականին բարենպաստ է նրանց կրթական բարձր մակարդակը: Սակայն իրավահավասարության հռչակումը դեռ չի նշանակում իրական հավասարության հաստատում, քանի դեռ օրենսդրորեն և իրական կյանքում հաստատված չեն

[25] Տես «Հռչակագիր կանանց և տղամարդկանց հավասարության՝ որպես ժողովրդավարության հիմնական չափանիշի մասին», Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի նախարարների 4-րդ եվրոպական խորհրդաժողով, Ստամբուլ, 13-14 նոյեմբերի 1997 թ.:

[26] «Աջակցող գործողությունները» ընդգրկում են հետևյալ միջոցառումները. գենդերային զգայուն քաղաքականության տեսանկյունից օրենսդրության վերանայում, նշանակովի պաշտոններում, ԶԼՄ-ների ղեկավար մարմիններում կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածության ապահովում, գենդերային դասընթացների խրախուսում ուսուցման բոլոր մակարդակներում, հիմնախնդիրների լուծման արդյունավետությանն ուղղված մշտական դիտարկումներ և այլն:

[27] Հայաստանի Հանրապետությունում «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի, Հազարամյակի Զարգացման նպատակների իրականացման մոնիտորինգ: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն, Հայաստանի հասարակական կազմակերպությունների «Հանուն խաղաղության» կոալիցիա: Եր., 2006; «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2002-2007 թթ.: Այլընտրանքային զեկույց: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն: Եր., 2007; Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին: Վերլուծական տեսություն: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն: Եր., 2007; «Տեղական ինքնակառավարման մարմինների գենդերային ինդիկատորները», Երևան, 2007 թ.: http://www.crrc.am/index.php/lo/17/73; Որոշումների կայացման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայացվածության պատճառների ուսումնասիրություն, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ՀՀ ազգային ինստիտուտ, Եր., 2008:

հավասար հնարավորություններ: Իսկ հնարավորությունները տարբեր են, և դա հաստատում է նաև ներկա հետազոտությունը:

Մասնագիտական առաջընթացի գենդերային տեսանկյունների վերաբերյալ հասարակական կարծիքը ուսումնասիրվել է դաշտային հետազոտության հետևյալ հարցադրումների միջոցով.

- ՀՀ-ում կանանց և տղամարդկանց պաշտոնեական առաջխաղացման հնարավորությունները,
- Կարիերայի կարևորումը տղամարդու և կնոջ համար,
- Որքանո՞վ է բարյացակամ հայաստանյան հանրային կարծիքը տարբեր ոլորտներում կարիերա անող կանանց նկատմամբ:

Հարցերի նման հերթականությունը թույլ է տվել բացահայտել մասնագիտական կարիերայի գենդերային հիմնախնդիրների տարապատկերը: Առաջին հարցի նպատակն էր պարզել կանանց և տղամարդկանց համար կարիերայի հավասար հնարավորությունների առկայությունը կամ բացակայությունը:

Նախորդ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանրային կարծիքում առկա կարծրատիպային պատկերացումների համաձայն կանանց կարիերան այնքան էլ չէր կարևորվում: Կանայք շատ դեպքերում ավելի կարևորում էին ընտանեկան երջանկությունը, տնային տնտեսուհու պարտականությունների կատարումը, երեխաների դաստիարակությունը: Ուստի, մեր երկրորդ հարցը նպատակ ուներ պարզելու կարիերայի կարևորումը կանանց և տղամարդկանց համար:

Երրորդ հարցը բացահայտում է հանրային կարծիքում առկա վերաբերմունքը կանանց կարիերայի նկատմամբ ըստ առանձին ոլորտների, ինչը հնարավորություն է ընձեռում նաև գենդերային կարծրատիպերի ուսումնասիրության համար: Որպես կարիերայի առանձնահատուկ ձևեր դիտարկվել են բիզնես կարիերան և քաղաքական կարիերան, որոնց ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդ ենթաբաժնում:

Բոլոր հարցերի պատասխանները վերլուծվել են ինչպես գենդերային, այնպես էլ տարիքային, մարզային, քաղաք-գյուղ կտրվածքով, ըստ կրթական մակարդակների տարբերության, երբեմն նաև քաղաքական գործընթացներին մասնակցության ակտիվության տեսանկյունից:

### *2.1. Կանանց և տղամարդկանց պաշտոնեական առաջխաղացման հնարավորությունները ՀՀ-ում*

Դաշտային հետազոտությունը ցույց տվեց, որ հարցվածների 2/3-ը համոզված է, որ ՀՀ-ում տղամարդիկ հնարավորությունների տեսանկյունից առավելություն ունեն կանանց նկատմամբ: Այսպես, հարցվողների 60,9%-ը նշել է, որ պաշտոնեական առաջխաղացման համար տղամարդկանց հնարավորությունները ավելի մեծ են[28]: Ընդ որում այդպես են կարծում հարցված տղամարդկանց 63,5%-ը և կանանց 58,8%-ը: Հարցվածների 29,3%-ը համոզված է, որ կանանց և տղամարդկանց պաշտոնեական առաջխաղացման հնարավորությունները հավասար են: Այս հարցին ավելի լավատեսական պատասխան են տվել կանայք, քան տղամարդիկ: Այսպես, այդ կարծիքին է կանանց 31,5%-ը, տղամարդկանց 26,7%-ը: Հարցվածների միայն 4,4%-ն է համարում, որ կանանց հնարավորությունները ավելի մեծ են ***(տես Գծապատկեր 1)***:

[28] Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի «Որոշումների կայացման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայացվածության պատճառների ուսումնասիրության» համաձայն, որը կատարվել էր 2008 թ., հարցվածների 68%-ն էր նշել, որ պաշտոնեական առաջխաղացման համար տղամարդիկ ավելի մեծ հնարավորություններ ունեն, 27%-ը գտնում էր, որ այդ հարցում կանանց և տղամարդկանց հնարավորությունները հավասար են:

*Գծապատկեր 1. Հետևյալ դատողություններից որի՞ հետ եք համաձայն*




Պատասխաններում բավական մեծ տարբերություն կա գյուղ-քաղաք կտրվածքով: Հարցված քաղաքաբնակները գյուղաբնակների համեմատությամբ ավելի լավատեսորեն են գնահատում պաշտոնեական առաջխաղացման հարցում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների առկայությունը: Այսպես, այդ կարծիքին է քաղաքաբնակների 35%-ը և գյուղաբնակների 18%-ը: Կանանց առաջխաղացման հարցում քաղաքաբնակների և գյուղաբնակների կարծիքները գրեթե համընկնում են: Սակայն պատկերը փոխվում է, երբ քաղաքների թվում առանձնացվում են Երևանի տվյալները: Մարզային քաղաքաբնակների ավելի մեծ տոկոսն է համոզված, որ կանանց հնարավորությունները ավելի մեծ են (7%), և դա բավականին տարբերվում է գյուղաբնակների կարծիքից: Հաշվի առնելով Հայաստանի անհամաչափ զարգացման ներկայիս վիճակը, դա բնական է թվում, քանի որ քաղաքը թե՛ աշխատատեղերի ընտրության, թե՛ մասնագիտությամբ աշխատելու, թե՛ սոցիալական ենթակառուցվածքների համեմատաբար զարգացածության շնորհիվ ավելի մեծ հնարավորություն է տալիս կանանց պաշտոնեական առաջխաղացման համար, քան գյուղը: Սակայն պատկերը կտրուկ փոխվում է Երևանում հարցվածների կարծիքի ուսումնասիրության ժամանակ: Այսպես, Երևանում հարցվածների ընդամենը 2,2%-ն է կարծում, որ կանանց հնարավորությունները ավելի մեծ են, քան տղամարդկանց: Ցուցանիշը ցածր է ոչ միայն մարզային քաղաքների, այլև գյուղերի համեմատությամբ: Ճիշտ է, Երևանը որպես քաղաքական, տնտեսական, մշակութային կենտրոն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում, սակայն այստեղ ավելի ուժեղ է նաև առաջխաղացման համար մրցակցությունը: Այդ պայմաններում ավելի սուր է զգացվում կանանց հնարավորությունների սահմանափակությունը տղամարդկանց համեմատությամբ:

Քաղաքաբնակների 56%-ը և գյուղաբնակների 69%-ը համոզված են, որ տղամարդկանց հնարավորությունները ավելի մեծ են:

Նույն հարցի դիտարկումը ըստ տարիքային խմբերի բացահայտում է հետևյալ պատկերը:

*Աղյուսակ 1. Հանրային կարծիքը ՀՀ-ում կանանց և տղամարդկանց պաշտոնեական առաջխաղացման հնարավորությունների մասին՝ ըստ տարիքային խմբերի*

| | 18-30 | 31-45 | 46-60 | 61 և բարձր |
|---|---|---|---|---|
| Կանայք և տղամարդիկ պաշտոնեական առաջխաղացման հավասար հնարավորություններ ունեն | 32% | 31% | 27% | 26% |
| Պաշտոնեական առաջխաղացման հարցում տղամարդկանց հնարավորություններն ավելի մեծ են, քան կանանց | 60% | 60% | 61% | 64% |
| Պաշտոնեական առաջխաղացման հարցում կանանց հնարավորություններն ավելի մեծ են, քան տղամարդկանց | 4% | 4% | 5% | 5% |
| Դժվարացել են պատասխանել | 4% | 5% | 7% | 5% |

Ինչպես երևում է աղյուսակից, տարիքի հետ համոզմունքը, որ տղամարդիկ պաշտոնեական առաջխաղացման հնարավորությունների առումով առավելություն ունեն, աճում է, և ընդհակառակն՝ նվազում է այն մարդկանց քանակը, ովքեր գտնում են, որ կանայք և տղամարդիկ պաշտոնեական առաջխաղացման համար հավասար հնարավորություններ ունեն: Տարիքի հետ աճում է կենսափորձը և իրականության ավելի սթափ գնահատման հնարավորություն ընձեռում: Այդ է պատճառը, որ որքան ավելի բարձր է հարցվողների տարիքը, այնքան ավելի նվազում է կանանց և տղամարդկանց հնարավորությունների հավասարության վերաբերյալ պատկերացումների տոկոսը:

Ավելի մեծ են պատասխանների տարբերությունները մարզային կտրվածքով: Այսպես, եթե Երևանում հարցվածների 36%-ը, իսկ Գեղարքունիքում 34%-ն է գտնում, որ կանայք և տղամարդիկ պաշտոնեական առաջխաղացման համար հավասար հնարավորություններ ունեն, ապա Սյունիքում՝ 28, Շիրակում՝ 25, իսկ Արմավիրում՝ ընդամենը 18%-ը: Պաշտոնեական առաջխաղացման համար տղամարդկանց հնարավորությունները առավել բարձր են գնահատվել Շիրակում (68%), Արմավիրում (65%) և Սյունիքում (63%) և համեմատաբար ավելի ցածր՝ Երևանում (57%) և Գեղարքունիքում (55%): Այդպիսի տարակարծությունը ըստ մարզերի պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ մարզի սոցիալ-տնտեսական վիճակով, մարզում սահմանամերձ շրջանների գերակշռմամբ, քաղաքական առավել անառողջ մթնոլորտով, միգրացիայի ծավալով և դրանից բխող հիմնախնդիրներով, տնտեսության մեջ «կանացի» կամ «տղամարդկային» ճյուղերի գերակշռմամբ, աղքատության մակարդակով, գործազրկության գենդերային պատկերով և այլն: Որպես կանոն այն մարզերում (օրինակ, Գեղարքունիքում), ուր համեմատաբար բարձր են գնահատել կանանց և տղամարդկանց առաջխաղացման հավասար հնարավորությունները, տղամարդկային աշխատանքի ոլորտները հետխորհրդային շրջանում նշանակալի անկում են ապրել, տղամարդկանց գործազրկությունն ու արտագաղթը բավական մեծ տոկոս են կազմում, մեծ չափով նվազել են տղամարդկանց կարիերայի հնարավորությունները:

Հետխորհրդային շրջանում տեղի ունեցավ գենդերային համակարգի[29] արմատական վերափոխում: Փոխակերպվող հասարակության սոցիալ-տնտեսական դժվարությունները խորապես ներազդեցին ընտանիքում և հասարակության մեջ կանանց և տղամարդկանց տեղի և

[29] Գենդերային համակարգը տղամարդկանց և կանանց միջև հարաբերությունների ամբողջությունն է, որը ներառում է պատկերացումները, ֆորմալ և ոչ ֆորմալ նորմերն ու կանոնները, որոնք որոշվում են հասարակության մեջ տղամարդկանց և կանանց գրաված դիրքին, տեղին, նպատակներին համապատասխան:

դերի, սոցիալական կարգավիճակի վրա: Ընդ որում, այդ փոփոխությունները կրեցին երկակի, հակասական բնույթ: Աննախադեպ գործազրկության և միգրացիայի պայմաններում նվազեց ընտանիքում տղամարդու՝ կերակրողի դերը, և այդ առումով բավականին մեծ ծանրություն ընկավ կանանց ուսերին: Դրա հետ մեկտեղ, գենդերային կարծրատիպերով պայմանավորված, «...կանանց հաճախ առաջարկում են ոչ կայուն, ցածր վարձատրվող աշխատանք, որը բացառում է պաշտոնեական առաջխաղացումը, բավականություն չի պարգևում և հնարավորություն չի տալիս լիովին իրացնելու իրենց կարողությունները: Կանայք հաճախ ոչ պաշտոնական կապերի շրջանակից ու հարաբերություններից դուրս են մնում (այսպես կոչված «հին ընկերների շրջապատից»): Բացի դրանից, ոմանք տառապում են ագրեսիվ կորպորատիվ մշակույթից և կարող են բարոյական ճնշման ու սեռական ոտնձգությունների զոհ դառնալ, ինչպես նաև սպառնալիքների ու խմբային հալածանքների: ...ընտանեկան պարտականությունները (տնային տնտեսության վարումը, երեխաների դաստիարակությունը, ծեր հարազատների խնամքը) հավասար չափով չեն բաշխվում կանանց և տղամարդկանց միջև, դրանով իսկ հավելյալ դժվարություններ ստեղծելով կանանց աշխատանքային գործունեության և մասնագիտական առաջխաղացման համար»[30]: Պատահական չէ, որ հարցվածների բացարձակ մեծամասնությունը համոզված է, որ տղամարդկանց մասնագիտական առաջխաղացման հնարավորությունները ավելի մեծ են, քան կանանց:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ Հայաստանում ընտանիքների 1/3-ից ավելին այսօր գլխավորում են կանայք[31], ինչը նոր երևույթ է հայ հասարակության համար: Սակայն ցուցանիշը պայմանավորված չէ կանանց էմանսիպացիայով կամ ակտիվացմամբ, նրանց կարիերայի հնարավորությունների ընդլայնմամբ: Ավելին՝ 2009 թ. ամսական աշխատավարձի միջին չափը դրամով ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի, մեկ շնչի հաշվով, կազմել է տղամարդկանց դեպքում 22613,9, կանանց՝ 9211,1 (այսինքն՝ 40,7%)[32]: Հետևապես ցուցանիշը ավելի շատ հանրապետությունից տղամարդկանց արտագաղթի և աղքատացման արդյունք է: Դեռևս 1995 թ. Պեկինում ուշադրություն հրավիրվեց այն հանգամանքին, որ «Այն տնային տնտեսությունները, որոնք կանայք են վարում, ամենից հաճախ են հայտնվում ամենաաղքատների շրջանում, ինչը բացատրվում է խտրականությամբ աշխատավարձի հարցում, որը արմատացած է աշխատանքի շուկայում մասնագիտական սեգրեգացիայի կառույցների և սեռի հատկանիշով այլ արգելքների հետևանքով: Կին գլխավորով տնային տնտեսությունների թվաքանակի աճի գործոններն են ընտանիքի քայքայումը, գյուղական բնակչության տեղաշարժը քաղաք և հակառակը, միջազգային միգրացիան, պատերազմները և բռնի տեղահանությունը սեփական բնակավայրերից»[33]:

Դրա հետ մեկտեղ կնոջ ավանդական դերը շատ ընտանիքներում և տնային տնտեսություններում փոփոխվել է: Ավանդույթի ուժով ընտանիքի ղեկավար համարվում է տղամարդը, սակայն դա հաճախ կրում է ձևական բնույթ, և ընտանիքում որոշումների կայացման մակարդակում ավելի ու ավելի է առաջնություն ստանում ընտանիքի այն անդամը, ով կարողանում է ապահովել ընտանիքը թե՛ ֆինանսական, թե՛ սոցիալական կարգավիճակի առումով:

### *2.2. Կանանց և տղամարդկանց կարիերայի կարևորումը*

Սոցիալ-տնտեսական փոխակերպումները հանգեցրին գենդերային կարծրատիպերի ձևափոխման: Նոր պայմաններում ավելի ու ավելի դժվար է գոյատևում մեկ կարիերանոց ընտանիքը, կարևորվում է երկու ամուսինների աշխատանքից ստացված եկամուտը: Երկուսի հաջող կարիերայի դեպքում ընտանիքի բարեկեցության և սոցիալական կարգավիճակի աճի հնարավորությունները մեծանում են: Այսինքն հակասություն է ստեղծվում կնոջ ավանդական դերի և նոր իրողություններով պայմանավորված սոցիալական պահանջմունքների միջև: Այդ է պատճառը, որ չնայած հասարակական պատկերացումներում դեռևս կարևորվում է տղամարդու

---

[30] Աշխատանքի շուկայում և աշխատավայրում կանանց նկատմամբ խտրականության մասին ԵԽԽՎ Երաշխավորություն 1700 (2005):
[31] Տես «Տնային տնտեսություններն ըստ գլխավորի սեռի» տվյալները ըստ «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկ: Եր., 2010:
[32] Տես «Աշխատավարձի միջին չափն ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի, մեկ շնչի հաշվով, ամսական, դրամով, 2009 թ.» տվյալները ըստ «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկի, Եր., 2010:
[33] Տե՛ս Պեկինյան գործողությունների ծրագիր (15 սեպտեմբերի 1995 թ.):

կարիերայի անհրաժեշտությունը, բայց դրա հետ մեկտեղ գիտակցվում է նաև կանանց կարիերայի անհրաժեշտությունը:

Այսպես, **«Որքանո՞վ է կարևոր կարիերան տղամարդու և կնոջ համար»** հարցին պատասխանողները գնահատել են կարիերայի կարևորությունը կանանց և տղամարդկանց համար 5 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է «ամենևին կարևոր չէ», «2»-ը՝ «հիմնականում կարևոր չէ», «3»-ը՝ «չէր խանգարի», «4»-ը՝ «հիմնականում կարևոր է», «5»-ը՝ «շատ կարևոր է»: Արդյունքում՝ հարցի պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ ***(Գծապատկեր 2)***:

*Գծապատկեր 2. Որքանո՞վ է կարևոր կարիերան տղամարդու և կնոջ համար*




Հարցվածների 93%-ը կարծում է, որ կարիերան կարևոր է տղամարդու համար, 57%-ը՝ կնոջ: Ընդ որում 73%-ը նշել է, որ տղամարդու համար կարիերան շատ կարևոր է (այդ կարծիքին է տղամարդկանց 76%-ը, կանանց՝ 71%-ը), և միայն 32%-ը՝ կնոջ (այդ կարծիքին է տղամարդկանց 25, կանանց՝ 37%-ը): Տղամարդու կարիերան ավելի շատ են կարևորել ամուսնալուծվածները, կնոջ կարիերան՝ չամուսնացածները և ամուսնալուծվածները: Կարելի է եզրակացնել, որ և՛ տղամարդկանց, և՛ կանանց կարիերան կարևորվում է հատկապես այն դեպքում, երբ ընտանեկան կյանքում հիմնախնդիրներ են ծագում: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, որ կարիերան կարևոր չէ ամուսնացածների համար: Խոսքը ընդամենը առաջնահերթությունների մասին է: Պատահական չէ, որ ամուսնացածների 56%-ը կարևորել է կարիերան կնոջ համար, 25%-ը նշել է, որ այն «չէր խանգարի» (նույնը տղամարդկանց համար կազմել է համապատասխանաբար՝ 93% և 5%):

Ընդ որում, կնոջ կարիերայի նկատմամբ ավելի բացասական վերաբերմունք են դրսևորել տղամարդիկ, քան կանայք: Այսպես, կնոջ կարիերան ամենևին էլ կարևոր չեն համարում տղամարդկանց 10%-ը, կանանց ընդամենը 4%-ը: Հետևապես կնոջ կարիերան ավելի շատ կարևորում են կանայք: Տղամարդիկ ավելի մեծ դժվարությամբ են փոխում կարծրատիպային պատկերացումները և հարմարվում փոխակերպվող հասարակության նոր իրողություններին:

Հետաքրքրական է նաև այն, որ հարցվողների 24,9%-ը գտել է, որ կնոջ կարիերան «չէր խանգարի»: Հավանաբար դա հարցվածների այն մասն է, որ ստիպված է համակերպվել կնոջ կարիերայի հետ նոր իրողություններից ելնելով, սակայն դրա կարևորության գիտակցումը դեռևս ձևավորման փուլում է (համեմատության համար նշենք, որ տղամարդկանց առնչությամբ այդ կարծիքն է հայտնել 5,6%-ը): Կարիերան ավելի կարևորվում է քաղաքում, քան գյուղում: Տղամարդկանց համար այն կարևորել է քաղաքաբնակների 94%-ը, գյուղաբնակների՝ 90%-ը, կանանց համար՝ համապատասխանաբար 65% և 41%: Ընդ որում, Երևանում տղամարդկանց կարիերան չափազանց կարևորել է հարցվածների 79%-ը, մարզային քաղաքներում՝ 71%-ը, գյուղում 69%-ը: Կանանց համար նույն ցուցանիշները եղել են համապատասխանաբար՝ 36%, 34% և 25%:

Հետխորհրդային շրջանում մեծ վնասներ կրեցին աշխատաշուկայի թե՛ «տղամարդկային», թե՛ «կանացի» ոլորտները: Ինչպես վերը նշվեց, սոցիալ-տնտեսական տևական անկման հետևանքով մասնագիտական որակների կորուստը, գործազրկությունը, ձեռներեցության ոլորտի մոնոպոլացումն ու քրեականացումը լուրջ բարդություններ առաջացրին տղամարդու՝ նախկինում հաստատված կերակրողի «սոցիալական» դերի և աշխատաշուկայի նոր իրողությունների միջև: Գործազրկությունը հանգեցրեց տղամարդկանց մի մասի արտագաղթի: Աշխատաշուկայում խորացավ հորիզոնական և ուղղահայաց խտրազատումը (սեգրեգացիան): Կանայք, գենդերային կարծրատիպերի առկայության և հավասար հնարավորությունների բացակայության պայմաններում, հայտնվեցին զբաղվածության ոչ ֆորմալ, աշխատանքային շուկայի ցածր վարձատրվող ոլորտներում, դուրս մղվելով համեմատաբար ավելի եկամտաբեր ոլորտներից: Տղամարդիկ, որպես կանոն, գերակշռում են համեմատաբար բարձր վարձատրվող ճյուղերում, մասնագիտական ոլորտների կառավարման համակարգում, քաղաքական, տնտեսական, ֆինանսական, գիտական էլիտայում:

Ընդհանուր առմամբ կանանց միջին աշխատավարձը կազմում է տղամարդկանց աշխատավարձի մոտ 60%-ը, չնայած կանանց կրթական մակարդակն ավելի բարձր է: Այսպես, ըստ ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների, հետբուհական և բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցողների մեջ 53%-ը կանայք են: Եվ նույնիսկ տնտեսության այն ճյուղերում, որոնցում աշխատողների մեծամասնությունը կանայք են, նրանց միջին աշխատավարձը ցածր է տղամարդկանց աշխատավարձից: Կանանց հիմնական մասը կենտրոնացած է կրթության, առողջապահության, մշակույթի ոլորտներում:

*Աղյուսակ 2. Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության որոշ տեսակների և միջին ամսական եկամտի չափի, 2009 թ.*[34]

| | Ընդհանուրի նկատմամբ | | Բաշխումը ոլորտում՝ ըստ սեռի | | Կ.և Տ. միջին ամսական աշխատավարձի հարաբերակցությունը ըստ ոլորտների | Միջին ամսական եկամուտը ըստ ոլորտի |
|---|---|---|---|---|---|---|
| | Կ | Տ | Կ | Տ | Կ/Տ, % | դրամ |
| Ֆինանսական գործունեություն | 1.3 | 1.0 | 52.8 | 47.2 | 44,2 | 100925 |
| Հանքագործական արդյունաբերություն | 0.4 | 1.2 | 22.1 | 77.9 | 55,1 | 94907 |
| Շինարարություն | 0.3 | 13.1 | 2.1 | 97.9 | 76,0 | 92937 |
| Պետական կառավարում | 4.7 | 8.5 | 32.3 | 67.7 | 66,3 | 92051 |
| Տրանսպորտ և կապ | 1.9 | 8.8 | 16.2 | 83.8 | 76,5 | 80801 |
| Կրթություն | 16.2 | 3.3 | 80.9 | 19.1 | 82,9 | 60778 |
| Առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում | 9.6 | 1.7 | 83.4 | 16.6 | 71,2 | 55132 |
| Գյուղատնտեսություն, որսորդություն, անտառտնտեսություն | 45.7 | 34.0 | 53.9 | 46.1 | 86,9 | 38623 |

Ինչպես երևում է աղյուսակից, որպես կանոն, որքան բարձր է եկամուտը ճյուղում, այնքան մեծ է տղամարդկանց տեսակարար կշիռը: Բացառություն է կազմում ֆինանսական գործունեությունը, սակայն ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ ոլորտում կանանց միջին ամսական աշխատավարձի հարաբերակցությունը տղամարդկանց աշխատավարձի նկատմամբ ամենացածրն է և կազմում է 44,2%: Դա նշանակում է, որ ոլորտում հատկապես սուր է արտահայտված ուղղահայաց խտրազատումը: Այսինքն՝ թեպետ ոլորտում աշխատավարձը բարձր է և կանայք կազմում են աշխատողների 52,8%-ը, սակայն նրանք գտնվում են տվյալ ոլորտի գենդերային բուրգի ստորին մասերում, այնտեղ, ուր կարիերա չի արվում: Ուղղահայաց խտրազատումը առկա է նույնիսկ այնպիսի ոլորտներում, ինչպիսին են՝ կրթությունն ու առողջապահությունը, որտեղ գերակշռում են կանայք:

Հորիզոնական և ուղղահայաց գենդերային խտրազատումը ունի մի շարք պատճառներ: Դա նախ և առաջ աշխատաշուկայում առկա խտրականությունն է կանանց նկատմամբ, ավանդույթի ուժը, գենդերային մշակույթն ու կարծրատիպերը, մյուս կողմից, այդ ամենով պայմանավորված, կանանց առաջխաղացման ավելի համեստ ձգտումները: Կանանց կարիերայի աճին խոչընդոտում են կրկնակի ծանրաբեռնվածությունը[35], վերարտադրողական գործառույթների հետ կապված կարիերայի ժամանակավոր ընդհատումները, ընտանիքի անդամների կողմից հարուցվող խոչընդոտները: Սովորաբար կինը ավելի ուշ է սկսում պլանավորել իր մասնագիտական առաջխաղացումը: Ավելի հաճախ կինը բավարարվում է ամուսնու կարիերայի հաջողություններով և ինքը այլևս մասնագիտական աճի չի ձգտում: Կանայք հաճախ կարիերան համարում են ընդամենը աճի, ինքնահաստատման և ինքնադրսևորման գործոն, մինչդեռ տղամարդկանց համար

[34] Աղյուսակը կազմված է ըստ «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկի տվյալների, Եր., 2010:
[35] Համեմատության համար նշենք, որ ըստ «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկի տվյալների՝ տնային տնտեսության և ընտանիքի խնամքի վրա կանայք օրվա ընթացքում միջինը ծախսում են 5 ժամ 12 րոպե, տղամարդիկ՝ 1 ժամ 3 րոպե:

դա նախ և առաջ պաշտոնեական առաջխաղացում է: Տղամարդկանց առաջխաղացմանը մեծապես նպաստում են ոչ ֆորմալ «տղամարդկային կապերը», որոնց հնարավորությունները կանանց համար սահմանափակ են: Կանանց փոքրաթվության հետևանքով նրանք ավելի նկատելի են, խիստ տարածված են կարծրատիպային պատկերացումները: Որպես կանոն, պաշտոնյա կանանց նկատմամբ հասարակության պահանջներն ավելի խիստ են: Հասարակության ավելի զուսպ վերաբերմունքը կանանց կարիերայի նկատմամբ ստիպում է նրանց ավելի շատ ժամանակ տրամադրել աշխատանքին, անընդհատ ապացուցելու համար, որ իրենք լավ աշխատողներ են: Նույնիսկ հաջողության դեպքում կնոջ մեջ երբեմն «մեղքի զգացում» է առաջանում, որ իր աշխատանքի պատճառով տուժում է ընտանիքը: Բնականաբար այդ ամենը նաև հոգեբանորեն է ճնշում կանանց: Պատահական չէ, որ կանանց կարիերան խոչընդոտող հանգամանքներից է «կպչուն հատակը»՝ կանանց մեջ գենդերային կարծրատիպերի ազդեցությամբ ձևավորված հոգեբանական արգելքները, որոնք ևս խոչընդոտում են նրանց առաջխաղացմանը:

### *2.3. Որքանո՞վ է բարյացակամ հայաստանյան հանրային կարծիքը տարբեր ոլորտներում կարիերա անող կանանց նկատմամբ*

Հարցման պատասխանների վերլուծությունը ցույց տվեց, որ գնահատականները կանանց կարիերայի առնչությամբ հուսադրող չեն, հատկապես, երբ խոսքը «տղամարդկային» ոլորտի գործունեության մասին է: Սակայն հարցվածների գնահատականները փոխվում են այնպիսի «կանացի ոլորտների» դեպքում, ինչպիսին են առողջապահությունն ու կրթությունը: Այսպես, «**Ձեր կարծիքով, որքանո՞վ է բարյացակամ հանրային կարծիքը հետևյալ ոլորտներում կարիերա անող կանանց նկատմամբ**» հարցին ի պատասխան, ընդհանուր առմամբ, («հիմնականում» կամ «միանշանակ») բարյացակամ է համարում առողջապահության ոլորտում հարցվածների 87%-ը, կրթության ոլորտում՝ 90%-ը: Կարծիքները, ինչպես երևում է Աղյուսակ 2-ից, համապատասխանում են աշխատաշուկայում առկա գենդերային խտրազատմանը: Հետաքրքրական է, որ բանկային գործը խորհրդային շրջանում համարվել է կանացի ոլորտ, այժմ տղամարդկային է, բայց հասարակական կարծիքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ոլորտում աշխատող կանանց նկատմամբ պահպանվել է դրական վերաբերմունքը: Այսպես, հարցվածների 86%-ը գտնում է, որ հասարակական կարծիքը բարյացակամ է այդ ոլորտում աշխատող կանանց նկատմամբ: Ըստ հարցվածների՝ հանրային կարծիքն առավել անբարյացակամ է ուժային ոլորտներում՝ բանակում (61%), ազգային անվտանգության համակարգում (58%), ոստիկանությունում (44%) կարիերա անող կանանց նկատմամբ: Ավելի հանդուրժող է հանրային կարծիքը, ըստ հարցվածների, դատական համակարգում (բարյացակամ է 41%-ը, անբարյացակամ՝ 29, անտարբեր՝ 27%-ը), ՏԻՄ-երում (բարյացակամ է 40%-ը, անբարյացակամ՝ 32, անտարբեր՝ 26%-ը) կանանց կարիերայի նկատմամբ:

Հանրագումարի բերելով տվյալները, ստացել ենք Գծապատկեր 3-ը, որտեղ հանրության կարծիքը այս կամ այն ոլորտում արտահայտված է միջինացված գնահատականներով ըստ 5-միավորանոց սանդղակի, որտեղ «1»-ը նշանակում է «միանշանակ անբարյացակամ», իսկ «5»-ը՝ «միանշանակ բարյացակամ»:

*Գծապատկեր 3. Որքա՞ն է բարյացակամ հայաստանյան հանրային կարծիքը տարբեր ոլորտներում կարիերա անող կանանց նկատմամբ*




Ինչպես երևում է ***Գծապատկեր 3-ից,*** հանրային կարծիքն առավել բարյացակամ է առողջապահության, կրթության և բանկային համակարգերում կարիերա անող կանանց նկատմամբ: Սակայն հանրային կարծիքում դեռևս պահպանվում է աշխատաշուկայի «կանացի» և «տղամարդկային» ոլորտների տարանջատումը: Աշխատաշուկայում առկա գենդերային խտրազատումը չի նպաստում կարծրատիպերի վերացմանը: Պետական մակարդակով, չնայած Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին, գենդերային կարծրատիպերը հաղթահարելու ծրագրեր դեռևս չեն իրագործվում: Չնայած այդ ամենին՝ վերջին տարիներին հանրային կարծիքում դրական տեղաշարժեր են նկատվում: Այսպես, որոշ «տղամարդկային ոլորտներում» կնոջ կարիերայի նկատմամբ վերաբերմունքը համեմատաբար ավելի հանդուրժող է դարձել: Դատական համակարգում և ՏԻՄ-երում կնոջ կարիերան թեպետ պակաս ցանկալի է, քան «կանացի ոլորտներում», սակայն ավելի ընդունելի է, քան այնպիսի «ուժային կառույցներում», ինչպիսին են ոստիկանությունը, ԱԱՀ-ն և բանակը: Հանրության ավելի փոքր մասն է պատրաստ տեսնելու կանանց ուժային ոլորտներում:

Հարցի պատասխաններում առավել մեծ տարբերություններ են նկատվում մարզային կտրվածքով ***(տես՝ Աղյուսակ 3)***:

*Աղյուսակ 3. Որքա՞ն է բարյացակամ(«միանշանակ» կամ «հիմնականում») հանրային կարծիքը տարբեր ոլորտներում կարիերա անող կանանց նկատմամբ, ըստ մարզերի, %*

| | Երևան | Արմավիր | Շիրակ | Գեղարքունիք | Սյունիք |
|---|---|---|---|---|---|
| Առողջապահություն | 90 | 91 | 95 | 88 | 59 |
| Կրթություն | 93 | 96 | 97 | 92 | 60 |
| Ոստիկանություն | 21 | 18 | 35 | 39 | 36 |
| Դատական համակարգ | 34 | 22 | 58 | 57 | 48 |
| ՏԻՄ | 40 | 21 | 44 | 51 | 48 |
| Ազգային անվտանգության համակարգ | 16 | 14 | 24 | 32 | 39 |
| Բանակ | 15 | 18 | 30 | 23 | 44 |
| Բանկային համակարգ | 89 | 87 | 85 | 85 | 81 |

Ինչպես երևում է աղյուսակից, հարցվողների գնահատմամբ հանրային կարծիքը բարեհաճ է առողջապահության, կրթության և բանկային համակարգում կարիերա անող կանանց նկատմամբ: Այդ կարծիքն է արտահայտել հարցվածների 80%-ից ավելին: Բացառություն է կազմում Սյունիքի մարզը, որտեղ առողջապահության և կրթության ոլորտներում կարիերա անող կանանց նկատմամբ հանրային կարծիքը ավելի զուսպ է: Հիմնախնդիրը հավանաբար լրացուցիչ հետազոտության կարիք ունի: Բայց, դրա փոխարեն, Սյունիքում հանրային կարծիքը հանրապետական միջինից շատ ավելի բարեհաճ է ուժային կառույցներում՝ բանակում և ազգային անվտանգության համակարգում կարիերա անող կանանց նկատմամբ: Հավանաբար այս հարցում իր դերակատարումն ունի մարզի սահմանամերձ գոտում գտնվելը, ղարաբաղյան պատերազմի արհավիրքը իր վրա կրելը: Երևանի և Արմավիրի համեմատությամբ ավելի բարեհաճ է հանրային կարծիքը ոստիկանությունում կարիերա անող կանանց նկատմամբ Գեղարքունիքում, Սյունիքում և Շիրակում:

## 3. Քաղաքական և բիզնես կարիերայի գենդերային տեսանկյունները

### *3.1. Քաղաքական կարիերայի գենդերային հիմնախնդիրները*

Տարբեր հասարակություններում կանանց քաղաքական կարիերայի ճանապարհի խոչընդոտները տարբեր են, սակայն կան գործոններ, որոնք ընդհանուր են գրեթե բոլոր հասարակությունների համար: Որպես կանոն դա պայմանավորված է կանանց նկատմամբ բացահայտ կամ թաքնված խտրականության առկայությամբ, կանանց քաղաքական փորձի և ֆինանսական ռեսուրսների բացակայությամբ, տանն ու աշխատավայրում կնոջ կրկնակի ծանրաբեռնվածությամբ և այլն: Գրեթե ամենուրեք առկա է «ապակյա առաստաղ» կոչվող անտեսանելի խոչընդոտների ամբողջությունը, որը հնարավորություն չի տալիս կնոջը բարձրանալ իշխանության սանդուղքի որոշակի աստիճանից վեր: Այս ամենի հետևանքով քաղաքականության ոլորտի բարձր պաշտոններում կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը հավասարակշռված չէ:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կազմում կանայք կազմում են ընդամենը 8,4%, 12 մշտական հանձնաժողովներից 4-ում ոչ մի կին չկա: 2009 թ. տվյալներով ՀՀ քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում կանայք կազմել են ընդամենը 10%: Գործադիր իշխանության համակարգում կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը քաղաքական և հայեցողական պաշտոններում նույնպես հավասարակշռված չէ: 2010 թվականի տվյալներով կանանց ներկայացվածությունը նախարարների և փոխնախարարների մակարդակում կազմել է 9,6%: 18 նախարարներից միայն երկուսն են կին, 65 փոխնախարարներից՝ ընդամենը 6-ը:

Հանրապետությունում չկա ոչ մի կին մարզպետ, 21 փոխմարզպետներից մեկն է կին: 48 քաղաքապետների թվում կանայք չկան, փոխքաղաքապետներից միայն մեկն է կին: Հանրապետության ՏԻՄ-երի ավագանու կազմում կանայք 6,2% են: Գյուղական տեղական ինքնակառավարման մարմիններից սոսկ 24-ն են ղեկավարում կանայք, ինչը կազմում է գյուղական ՏԻՄ-երի 2,8%-ը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այդ իրավիճակը հաղթահարելու և՛ կանանց, և՛ տղամարդկանց մեկնարկային պայմանները հավասարեցնելու համար անհրաժեշտ է կիրառել տարբեր մեխանիզմներ: Մեխանիզմների մի մասը պետք է ուղղվի գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը, որոնք այսօր կանանց քաղաքական կարիերայի ճանապարհի հիմնական խոչընդոտներն են: Այդպիսի կարծրատիպերից են, օրինակ, «Քաղաքականությունը կնոջ գործ չէ», կամ «Կանանց զգացմունքայնությունը հնարավորություն չի տալիս, որ կանայք ճիշտ որոշումներ կայացնեն» և այլն: Ուստի հետազոտության մեջ ներառեցինք հարցեր, որոնք պետք է հնարավորություն ընձեռեին պարզելու, թե հայաստանյան հանրային կարծիքը որքանո՞վ է բարյացակամ քաղաքական կարիերա անող կնոջ նկատմամբ, և տարբերվո՞ւմ է արդյոք այն քաղաքական կարիերա անող տղամարդու նկատմամբ վերաբերմունքից, ինչպես նաև հարցեր, որոնք պետք է նպաստեին գենդերային կարծրատիպերի բացահայտմանը: Ինչպես և սպասվում էր, դաշտային հետազոտությունը ցույց տվեց, որ կանանց և տղամարդկանց նկատմամբ հանրային կարծիքում էական տարբերություններ կան:

*Աղյուսակ 3. Հարցվածների կարծիքը՝ որքանո՞վ է բարյացակամ հանրային կարծիքը քաղաքական կարիերա անող կնոջ և տղամարդու նկատմամբ Հայաստանում*

| | Կնոջ նկատմամբ | Տղամարդու նկատմամբ |
|---|---|---|
| Միանշանակ անբարյացակամ է | 7,8% | 0,9% |
| Հիմնականում անբարյացակամ է | 19,2% | 1,5% |
| Անտարբեր է | 22,4% | 8,8% |
| Հիմնականում բարյացակամ է | 35,0% | 25,1% |
| Միանշանակ բարյացակամ է | 11,5% | 60,4% |
| Դժվարանում եմ պատասխանել | 4,1% | 3,3% |
| Ընդամենը | 100% | 100% |

Ընդհանրացնելով նշենք, որ հարցվածների 85,5%-ը կարծում է, որ հայաստանյան հանրային կարծիքը բարյացակամ է տղամարդու քաղաքական կարիերայի նկատմամբ, 46,5%-ը՝ կնոջ: Ինչպես երևում է աղյուսակից, հարցվածների մեծ մասը համարում է, որ հանրային կարծիքը անտարբեր է կնոջ քաղաքական կարիերայի նկատմամբ (22,4%) կամ անբարյացակամ (27,0%), մինչդեռ տղամարդու առնչությամբ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 8,8% և 2,4%: Ինչպես երևում է աղյուսակից, հարցվածների 60,4%-ը նշել է, որ տղամարդու նկատմամբ հասարակական կարծիքը միանշանակ բարյացակամ է, մինչդեռ կնոջ նկատմամբ՝ սոսկ 11,5%-ը: Առանձին դեպքերում, հավանաբար առանձին կանանց նկատմամբ, ըստ հարցվածների, հանրությունը պատրաստ է բացառություններ անել: Պատահական չէ, որ թեպետ կանանց քաղաքական կարիերան միանշանակ չի ընդունվում, այնուամենայնիվ հանրային կարծիքը ըստ հարցվողների հիմնականում բարյացակամ է կանանց նկատմամբ (35,0%): Հետաքրքիր է, որ նույն հարցի դիտարկումը սեռի սկզբունքով, պարզում է, որ ավելի լավատեսորեն են այս հարցում տրամադրված կանայք, քան տղամարդիկ: Այսպես, այն մարդկանց թվում, ովքեր կարծում են, որ հանրային կարծիքը միանշանակ բարյացակամ է կանանց քաղաքական կարիերայի նկատմամբ, 60,1%-ը կանայք են:

Քաղաք-գյուղ կտրվածքով նույն հարցի պատասխանները բաշխվում են հետևյալ կերպ. քաղաքաբնակների մեծ մասը համարում է, որ հասարակական կարծիքը տղամարդու քաղաքական կարիերայի նկատմամբ միանշանակ բարյացակամ է (57%) կամ հիմնականում բարյացակամ (29%), մինչդեռ կնոջ քաղաքական կարիերայի նկատմամբ՝ հիմնականում բարյացակամ (41%) կամ անտարբեր (21%): Գյուղաբնակների մեծ մասը կարծում է, որ հասարակական կարծիքը տղամարդու քաղաքական կարիերայի նկատմամբ միանշանակ բարյացակամ է (67%) կամ հիմնականում բարյացակամ (18%), մինչդեռ կնոջ քաղաքական կարիերայի նկատմամբ՝ հիմնականում բարյացակամ (24%) կամ անտարբեր (25%): Գենդերային կարծրատիպերը ավելի ուժեղ են արտահայտված գյուղում, քան քաղաքում, և պատահական չէ, որ գյուղաբնակների 35%-ն է կարծում, որ հանրային կարծիքը անբարյացակամ է կանանց քաղաքական կարիերայի նկատմամբ, իսկ քաղաքաբնակների՝ 23%-ը: Տղամարդկանց նկատմամբ հանրային կարծիքի անբարյացակամությունը և գյուղում, և քաղաքում նշել է հարցվողների ընդամենը 2%-ը:

### *3.2. Բիզնես-կարիերայի գենդերային տեսանկյունները*

Գրեթե նույն համամասնությունը պահպանվում է նաև բիզնեսով զբաղվող կանանց և տղամարդկանց նկատմամբ: «Ձեր կարծիքով, որքանո՞վ է բարյացակամ հանրային կարծիքը կին և տղամարդ բիզնեսմենի նկատմամբ» հարցի պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ.

*Աղյուսակ 4. Որքանո՞վ է բարյացակամ հանրային կարծիքը բիզնեսով զբաղվող կնոջ և տղամարդու նկատմամբ*

| | Բիզնեսով զբաղվող կնոջ նկատմամբ | Բիզնեսով զբաղվող տղամարդու նկատմամբ |
|---|---|---|
| Միանշանակ անբարյացակամ է | 6,8% | 0,6% |
| Հիմնականում անբարյացակամ է | 17,4% | 0,8% |
| Անտարբեր է | 19,3% | 6,4% |
| Հիմնականում բարյացակամ է | 34,4% | 21,4% |
| Միանշանակ բարյացակամ է | 18,3% | 68,3% |
| Դժվարանում եմ պատասխանել | 3,8% | 2,5% |
| Ընդամենը | 100% | 100% |

Այս հարցում կանանց և տղամարդկանց կարծիքների միջև տարբերությունը աննշան է և քիչ է շեղվում վերը ներկայացված աղյուսակի տվյալներից: Ավելի մեծ է տարբերությունը քաղաք-գյուղ կտրվածքով դիտարկելիս: Այսպես, գյուղաբնակների 25%-ը գտնում է, որ հանրային կարծիքը անտարբեր է կին բիզնեսմենների նկատմամբ, 32%-ը՝ անբարյացակամ է, և 40%-ը՝ բարյացակամ: Նույն ցուցանիշները տղամարդկանց առնչությամբ գյուղում կազմել են համապատասխանաբար՝ 7%, 2% և 90%: Քաղաքաբնակների 16%-ն է գտնում, որ հանրային կարծիքը անտարբեր է կին բիզնեսմենների նկատմամբ, 20%-ը՝ անբարյացակամ է, և 60%-ը՝ բարյացակամ: Նույն ցուցանիշները տղամարդկանց առնչությամբ քաղաքում կազմել են համապատասխանաբար՝ 1%, 6% և 90%: Հետաքրքիր է, որ հարցման տվյալների համաձայն՝ հանրային կարծիքը ավելի բարենպաստ է կին բիզնեսմենների նկատմամբ (52,6%), քան կին քաղաքական գործիչների (46,5%):

### *3.3. Հասարակական կարծիքը քաղաքականությամբ և բիզնեսով զբաղվող կանանց նկատմամբ*

Հաջորդ հարցերի պատասխանները հաստատում են վերոնշյալ իրողությունները:

*Աղյուսակ 5. «Որքանո՞վ եք համաձայն հետևյալ դատողությունների հետ»*

| Պնդումներ | Համաձայն եմ | Համաձայն չեմ | Դժվարանում եմ պատասխանել |
|---|---|---|---|
| Քաղաքականությամբ զբաղվող կնոջ անձնական կյանքում ինչ-որ բան այն չէ: | 44% | 49% | 7% |
| Բիզնեսով (մասնավոր ձեռնարկատիրությամբ) զբաղվող կնոջ անձնական կյանքում ինչ-որ բան այն չէ: | 37% | 57% | 6% |
| Կին քաղաքական գործչին և թեկնածուին առաջին հերթին քերահավատությամբ են վերաբերվում կանայք: | 44% | 46% | 10% |
| Կինը չպետք է քաղաքականությամբ զբաղվի, նրա գործը ընտանիքն ու երեխաները պետք է լինեն: | 36% | 61% | 3% |
| Կինը չպետք է մտահոգվի բիզնեսով ու ընտանիքի ֆինանսական խնդիրները լուծելու հարցով, նրա գործը ընտանիքն ու երեխաները պետք է լինեն: | 34% | 64% | 2% |
| Կնոջ կարիերայի արդյունքում տուժում է ամուսնու վարկն ու ընտանեկան կարգավիճակը: | 33% | 61% | 6% |
| Կանայք չունեն անհրաժեշտ որակներ քաղաքական բարձր պաշտոններ զբաղեցնելու համար: | 24% | 72% | 4% |
| Կանայք չունեն բիզնեսով ու մասնավոր ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար անհրաժեշտ հատկություններ: | 22% | 74% | 4% |
| Քաղաքականությունը «կեղտոտ» գործ է, ուստի կանայք այնտեղ անելիք չունեն: | 46% | 45% | 9% |
| Կնոջ հաջող կարիերան դրական է անդրադառնում ընտանիքի սոցիալական կարգավիճակի և հեղինակության վրա: | 67% | 24% | 9% |

Պատասխանների դիտարկումը սեռի սկզբունքով բացահայտում է հետևյալ պատկերը. համաձայն չեն, որ քաղաքականությամբ զբաղվող կնոջ անձնական կյանքում ինչ-որ բան այն չէ, կանանց 53%-ը, տղամարդկանց 45%-ը: Եվ ընդհակառակն՝ այդ սեքսիստական պնդմանը համաձայն են տղամարդկանց 48 և կանանց 39%-ը: Պնդման հետ համաձայնել է Երևանում հարցվածների կեսից ավելին՝ 56%, մարզային քաղաքաբնակների 39%-ը և գյուղաբնակների 36%-ը:

Երկու սեռերի ներկայացուցիչներն ավելի բարեհաճ են բիզնեսով, քան քաղաքականությամբ զբաղվող կանանց նկատմամբ: Այսպես, հարցված կանանց 60%-ը և տղամարդկանց 53%-ը համաձայն չեն այն կարծրատիպին, որ բիզնեսով (մասնավոր ձեռնարկատիրությամբ) զբաղվող կնոջ անձնական կյանքում ինչ-որ բան այն չէ:

Հարցվածների 2/3-ը համաձայն չէ այն պնդումներին, թե կինը չպետք է քաղաքականությամբ զբաղվի, մտահոգվի բիզնեսով ու ընտանիքի ֆինանսական խնդիրները լուծելու հարցով, և նրա գործը պետք է լինեն ընտանիքն ու երեխաները: Հարցվողների 2/3-ից ավելին այն կարծիքին է, որ

կնոջ հաջող կարիերան դրական է անդրադառնում ընտանիքի սոցիալական կարգավիճակի և հեղինակության վրա: Դրա հետ մեկտեղ հարցվածների 1/3-ը այնուամենայնիվ կարծում է, որ կնոջ կարիերայի արդյունքում ամուսնու վարկն ու ընտանեկան կարգավիճակը տուժում են: Հետևապես, կարծրատիպը, որ ամուսնու դիրքը պետք է ավելի բարձր լինի, քան կնոջ, դեռ շատ ամուր է նստած: Սակայն նկատվում են նաև դրական միտումներ: Այսպես, հարցվածների 70%-ից ավելին համաձայն չեն այն պնդումներին, որ կանայք չունեն անհրաժեշտ որակներ քաղաքական բարձր պաշտոններ զբաղեցնելու, բիզնեսով ու մասնավոր ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար: Հետաքրքրական է, որ պատասխանների վրա գրեթե չի ազդել հարցման մասնակիցների հասարակական-քաղաքական ակտիվության մակարդակը: Հետևապես՝ լինել այս կամ այն կուսակցության կամ ՀԿ-ի անդամ դեռևս չի նշանակում գենդերապես զգայուն լինել: Միակ զգալի տարբերությունը, որ կա համահարաբերակցություններում, դա ըստ սեռի տարբերություններն է: Եվ, որպես կանոն, կանանց վերաբերյալ կարծրատիպային պատկերացումները ավելի հատուկ են տղամարդկանց, քան կանանց: Այսպես, «Կինը չպետք է քաղաքականությամբ զբաղվի, նրա գործը ընտանիքն ու երեխաները պետք է լինեն» կարծիքի հետ համաձայն չէ կանանց 68%-ը և տղամարդկանց 54%-ը: Կամ «Կինը չպետք է մտահոգվի բիզնեսով ու ընտանիքի ֆինանսական խնդիրները լուծելու հարցով, նրա գործը ընտանիքն ու երեխաները պետք է լինեն» կարծիքին համաձայն չէ կանանց 68%-ը և տղամարդկանց 57%-ը: Տղամարդկանց 38 և կանանց 28%-ն է գտնում, որ կնոջ կարիերայի արդյունքում տուժում են ամուսնու վարկը և ընտանիքի կարգավիճակը: «Քաղաքականությունը «կեղտոտ» գործ է, ուստի կանայք այնտեղ անելիք չունեն» կարծիքն արտահայտել են տղամարդկանց 50%-ը և կանանց 43%-ը: Կանանց 69%-ը և տղամարդկանց 64%-ը նշում է, որ «Կնոջ հաջող կարիերան դրական է անդրադառնում ընտանիքի սոցիալական կարգավիճակի և հեղինակության վրա»:

Ինչպես երևում է հետազոտությունից, սոցիալ-տնտեսական նոր իրողությունների, եվրաինտեգրման հետ կապված քաղաքական գործընթացների ազդեցությամբ գենդերային կարծրատիպերը դանդաղորեն փոփոխվում են, և հասարակության ավելի մեծ մասն է արդեն հոգեբանորեն պատրաստ տեսնելու կանանց ինչպես բիզնեսի, այնպես էլ քաղաքականության ոլորտում: Հանրությունը պատրաստ է ընդունելու կանանց առաջխաղացումը՝ հատկապես, եթե ընտանիքը շահում է դրանից, թե՛ նյութապես, թե՛ սոցիալական կարգավիճակի առումով:

## 4. Քաղաքական կարիերայի ասպարեզում կանանց հարաբերական պասիվության պատճառները

Չնայած Աղյուսակ 5-ում կանանց քաղաքական կարիերայի առումով հանրային կարծիքի բավականին հուսադրող տվյալներին, կանանցից քչերն են քաղաքական հաջող կարիերա անում և հասնում քաղաքական Օլիմպոսի բարձունքը: Դրա պատճառների վերաբերյալ հանրային կարծիքը պարզելու համար հարցաթերթիկում ընդգրկվել էին խնդիրը լուսաբանող մի քանի հարցեր:

Քաղաքական կարիերայի բնագավառում կանանց հարաբերական պասիվությունը հարցվածները հիմնավորում էին հետևյալ հանգամանքներով՝

1. կնոջ կողմնորոշվածությամբ դեպի ընտանիք (45%),
2. կանանց անվստահությամբ սեփական ուժերի նկատմամբ (35%),
3. հասարակական անվստահությամբ ու թերահավատությամբ կին գործիչների նկատմամբ (33%),
4. կանանց առաջմղման մեխանիզմների բացակայությամբ (օր. քաղաքական կուսակցությունների ընտրացուցակներում կանանց ոչ բավարար ընդգրկվածությամբ) (29%),
5. հարազատների (ամուսին, ծնողներ) բացասական դիրքորոշմամբ (28%):

Այլ պատասխանների թվում նշվել են նաև՝ կանանց ոչ բավարար կրթամակարդակը (15%), կանանց մտահոգվածությունը իրենց վարկով և հեղինակությամբ, քանի որ ընդունված տեսակետի համաձայն քաղաքականությունը «կեղտոտ բնագավառ» է (13%), կանանց հասարակական կազմակերպությունների ոչ բավարար աջակցությունը (13%), կանանց շրջանում քաղաքական

ակտիվ դիրքորոշման ու նախաձեռնողականության բացակայությունը (11%), քաղաքական գործընթացներում կանանց ոչ բավարար փորձն ու գիտելիքները (10%), ԶԼՄ-ների կողմից աջակցության բացակայությունը (4%), կանանց նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանում (4%): Պատասխաններից երևում է, որ կանանց պասիվությունը ավելի շատ բացատրվում է հոգեբանական արգելքներով, քան ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությամբ: Այնպիսի հզոր գործոններ, ինչպիսին են առաջընթաց մեխանիզմներն ու ԶԼՄ-ների կողմից գենդերային կարծրատիպերի հաղթահարումը, դեռևս հասարակական գիտակցության մեջ ամրագրված չեն: Համարժեք չէ նաև Հայաստանում կանանց նկատմամբ բռնության երևույթի վտանգավորության գիտակցումը:

Պատասխանների դիտարկումը տարբեր հարաբերակցություններում նշանակալի տարբերություններ ի հայտ չբերեց: Բացառություն կազմեցին գյուղ-քաղաք և ըստ մարզերի համեմատությունները: Սակայն տարբերությունը միայն վերը առանձնացված պատասխանների հերթականությունն էր: Այդպիսին էր, օրինակ, Արմավիրի բնակիչների կարծիքը, որոնք կանանց պասիվությունը առաջին հերթին բացատրում էին կանանց անվստահությամբ սեփական ուժերի նկատմամբ և վերջում միայն կնոջ կողմնորոշվածությամբ դեպի ընտանիքը: Մյուս մարզերի բնակիչները որպես առաջին պատճառ այնուամենայնիվ նշել էին ընտանիքը, իսկ հետո արդեն տարբեր հերթականությամբ մյուս պատճառները: Հետաքրքիր է երևանաբնակների և մարզային քաղաքների բնակիչների կարծիքների համեմատությունը: Մարզերի բնակիչների պատասխաններում գրեթե հավասարարժեք է առաջին, երրորդ և չորրորդ պատասխանների տոկոսային արտահայտությունը (33%-37%), անհամեմատ ավելի ցածր է սեփական ուժերի նկատմամբ կանանց անվստահության գործոնը (26%): Երևանում խիստ կարևորվում է հատկապես ընտանիքի նկատմամբ կնոջ կողմնորոշվածության գործոնը (49%), մինչդեռ առաջընթաց մեխանիզմների բացակայությունը նշվել է միայն հարցվողների 17%-ի պատասխաններում: Գյուղում հարցվածների պատասխաններում կարևորվել են բոլոր հինգ գործոնները գրեթե հավասարաչափ:

Դժվար չէ նկատել առաջին (կնոջ կողմնորոշվածությունը դեպի ընտանիք) և հինգերորդ (հարազատների (ամուսին, ծնողներ) բացասական դիրքորոշումը) պատասխաններում ընտանիքի գործոնի առկայությունը: Սակայն իրականում այդ երկու ձևակերպումներում բավականին մեծ տարբերություն կա: Առաջինի դեպքում ընդգծվում է կնոջ հակվածությունը դեպի իր ընտանիքը, կամավոր ընտրությունը, երկրորդի դեպքում՝ ընտանիքի անդամների բացասական դիրքորոշումը, արգելքների առկայությունը: Ուստի հետազոտության ընթացքում բարձրացված հաջորդ հարցը կոչված էր բացահայտելու հանրային կարծիքը կարիերայի հարցում ընտանիքի դերակատարության վերաբերյալ:

**«Արդյոք ընտանիքը խոչընդո՞տ է կնոջ համար քաղաքականությամբ կամ բիզնեսով զբաղվելու հարցում» հարցին հարցվածների 48,1%-ը դրական պատասխան է տվել, 39,8%-ը՝ բացասական:**

Դրական պատասխաններում դա բացատրվել է մի շարք հանգամանքներով: Այսպես, հարցվողների 74,5%-ը գտնում են, որ կնոջ քաղաքականությամբ կամ բիզնեսով զբաղվելու դեպքում ընտանիքը և երեխաները տուժում են ուշադրության պակասից (ընդ որում այդպես պատասխանողների թվում 45,3%-ը տղամարդիկ են, 54,7%-ը՝ կանայք): Հարցվողների 56,4%-ը կարծում են, որ ընտանեկան ու կենցաղային հոգսերը ժամանակ չեն թողնում կնոջը քաղաքական և բիզնես կարիերայով զբաղվելու համար (տղամարդիկ՝ 42,9%, կանայք՝ 57,1%): Որ ամուսինը և նրա հարազատները չեն խրախուսում կնոջ քաղաքական և բիզնես կարիերան, նշել է հարցվողների 33,1%-ը (տղամարդիկ՝ 41,4%, կանայք՝ 58,6%): «Ամուսնու կարիերան համարվում է ավելի կարևոր և կինը ստիպված պետք է մտահոգվի ամուսնու կարիերային աջակցելու խնդրով» պատասխանը նշել է հարցվողների 23,9%-ը (տղամարդիկ՝ 39,9%, կանայք՝ 60,1%): Հարցվողների 23,2%-ը կարծում է, որ քաղաքական կամ բիզնես ոլորտում հաջող կարիերա անող կնոջ ամուսինը իրեն նվաստացած է զգում (տղամարդիկ՝ 45,5%, կանայք՝ 54,5%): Ինչպես տեսնում ենք, բոլոր այս կարծիքներին ավելի շատ կողմ են կանայք, քան տղամարդիկ: Կարծես թե կանայք իրենց պասիվությունը «արդարացնող» պատճառները փորձում են գտնել ընտանիքի մեջ: Իսկ դա արդեն հակասում է վերը նշված այն կարծիքին, որ կնոջ հաջող կարիերան դրական է անդրադառնում

ընտանիքի սոցիալական կարգավիճակի և հեղինակության վրա: Հիշեցնենք, որ հարցվողների 2/3-ից ավելին այդ կարծիքն էին հայտնել: Հետևապես կարելի է եզրակացնել, որ ընտանեկան հոգսերը իրոք բավականին մեծ խոչընդոտ են կանանց կարիերայի ճանապարհին: Բայց կնոջ ակտիվացման վերաբերյալ որոշակի հասարակական պատվեր է ձևավորվել, և եթե կնոջը հաջողվում է համատեղել կարիերան և ընտանիքը, դրանից ընտանիքը միայն շահում է:

Հիշեցնենք նաև, որ հարցվածների ընդամենը 10%-ն էր որպես կանանց պասիվության պատճառ նշել քաղաքական գործընթացների ոլորտում կանանց ոչ բավարար փորձն ու գիտելիքները: Ուստի փորձեցինք ևս մի հարցի պատասխանն ստանալ՝ ցանկանու՞մ են արդյոք հարցվողները համալրել իրենց գիտելիքների պաշարը, և եթե այո, ապա՝ որ ոլորտներում: Պարզվեց, որ գիտելիքներ ստանալու ցանկություն չունի հարցվողների 35%-ը: Նշենք, որ դա բավականին մեծ տոկոս է, եթե հաշվի առնենք, որ առաջխաղացման համար գիտելիքների համալրումը խիստ կարևոր է: Նշանակում է մարդկանց 1/3-ը առաջխաղացման հույսերը ամենևին էլ չի կապում գիտելիքի հետ: Ամենաշատ պահանջարկ ունեն իրավական գիտելիքները: Հարցվողների 43%-ը ցանկություն են հայտնել ստանալ իրավական գիտելիքներ, 26%-ը՝ լիդերության հմտություններ, 14%-ը՝ հասարակական միջոցառումների անցկացման հմտություններ և ծրագրերի իրականացման նպատակով ֆինանսական միջոցների հայթայթման ունակություններ: Իրավական գիտելիքներ և լիդերության հմտություններ ավելի շատ ցանկանում են ստանալ ՀԿ-ների և կուսակցությունների անդամները: Իրավական գիտելիքներ ստանալ ամենաքիչը ցանկանում են թոշակառուները (նրանց 24%-ը), ամենաշատը՝ սովորողները (64%) և անաշխատունակները (58%): Գիտելիքներով ավելի հետաքրքրված են կանայք, քան տղամարդիկ: Այսպես, իրավական գիտելիքներ ստանալու ցանկություն է հայտնել կանանց 47%-ը, տղամարդկանց 38%-ը: Գիտելիք ստանալ ցանկացողների մեջ գերակշռում է 18-30 տարիքային խումբը: Տարիքի ավելացմանը համընթաց գիտելիքներ ստանալու ցանկությունը նվազում է:

## 5. Եզրակացություններ և երաշխավորություններ

- Չնայած որոշակի դրական շարժընթացին և գենդերային քաղաքականության՝ ընդունված հայեցակարգին, ՀՀ իշխանությունների վարած քաղաքականությունը մնում է գենդերապես չեզոք: Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման ուղղությամբ մինչ այժմ արված քայլերը բավարար չեն:
- Հանրային կարծիքում աշխատաշուկայի բաժանումը «կանացի» և «տղամարդկային» ոլորտների դեռևս մնում է, ինչը պայմանավորված է գենդերային կարծրատիպերով և աշխատաշուկայում առկա հորիզոնական և ուղղահայաց խտրազատումով: ՀՀ իշխանությունների այդ ուղղությամբ վարվող քաղաքականությունը խիստ անբավարար է և չի նպաստում դրական փոփոխությունների առաջացմանը:
- Հայաստանում քաղաքական առաջխաղացման հարցում կանանց և տղամարդկանց հնարավորությունները հավասար չեն: Քաղաքական և բիզնես կարիերայում տղամարդկանց առավելությունները ակնհայտ են, սակայն աստիճանաբար հանրային կարծիքը դրական վերաբերմունքի դրսևորման միտումներ է ցուցաբերում այդ ոլորտներում կանանց կարիերայի նկատմամբ: Հանրային կարծիքն ավելի բարյացակամ է բիզնես ոլորտում կարիերա անող կանանց նկատմամբ, քան քաղաքականության:
- Մեծացել է այն մարդկանց թիվը, ովքեր կարծում են, որ կնոջ հաջող կարիերան դրականորեն է անդրադառնում ընտանիքի սոցիալական կարգավիճակի և հեղինակության վրա: Դրա հետ մեկտեղ հարցվողների 1/3-ը այնուամենայնիվ կարծում է, որ կնոջ կարիերայի արդյունքում ամուսնու վարկն ու ընտանեկան կարգավիճակը տուժում են: Կանանց հարաբերական պասիվությունը կարիերայի հարցում ավելի շատ կապվում է ընտանեկան հիմնախնդիրներով ծանրաբեռնվածության և կանանց բարդույթների, քան ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայության և պետական քաղաքականության հետ:
- ՀՀ-ում մասնակցային և ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների իրագործումը ենթադրում է «ՀՀ Գենդերային քաղաքականության պետական հայեցակարգով» նախատեսվող

միջոցառումների իրականացում, ինչը նախ և առաջ նախատեսում է արդյունավետ ազգային մեխանիզմի ձևավորում, կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին օրենքի ընդունում:

- Հարկավոր է լայնորեն կիրառել քվոտաների և «աջակցող գործողությունների» մեխանիզմները: Անհրաժեշտ է, որ կառավարությունը, օգտագործելով տարբեր լծակներ, ներազդի քաղաքական կուսակցությունների վրա, քանի որ ապացուցված է, որ կուսակցությունները կանանց դեպի որոշումների կայացման մակարդակ տանող ամենաարդյունավետ ինստիտուտն են:
- Քարոզչական, կրթական ծրագրերի համատեքստում կարևոր է գենդերային թեմատիկայով ուսուցողական դաընթացներ կազմակերպել ոչ միայն կանանց, այլև տղամարդկանց համար, ԶԼՄ-ներով իրականացնել գենդերային կարծրատիպերի հաղթահարման, կին ղեկավարի դրական կերպարի ձևավորման մարտավարություն:
- Կառավարությունը պետք է ընդունի և գործողության մեջ դնի աշխատանքի շուկայում սեռի հատկանիշով խտրականության յուրաքանչյուր ձևի դեմ ուղղված օրենսդրությունը, խրախուսի այն գործատուներին, որոնք իրենց կառույցներում միջոցներ կձեռնարկեն բարձր պաշտոններում կանանց թիվը մեծացնելու, ընտանեկան պարտականությունները մասնագիտական գործունեության հետ համատեղելու, ընդուպ մինչև աշխատանքի ճկուն գրաֆիկների ստեղծելու համար:
- Կարևոր է, որ պետական կառավարման ոլորտը, գործադիր իշխանության մարմիններն օրինակ ծառայեն ղեկավար պաշտոններում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացուցչության ապահովման և պաշտոնեական առաջխաղացման հավասար հնարավորությունների ընձեռման հարցում:

## ՄԱՍ III. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ. ԳՈՐԾՈՆՆԵՐ, ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ, ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ

### 1. Հաղթահարվա՞ծ է արդյոք կանանց նկատմամբ խտրականությունը Հայաստանում

Խտրականության հարցը առաջնահերթ նշանակություն ունի գենդերային իրավիճակը գնահատելու համար: 1993 թ. Հայաստանը վավերացրել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW/ԿՆԽՎԿ): Այդպիսով կոնվենցիան ազգային օրենսդրության մաս կազմեց, իսկ պետությունը խտրականության վերացման և ապագայում այն արգելելու ուղղությամբ որոշակի պարտավորություններ ստանձնեց: ՀՀ Սահմանադրությունը (հոդված 14.1) արգելում է յուրաքանչյուր խտրականություն, այդ թվում՝ սեռի հատկանիշով:
Թեև դժվար է գերագնահատել օրենսդրության մեջ կանանց նկատմամբ խտրականության արգելման դրույթի ամրագրման նշանակությունը, այդուհանդերձ, իրական կյանքում կարող են հանդիպել խտրականության դրսևորումներ, հատկապես՝ անուղղակի և քողարկված խտրականության:

Սոցիոլոգիական հետազոտությունների և հասարակական կարծիքի հարցախույզների արդյունքները, տարբեր մեթոդներով իրական վիճակի ուսումնասիրությունը, վիճակագրական տվյալների հավաքագրումը, կառավարության հաշվետվությունների և CEDAW կոմիտեի այլընտրանքային զեկույցների քննությունը հստակ վկայում են, որ և ոչ մի երկրում կանանց նկատմամբ խտրականությունը դեռևս լիովին չի հաղթահարվել: Հայաստանը բացառություն չէ: Բազմաթիվ հետազոտությունների, հարցումների, մշտադիտարկումների, պաշտոնական հաշվետվությունների, ԶԼՄ-ների հրապարակումների տվյալները վկայում են դե յուրե և դե ֆակտո հավասարության միջև առկա անջրպետի և տղամարդկանց ու կանանց հնարավորությունների անհավասարության մասին:

Սակայն, ըստ խտրականության մասշտաբների, դրա դրսևորման ձևերի ու հաճախականության և վերացման միջոցների, երկրներն էապես տարբեր են:
Ամեն դեպքում քաղաքական կամք է անհրաժեշտ, որը կարող է նյութականանալ կանանց նկատմամբ խտրականության վերացմանն ուղղված հետևողական ջանքերով ու որոշակի միջոցներով և բարենպաստ սոցիալական միջավայր ստեղծել կանանց առաջընթացի համար: Ուստի պատահական չէ, որ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն հաստատակամորեն կոչ արեց Հայաստանին «ընդունել համապատասխան ազգային օրենսդրություն, որը կնախատեսի կանանց նկատմամբ խտրականության արգելք…, որը կներառի թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի խտրականությունը…, արագացնել գենդերային հավասարության մասին օրենքի նախագծի ընդունման ընթացակարգը և կանանց ու տղամարդկանց հավասարության սկզբունքն ամրագրել գենդերային հավասարության մասին օրենքի նախագծում»[36]:

Գենդերային խտրականության իրավիճակի ուսումնասիրության կարևոր մեթոդներից է սոցիոլոգիական հարցախույզը, քանի որ այն հնարավորություն է տալիս պարզելու տարբեր սոցիալական խմբերի կարծիքները այդ երևույթի առկայության և սրության աստիճանի մասին, այն ոլորտները, որտեղ խտրականությունն առավել հաճախ կամ առավել ակնառու է դրսևորվում:
Այդ կապակցությամբ բավական հետաքրքրական են սույն հետազոտության շրջանակում հարցվածների կարծիքները: Հարկ է նշել, սակայն, որ բնավ ոչ բոլոր հարցվածները համարժեք պատկերացում ունեն, թե ինչ է խտրականությունը կանանց նկատմամբ: Ցավոք, Հայաստանի օրենսդրության մեջ մինչև հիմա այդ երևույթի սահմանում գոյություն չունի[37]: Այսուհանդերձ, հանուն արդարության պետք է նշել, որ ինչպես ցույց է տվել օրենսդրության և ԿՆԽՎ կոնվենցիայի

---

[36] ԿՆԽՎ կոմիտեի եզրափակիչ դիտողություններ: Փաստաթուղթ CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 (2 փետրվարի 2009 թ.), էջ 3:
[37] Հայաստանի երրորդ և չորրորդ միացյալ զեկույցի կապակցությամբ, որը քննարկվել է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի 43-րդ նստաշրջանում (2009 թ. հունվար-փետրվար), կոմիտեն իր եզրափակիչ դիտողություններում ափսոսանք հայտնեց «մասնակից պետության օրենսդրության մեջ կանանց նկատմամբ թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի խտրականության հստակ և համակողմանի, կոնվենցիայի 1-ին հոդվածին համապատասխան սահմանման բացակայության առնչությամբ»: Տե՛ս ԿՆԽՎ կոմիտեի եզրափակիչ դիտողություններ: Փաստաթուղթ CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 (2 փետրվարի 2009 թ.), էջ 3:

գործնական իրականացման փորձագետների կատարած ուսումնասիրությունը, «կանանց նկատմամբ խտրականություն» եզրույթի որոշակի իրավական սահմանում տրվում է միայն Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մի քանի երկրներում[38]:

Կարելի է ենթադրել, որ հարցվածների մեծ մասը նախ և առաջ նկատի է ունեցել անհավասար վերաբերմունքը, անհավասար հարաբերությունը և անհավասար հնարավորությունները:

«ՀՀ-ում գոյություն ունի՞ կանանց նկատմամբ խտրականություն» հարցին ընտրանքի բոլոր հարցվածների 46,4%-ը դրական է պատասխանել, 41,1%-ը՝ բացասական, իսկ 12,5%-ը դժվարացել է պատասխանել: Ինչպես և կարելի էր սպասել, այն անձանց տոկոսը, ովքեր կարծում են, որ խտրականություն կա, կանանց շրջանում ակնհայտորեն ավելի մեծ է, քան տղամարդկանց (համապատասխանաբար՝ 49,1% և 43,3%), և ավելի փոքր է հարցվածների այն խմբում, ովքեր կարծում են, որ խտրականություն չկա (համապատասխանաբար՝ 37,7% և 45,1%): Եթե տղամարդկանց համար դա ավելի շատ տեսական հարց է (եթե չասենք՝ «վերացական»), ապա շատ կանանց համար այն անցնում է սեփական և բնավ ոչ միշտ դրական փորձի պրիզմայով: Թեպետ տվյալ դեպքում կանանց կարծիքը փոքր-ինչ ավելի ծանրակշիռ է թվում, հարկ է նշել, որ սկզբունքորեն տարբերությունն այնքան էլ էական չէ (ընդամենը 6-7%): Այլ կերպ ասած՝ սեռի գործոնը տվյալ հարցի պատասխանը միանշանակ «թելադրողը», միանշանակ կանխորոշողը չէ: *Տես Գծապատկեր 1*:

*Գծապատկեր 1. «ՀՀ-ում գոյություն ունի՞ կանանց նկատմամբ խտրականություն»*




Երբ խոսքը հնարավորությունների անհավասարության մասին է (ինչը, ըստ էության, խտրականություն է), զգալիորեն ավելի մեծ տոկոսով հարցվածներ են նշում դրա առկայությունը տարբեր ոլորտներում (օրինակ՝ աշխատանքում առաջխաղացման հնարավորությունների առնչությամբ. եթե հարցվածների 29,3%-ը կարծում է, որ տվյալ ոլորտում տղամարդկանց և կանանց հնարավորությունները հավասար են, ապա 60,9%-ը համարում է, որ տղամարդկանց հնարավորություններն ավելի մեծ են):

Շատ հետաքրքիր և բավական անակնկալ է նաև այն, որ ըստ ստացված տվյալների՝ կրթության գործոնը նույնպես միանշանակ ազդեցություն չի թողնում հարցվածների կարծիքի վրա: Որպես կանոն՝ կանանց իրավունքների վիճակի, ներառյալ կանանց նկատմամբ խտրականության առկայության մասին իրազեկության և քննադատական գնահատականի մակարդակն ուղիղ համեմատական է հարցվողների կրթության մակարդակին:

Մեր հետազոտությունում այդ միտումը մասամբ խախտված է: Բանն այն է, որ Հայաստանում կանանց նկատմամբ խտրականության առկայության մասին հարցին դրական պատասխան

[38] Advancing Equal Rights for Women and Girls: The Status of CEDAW Legislative Compliance in Eastern Europe and Central Asia. New York, UNFPA, 2009, p. 9.

տվածների ամենաբարձր տոկոսը թերի միջնակարգ կրթություն ունեցողների շրջանում է (54,7%): Լրիվ միջնակարգ, թերի բարձրագույն և բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում տվյալ հարցին դրական են պատասխանել, համապատասխանաբար, 41,3%-ը, 47,9%-ը և 51,0%-ը:

Նման ոչ այնքան սովորական միտումի դրսևորման հարցում ներգործել են մի շարք գործոններ: Ըստ երևույթին, կարևոր է դեր է խաղացել հայ բնակչության կրթության դեռևս հարաբերականորեն բարձր մակարդակը (ըստ համաշխարհային չափանիշների): (Թերի միջնակարգ կրթություն ունեցող անձինք կազմում են ամբողջ ընտրանքի հարցվածների ընդամենը 4,4%-ը, լրիվ միջնակարգ կրթություն ունեցողները՝ 44,6%-ը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողները՝ 37,4%-ը: Նման սահմանափակ ենթազանգվածում պատահական շեղումների հավանականությունը կտրուկ մեծանում է:) Մյուս կողմից՝ կրթության նվազ բարձր մակարդակ ունեցող անձինք, որպես կանոն, աշխատում են պակաս սոցիալական պաշտպանվածություն ունեցող ոլորտներում (օրինակ՝ տնտեսության ոչ ֆորմալ հատվածում) և ավելի հաճախ են վկա դառնում կամ սեփական փորձով բախվում խտրականության դրսևորումների, այդ թվում՝ սեռի հատկանիշով:

Հարցվածների տարիքի տեսանկյունից գծագրվում է հետևյալ պատկերը: Եթե տվյալ հարցին դրական պատասխանածների տոկոսը փաստորեն նույնն է երեք տարիքային խմբերում՝ 31-45, 46-60, 61 և ավելի տարեկան (համապատասխանաբար՝ 44,5%, 45,9% և 44,0%), ապա ամենաերիտասարդ հարցվածների շրջանում (18-30 տարեկան) տոկոսը էապես բարձր է (50,0%): Քիչ հավանական է, որ ամենաերիտասարդ հարցվածները մյուսներից ավելի շատ հանդիպած լինեն խտրականության: Կարելի է ենթադրել, որ այդ խումբն ավելի քիչ է հակված հաշտվելու գենդերային կարծրատիպերի ու անհավասարության, գենդերային դերերի հայրիշխանական բաշխման և այլ իրողությունների հետ: Հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ վերջին 7-8 տարիներին, միջազգային կազմակերպությունների (նախ և առաջ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, ինչպես նաև Եվրոպայի Խորհրդի, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության և այլն), ինչպես նաև տեղի կանանց ՀԿ-ների ջանքերի շնորհիվ բազմաթիվ քարոզարշավներ են անցկացվել, իրականացվել են կրթական ու տեղեկատվական ծրագրեր և այլ միջոցառումներ, որոնք ուղղված են եղել նախ և առաջ երիտասարդությանը, առաջին հերթին՝ սովորող երիտասարդությանը: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի (ՀԿԿԱ) ջանքերի շնորհիվ, որոնք աջակցություն են գտել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, տեղի է ունեցել գենդերային կրթության ինստիտուցիոնալացում բարձրագույն դպրոցում, գենդերային թեմաներն աստիճանաբար մտնում են միջնակարգ դպրոց:

Այս բոլոր գործոնները չէին կարող ամենից շատ չազդել երիտասարդության վրա, որը նաև ավելի ակտիվորեն է ներգրավված սոցիալական ցանցերում և ավելի բաց է ժամանակակից առաջադեմ հայացքների ու գաղափարների համար:

Հայտնի է, որ բնակության վայրը հարցվողների կարծիքի վրա ազդելու առումով էական դեր է խաղում: Որպես կանոն, առավել տեղեկացված, իրազեկ, առաջադեմ հարցվողները հանդիպում են մեծ քաղաքներում, իսկ առավել անտեղյակները՝ գյուղական վայրերում: Սույն հետազոտության տվյալները ևս հաստատում են նշված օրինաչափությունը: Այսպես, եթե գյուղական բնակիչների 36,1%-ը նշել է, որ խտրականություն կա (այն դեպքում, երբ 45,9 %-ը համարում է, որ խտրականություն չկա), ապա քաղաքաբնակ հարցվածների շրջանում, բացառությամբ Երևանի, նրանք կազմում են 43,5% (և գրեթե նույնքան՝ 45,4%-ը համարում է, որ խտրականություն չկա): Իսկ մայրաքաղաքում 59,5%-ն է հաստատել խտրականության առկայությունը (և գրեթե երկու անգամ ավելի քիչ՝ 32,3%-ը ժխտել է):

Հետաքրքրություն են ներկայացնում նաև ստացված տվյալները զբաղվածության գործոնի տեսանկյունից: Դրանց համաձայն՝ բավական էական տարբերություն է նկատվում ոչ միայն վարձատրվող աշխատանքի ոլորտում զբաղվածների (45,4%-ը համարում է, որ ՀՀ-ում կանանց նկատմամբ խտրականություն կա) և գործազուրկների միջև (հարցվածների այս խմբում այդ կարծիքին է 53,6%-ը), այլև՝ և՛ գործազուրկների, և՛ հարցվածների մնացած խմբերի (որոնք զբաղված չեն վարձատրվող աշխատանքի ոլորտում) միջև: Վերջիններիս շրջանում փոքր-ինչ ցածր

է տոկոսը անաշխատունակ անձանց (41,7%) և ուսանողների (39,6%) խմբերում: Թոշակառուների և տնային տնտեսուհիների շրջանում նման կարծիք ունեցողների տոկոսը (համապատասխանաբար՝ 46,5% և 44,3%) փաստորեն համընկնում է այն անձանց տոկոսին, ովքեր զբաղված են վարձատրվող աշխատանքի ոլորտում:

Հավանաբար, գործազուրկները տվյալ հարցում «գենդերայնորեն զգայուն» են և ավելի լավ են տեղեկացված, այդ իսկ պատճառով նրանց շրջանում մեծ է այն մարդկանց տոկոսը, ովքեր դրական են պատասխանել վերոհիշյալ հարցին: Գաղտնիք չէ, որ աշխատանքի շուկայում կանայք տղամարդկանցից ավելի հաճախ և ավելի մեծ չափով են ենթարկվում խտրականության, հատկապես՝ աշխատանքի ընդունվելիս: Հարկ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ընտրանքում այն հարցվածների տոկոսը, ովքեր զբաղված են վարձատրվող աշխատանքի ոլորտում, կանանց դեպքում մեկուկես անգամ ավելի ցածր է, քան տղամարդկանց (համապատասխանաբար՝ 34,3% և 51,3%), և թեպետ պաշտոնապես տղամարդկանց շրջանում գործազուրկների տոկոսը կանանց համեմատությամբ ավելի բարձր է (համապատասխանաբար՝ 25,1% և 16,9%), իրականում հակառակն է. կանանց շրջանում դա թաքնված գործազրկություն է: Այսպես, ընտրանքում տղամարդկանց ընդամենը 0,7%-ն է զբաղված չվարձատրվող աշխատանքով տնային տնտեսության մեջ, մինչդեռ կանանց շրջանում՝ 30,3%-ը: Ակնհայտ է, որ թափուր աշխատատեղերի առկայության դեպքում այդ կանանցից շատերը կանցնեին վարձատրվող աշխատանքի ոլորտ, քանի որ նրանց միայն 3,0%-ի դեպքում է, որ **ամսական ընտանեկան եկամուտը** 200 հազար դրամից բարձր է, բայց 400 հազար դրամից ոչ ավելի (ընդհանուր առմամբ ընտրանքում հարցվածների **միայն** 7,1%-ի **ամսական ընտանեկան եկամուտն է** 200 հազարից ավելի), այն դեպքում, երբ տվյալ ընտրանքում ընտանիքների ավելի քան 70%-ի անդամների թիվը 4 և ավելի է, իսկ տնային տնտեսությունում չվճարվող աշխատանքով զբաղված հարցվածների 88,1%-ը (որոնցից 98,0%-ը՝ կանայք) ամուսնացած է, այսինքն՝ սեփական ընտանիքն ունի: Այլ կերպ ասած՝ ընտանիքների ճնշող մեծամասնության առջև ծառացած է գոնե նվազագույն կենսական պայմանների ապահովման խնդիրը, հետևաբար կանանց մեծ մասի համար վարձատրվող աշխատանքի խիստ անհրաժեշտություն կա: Սակայն աշխատատեղերի իսպառ բացակայությունը կամ պատշաճ աշխատատեղերի բացակայությունը (այսինքն՝ ոչ ֆորմալ տնտեսությունից դուրս, համարժեք աշխատավարձով և աշխատանքն ու ընտանեկան պարտականությունները համատեղելու հնարավորությամբ) ստիպում է շատ կանանց զբաղվել բացառապես տնային տնտեսությամբ, այսինքն՝ չվարձատրվող աշխատանքով:

Այնպես որ Հայաստանում կանանց նկատմամբ խտրականության առկայության մասին հարցին դրական պատասխան տվողների բարձր տոկոսը գործազուրկների և տնային տնտեսության մեջ զբաղվածների (ինչպես նաև թոշակառուների) շրջանում բացատրվում է այդ խմբերում կանանց զգալիորեն ավելի մեծ թվով, քան տղամարդկանց:

Այսպիսով, ինչպես պարզվում է, ըստ էության, չկա մի գործոն, որը միանշանակ պայմանավորեր հարցվածի դիրքորոշումը տվյալ հիմնախնդրի առնչությամբ: Ավելի շուտ գործ ունենք գործոնների համադրության հետ, որում, սակայն, տարբեր գործոններ տարբեր «կշիռ» ունեն իրենց ազդեցությամբ:

Հարկ է նշել նաև այն փաստը, որ գենդերային խտրականությունը բացասական ազդեցություն է ունենում առանձին մարդկանց կյանքի տարբեր կողմերի վրա: Օրինակ՝ այն նշվել է հարցվածների ակտիվ քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը խոչընդոտող գործոնների շարքում: Այդ գործոնին բաժին է հասել տվյալ հարցի բոլոր պատասխանների 3,0%-ը, ինչը քիչ չէ, եթե հաշվի առնենք, որ մնացած գործոններին բաժին է հասել մինչև 10%-ը, իսկ առավելագույն բարձր տոկոսը (15,8%)՝ ընտանեկան հոգսերին:

Ընդ որում, այն տարբեր կերպ է ազդում տղամարդկանց և կանանց վրա (պատահական չէ, որ այն որակվել է հենց գենդերային խտրականություն): Այդ գործոնը մատնանշող հարցվածների թվում կանանց տոկոսը երկուսուկես անգամ գերազանցում է տղամարդկանց տոկոսին (համապատասխանաբար՝ 71,0% և 29,0%):

Այսուհանդերձ, դրա տարբեր ձևերն ու դրսևորումները տարբեր «տեսակարար կշիռ» ունեն մասնավոր և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Այսպես, օրինակ՝ խտրականության

այնպիսի ցայտուն և աղաղակող դրսևորում, ինչպիսին կանանց նկատմամբ բռնությունն է, հարցվածների ճնշող մեծամասնության կարծիքով՝ քաղաքական կարիերայի ոլորտում կանանց համեմատաբար պասիվության պատճառներից չէ: (Բռնությանը բաժին է ընկել բոլոր գործոններին վերաբերող պատասխանների ընդամենը 1,5%-ը:)

Այսպիսով, տվյալ բաժնի արդյունքներն ընդհանրացնելով, կարելի է եզրակացնել.

(1) Տվյալները ցույց են տալիս, որ գենդերային խտրականությունն ընդհանուր առմամբ հասունացած սոցիալական հիմնախնդիր է: Այլ կերպ ասած, հստակ ըմբռնում կա, որ նման հիմնախնդիր գոյություն ունի, և այն անհրաժեշտ է լուծել:

(2) Հասարակության մեծ մասը հոգեբանորեն և «գաղափարապես» (աշխարհայացքով) պատրաստ է **անխտրականության** սկզբունքի լուրջ օրինակարգմանն ու հետևողական կենսագործմանը:

## 2. Ո՞ր ոլորտներում է առավելապես դրսևորվում կանանց նկատմամբ խտրականությունը

Քանի որ հարցվածների մեծ մասը դրական է պատասխանել Հայաստանում կանանց նկատմամբ խտրականության առկայության մասին հարցին, իմաստ ունի քննարկել այն հարցը, թե նրանց կարծիքով՝ որ ոլորտներում է այդ խտրականությունը առավելապես դրսևորվում:

Ըստ ստացված տվյալների՝ հասարակական կյանքում անվիճելի «առաջատարներ» են քաղաքական ընտրությունների համակարգը և պետական կառավարման ոլորտը (համապատասխանաբար՝ բոլոր պատասխանների 23,8%-ը և 23,7%-ը): Քաղաքական կուսակցություններին և աշխատանքային հարաբերություններին, համապատասխանաբար, բաժին է հասել 13,6%-ը և 11,6%-ը: Շատ հարցվածներ համարում են, որ խտրականություն է դրսևորվում բոլոր ոլորտներում (պատասխանների 11,4%-ը):

Ուշագրավ է, որ հարցվողների տեսանկյունից խտրականությունը մասնավոր ձեռներեցության ոլորտում (7,3%) դրսևորվում է 3 անգամ ավելի հազվադեպ, քան քաղաքական ընտրությունների համակարգում և պետական կառավարման ոլորտում, և 2 անգամ ավելի հազվադեպ՝ քաղաքական կուսակցությունների համեմատությամբ:

ՀԿ-ներին և կրթության ոլորտին բաժին է հասել պատասխանների աննշան տոկոսը (համապատասխանաբար՝ 3,9% և 2,5%):

**Կանանց և տղամարդկանց** կարծիքները հիմնականում համընկնում են՝ ընտրական համակարգին և քաղաքական կուսակցություններին առնչվող ոչ մեծ բացառությամբ. այն հարցվածների տոկոսը, ովքեր նշել են խտրականության առկայությունն այդ ոլորտներում, կանանց շրջանում 4-5 տոկոսային կետով ավելի բարձր է, քան տղամարդկանց շրջանում: Ընդ որում, քաղաքական կուսակցությունների անդամ տղամարդ հարցվածների շրջանում գրեթե 5 տոկոսային կետով ավելի շատ, քան կանանց շրջանում: Կարծիքների համապատասխանությունը զարմանալի չէ, քանզի հայտնի է, որ քաղաքական կուսակցությունների մեծ մասում տղամարդիկ չեն շտապում հրաժարվել խտրական գործելակերպից՝ ղեկավար պաշտոններում և ընտրությունների կուսակցական ցուցակների «անցողիկ» տեղերում կանանց առաջադրելու առումով:

Մյուս գործոնները (կրթություն, տարիք, բնակության վայր, այդ թվում՝ տարածաշրջանը, ՀԿ-ի կամ քաղաքական կուսակցության անդամություն) միանման ազդեցություն չեն թողնում, այդ թվում և վերը նշված ոլորտներում:

Ըստ հարցման արդյունքների՝ հասարակական կյանքի այն ոլորտների մասին, որտեղ կանանց նկատմամբ խտրականություն է դրսևորվում, **զբաղվածության** գործոնը միանշանակ չի ազդում հարցվածների կարծիքի վրա: Այսպես, հինգ ոլորտներում (ընտրություններ, քաղաքական կուսակցություններ, ՀԿ-ներ, մասնավոր ձեռներեցություն և աշխատանքային հարաբերություններ) աշխատանք ունեցող անձանց և գործազուրկների կարծիքները փաստորեն համընկնում են: Մնացած երեք դեպքերում տարբերությունը կազմում է 5-6 տոկոսային կետ. ընդ որում, խտրականության առկայությունը նշող հարցվածների տոկոսը բարձր է կրթության ոլորտի գործազուրկների և պատասխանի «բոլոր ոլորտներում» տարբերակի դեպքում, իսկ աշխատանք ունեցողների դեպքում բարձր է պետական կառավարման ոլորտում:

Տվյալ հարցի առնչությամբ **ՀԿ-ի անդամ** և ՀԿ-ի անդամ չհանդիսացող հարցվածների կարծիքները հիմնականում համընկնում են: Այն հազվադեպ ոլորտներում, որտեղ

տարբերություններ կան (ընտրությունների և մասնավոր ձեռներեցության), դրանք աննշան են (մոտ 4 տոկոսային կետ). ընդ որում այդ ոլորտներում խտրականության առկայությունը նշողների տոկոսը բարձր է ՀԿ-ների անդամների շրջանում:

**Կուսակցականության** գործոնն առավել էական ազդեցություն է թողնում. փաստորեն համընկնումներ չկան, իսկ տարբերությունները նվազագույնի են հասնում (մոտ 2-3 տոկոսային կետ) երեք դեպքում (մասնավոր ձեռներեցության ոլորտ, քաղաքական կուսակցություններ և «բոլոր ոլորտներում»): Տարբերությունները քաղաքական կուսակցությունների անդամների և անկուսակցականների միջև ավելի շոշափելի են, քան ՀԿ անդամության դեպքում: Այսպես, ընտրությունների և պետական կառավարման ոլորտներում խտրականության առկայությունը նշող հարցվածների տոկոսը 8-10 կետով ավելի բարձր է կուսակցությունների անդամների թվում, իսկ աշխատանքային հարաբերությունների, կրթության և ՀԿ-ների առնչությամբ՝ մոտ 4-5 տոկոսով բարձր է անկուսակցական հարցվածների շրջանում:

Բերված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ հարցվածների կարծիքով՝ Հայաստանում կանանց նկատմամբ խտրականությունն **առավել չափով** դրսևորվում է **քաղաքական և պետական կառավարման ոլորտներում, ավելի քիչ՝ աշխատանքային հարաբերությունների և ամենից քիչ՝ կրթության և ՀԿ-ների ոլորտներում**:

Եվս մի եզրակացություն, որ բխում է տվյալների վերլուծությունից. **ժողովրդագրական բնութագրիչները, որպես կանոն, տվյալ հարցի առնչությամբ էական ազդեցություն չեն ունենում հարցվածների կարծիքի վրա, դրանց ազդեցությունը միասեռ ու միանշանակ չէ և տատանվում ըստ** հասարակական կյանքի ոլորտի:

## 3. Գենդերային հավասարության ճանապարհի խոչընդոտները

Երկրի օրենսդրության, կառավարության և հիմնական քաղաքական ուժերի հռչակած գենդերային հավասարության հասնելու նպատակը ենթադրում է նախ և առաջ սեռի հատկանիշով խտրականության վերացում, կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ընձեռում և աստիճանաբար հավասար արդյունքների ապահովում, այսինքն՝ ձևական-իրավական (դե յուրե) հավասարությունը լրացնել փաստացի հավասարությամբ և հեռանկարում՝ սուբստանտիվ հավասարությամբ: Դա իր հերթին ենթադրում է օրենսդրության փոփոխություն (ներառյալ՝ ժամանակավոր հատուկ միջոցների ընդունում), ինչպես նաև ընդհանուր քաղաքականության և հասարակական կյանքի տարբեր ոլորտների համար որոշակի ռազմավարությունների մշակում և իրականացում, այդ թվում առաջնահերթ խնդիրների բացահայտում, առաջնայնությունների սահմանում, կարճաժամկետ և երկարաժամկետ գործողությունների պլանների և ծրագրերի ընդունում:

Ակնհայտ է, որ այդ ճանապարհին շատ խնդիրներ, դժվարություններ ու խոչընդոտներ կծագեն՝ և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ բնույթի: Թե՛ քաղաքական գործիչներն ու պաշտոնական անձինք, թե՛ փորձագետները, ամենօրյա աշխատողներն ու ակտիվիստները պետք է լավ իմանան ոչ միայն այդ բացասական գործոնները, այլև սոցիալական տարբեր շերտերի պատկերացումները դրանց մասին, որպեսզի արդյունավետ աշխատանքը կազմակերպեն՝ գենդերային հավասարության նկատմամբ դրական հասարակական կարծիք ձևավորելու, ինչպես նաև քաղաքացիների իրազեկության բարձրացման և գենդերային հայրիշխանական կարծրատիպերի հաղթահարման նպատակով:

Հարցման ընթացքում հարց է տրվել, թե Հայաստանում հատկապես ինչ գործոններ են խոչընդոտում հասարակական կյանքում գենդերային հավասարության հաստատմանը: Հարցվողները կարող էին ընտրել պատասխանի մինչև 4 տարբերակ: Նախ պետք է նշել, որ հարցվածների միայն 4,4%-ն է համարել, որ ոչինչ չի խանգարում գենդերային հավասարությանը[39]: Մնացած հարցվածները միջին հաշվով նշել են երկու ամենակարևոր գործոններ, որոնք խոչընդոտում են մեր հասարակության մեջ գենդերային հավասարության սկզբունքի

[39] Եվս 3,7%-ը դժվարացել է պատասխանել, իսկ 0,4%-ն ընտրել է պատասխանի «այլ» տարբերակը:

հաստատմանը: Ըստ ստացված տվյալների՝ այդ գործոնները կարելի է երեք խմբի բաժանել: Առաջին խմբում է հայտնվում հասարակության ավանդական, կարծրատիպային մտածողությունը:

Սրան բաժին է ընկնում բոլոր պատասխանների 31,1%-ը: Երկրորդ խմբի մեջ են մտնում այն գործոնները, որոնցից յուրաքանչյուրը ստացել է 2-2,5 անգամ ավելի քիչ տոկոս, քան «լիդեր» գործոնը: Այդպիսի գործոններ են ընտանիքում տղամարդկանց և կանանց միջև դերերի խիստ անհավասար բաշխումը (15,4%), սոցիալական դերերի առանձնահատկությունները՝ պայմանավորված կանանց և տղամարդկանց ֆիզիոլոգիական տարբերություններով (13,7%), սոցիալ-տնտեսական դժվարությունները (գործազրկություն, աղքատություն և այլն, 12,7%) և հասարակական հարաբերություններում տղամարդկանց ագրեսիվ դիրքորոշումը (12,3%): Երրորդ խմբում է «իրենց իսկ կանանց բացասական վերաբերմունքը գենդերային հավասարության գաղափարին»: Այս գործոնին բաժին է ընկել ընդամենը 6,4%: Այլ կերպ ասած՝ սրա «տեսակարար կշիռը» 2-2,5 անգամ ավելի ցածր է, քան երկրորդ խմբի գործոններինը և գրեթե 5 անգամ ցածր, քան «լիդեր» գործոնինը: ***Տես Գծապատկեր 2***.

***Գծապատկեր 2. Ինչ գործոններ են խանգարում հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց միջև հավասարության հաստատմանը***




Այս տվյալները ակներև վկայում են արդի հայ հասարակությունում նոր գենդերային մշակույթի անհրաժեշտության մասին: Պետական կառույցները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և տեղական հասարակական կազմակերպությունները, որոնք գենդերային հավասարության հասնելու ուղղությամբ գործողությունների ծրագրեր են մշակում ու իրականացնում, պետք է լուրջ ուշադրություն դարձնեն հարցվածների կարծիքներին, տեսնեն, թե ինչպես են դասակարգված գործոնները և ինչը պետք է առաջնայնություն դարձնեն իրենց գործունեության մեջ:

Ակնբախ է կրթական և տեղեկատվական ծրագրերի, խորհրդատվության, ինչպես նաև հասարակական կյանքում կանանց ներգրավման միջոցով ժողովրդավարական գենդերային մշակույթի ձևավորման ջանքերի մեծացման անհրաժեշտությունը: Հարկ է ուշադրություն դարձնել այն փաստին, որ հարցվածների զգալի մասը, արտացոլելով հասարակությունում գոյություն ունեցող պատկերացումները, անհիմն կերպով մեծ նշանակություն է վերագրում կանանց և տղամարդկանց ֆիզիոլոգիական տարբերություններին, որոնք էլ պայմանավորում են սոցիալական դերերի առանձնահատկությունները: Անկասկած, ֆիզիոլոգիական տարբերություններ կան և որոշ օբյեկտիվ ազդեցություն ունենում են: Բայց ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, շատ գենդերային դերեր պարզապես հիմնված են ավանդական պատկերացումների և սպասումների վրա և ֆիզիոլոգիական տարբերությունների հիմք չունեն: Մի շարք սոցիալական և մասնագիտական

դերեր, որոնք դարեր շարունակ համարվել են բացառապես  արական (օրինակ՝ բժշկության և կրթության ոլորտներում), շատ հասարակություններում աստիճանաբար գենդերայնորեն չեզոք են դարձել, իսկ  բուն ոլորտները հաճախ իգականացել են: Գիտությունը և հասարակական փորձը ցույց են տվել «անատոմիան ճակատագիր է» դրույթի՝ ֆրոյդիզմի այդ առանցքային դրույթներից մեկի սնանկությունը:

Բայց այդ ջանքերը, իրենց ողջ նշանակությամբ հանդերձ, սահմանափակ արդյունք կտան, եթե քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում չներառվի գենդերային բաղադրիչը[40]: Սոցիալական անհավասարությունը, այդ թվում և գենդերային անհավասարությունը վերարտադրվում է անհամաչափ իշխանական հարաբերությունների միջոցով: Այն կարող է հաղթահարվել միայն քաղաքական և տնտեսական հնարավորությունների ընդլայնման շնորհիվ, տվյալ դեպքում՝ կանանց հնարավորությունների (այսպես կոչված «empowerment»), նրանց քաղաքական և տնտեսական գործունեության մեջ ներգրավելու միջոցով:

## 4. Վերաբերմունքը կանանց քաղաքական ազդեցության մեծացման նկատմամբ

Գենդերային հավասարությունը իրավական նորմ է, մարդու հիմնական իրավունքներից մեկը, առաջնային ժողովրդավարական արժեք, կայուն քաղաքական և տնտեսական զարգացման և սոցիալական առաջընթացի նախադրյալ[41], ինչպես նաև սոցիալական արդարության հասնելու նախապայման: Այսպիսով, գենդերային հավասարությունն ինքնին արժեք լինելով, ունի նաև գործիքային նշանակություն: Այլ կերպ ասած՝ գենդերային հավասարության հասնելու ջանքերը օգուտ են բերում հասարակությանը:

Հարցման ընթացքում մենք փորձել ենք վեր հանել, թե ինչ կարող է տալ (և ինչ չափով) գենդերային հավասարության հասնելու այնպիսի մի քայլ, ինչպիսին պետական կառավարման վերին օղակներում կանանց թվի մեծացումն է:

Նախ և առաջ հարկ է նշել, որ բոլոր պատասխանների ոչ լրիվ 11%-ն է ընկնում թերահավատներին (8,0%՝ «ոչինչ չի փոխվի») և հոռետեսներին (ընդամենը 2,8%՝ «կհանգեցնի ավելի բացասական փոփոխությունների»): Միաժամանակ հատկանշական է նաև, որ շատ փոքր է նրանց տոկոսը, ովքեր դժվարացել են պատասխանել տվյալ հարցին (բոլոր պատասխանների ընդամենը 3,9%-ը): Այլ կերպ ասած՝ հարցվածների ճնշող մեծամասնությունը վստահաբար կարծում է, որ պետական կառավարման վերին մակարդակում կանանց ներկայացվածության ընդլայնումը դրական հետևանքներ կունենա:

Այդ հետևանքները հերթագայում են ըստ հարցվածների նախապատվությունների, որոնցից յուրաքանչյուրը միջին հաշվով ընտրել է պատասխանի երկու տարբերակ: Միանգամայն պայմանականորեն կարելի է առանձնացնել պատասխանների 4 խումբ՝ ըստ հարցվածների շրջանում տարածվածության աստիճանի:

«Լիդերը», անվիճելիորեն, այն պնդումն է, որ պետական կառավարման վերին օղակներում կանանց թվի մեծացման արդյունքում կամրապնդվի սոցիալական արդարությունը կանանց նկատմամբ. սրան բաժին է հասել բոլոր պատասխանների 21,1%-ը:
Բոլոր պատասխանների բավական բարձր տոկոսս բաժին է ընկնում (17,4%) այն պնդմանը, թե քաղաքական գործիչներն առավել զուսպ կդառնան, իսկ լարված քաղաքական հարաբերությունները կմեղմանան:

---

[40] ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի փորձագետներն անցկացված հետազոտության արդյունքում եկել են այն եզրակացության, որ  «ռազմավարությունների ձևավորման գործընթացում գենդերային չափման ներառումը դեռևս բավարար չափով և արդյունավետ չի արվում» ոչ միայն ԱՊՀ երկրներում, այլև Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում: Տե՛ս Enhancing Women's Political Participation: A Policy Note for Europe and the Commonwealth of Independent States. Bratislava, UNDP RBEC, 2010, էջ 2:

[41] «Մի կողմից՝ կանանց և տղամարդկանց հավասարությունը դիտվում է որպես մարդու իրավունքների հիմնախնդիր, մյուս կողմից՝ որպես սոցիալական կողմնորոշմամբ կայուն զարգացման նախադրյալ և ցուցիչ»: Տե՛ս "Concepts and definitions." UN Entity for Gender Equality and Empowerment of Women. http://www.un.org/womenwatch/osagi/conceptsandefinitions.htm

Հաջորդ խմբում են այն կարծիքները, թե քաղաքականությունն ավելի բարոյական ու մարդասիրական կդառնա (13,9%), և կմեծանա վստահությունը քաղաքական կառույցների նկատմամբ (13,0%):

Ցանկը եզրափակում են այն պնդումները, թե պետական կառավարման համակարգի որոշումների ընդունման մակարդակում կանանց թվի աճը կնպաստի, նախ, քաղաքական երկխոսության մեջ փոխզիջման և հանդուրժողականության սկզբունքի արմատավորմանը (10,5%), և երկրորդ՝ այդ համակարգում կոռուպցիայի նվազմանը (9,0%):

Միանգամայն կանխատեսելի էր, որ տղամարդկանց և կանանց կարծիքները մեծ մասամբ չէին համընկնում (բացառությամբ քաղաքական հարաբերությունների լարվածության մեղմացման, կառավարման համակարգում կոռուպցիայի նվազման վրա կանանց քանակական ներկայացվածության ընդլայնման ազդեցության գնահատականի, նվազ չափով՝ քաղաքական կառույցների նկատմամբ վստահության աճի): Կին հարցվածների շրջանում թերահավատների և հոռետեսների տոկոսը (համապատասխանաբար՝ 14,0% և 4,5%) զգալիորեն ավելի ցածր է տղամարդկանց համեմատությամբ (համապատասխանաբար՝ 20,0% և 7,3%):

Մնացած բոլոր դեպքերում կին հարցվածները մեծապես հակված են դրական գնահատելու կանանց թվի ազդեցությունը պետական կառավարման վերին օղակներում: Առանձնապես նկատելի է տարակարծությունը պատասխանի «կամրապնդվի սոցիալական արդարությունը կանանց նկատմամբ» (կանանց շրջանում՝ 47,5%, իսկ տղամարդկանց՝ 39,6%) և «քաղաքականությունն ավելի բարոյական և մարդասիրական կդառնա» (համապատասխանաբար՝ 32,5% և 24,9%) տարբերակների դեպքում:

Ինչպես վկայում են ստացված տվյալները, տարիքի գործոնը փաստորեն չի ազդում հարցվածների վերաբերմունքի և դիրքորոշման վրա. տոկոսային կետերի տարբերությունն այնքան աննշան է, որ կարող է վերագրվել վրիպակի: Միակ բացառությունն այն է, որ հարցվածների ամենաերիտասարդ խմբում (18-30 տարեկան) թերահավատների տոկոսը (12,6%), որոնց կարծիքով պետական կառավարման վերին մակարդակում կանանց մեծ ներկայացվածությունը ոչինչ չի փոխի, զգալիորեն ավելի ցածր է, քան մյուս երեք տարիքային խմբերում (17,0%՝ 31-45 տարեկան, 19,6%՝ 46-60 տարեկան և 19,7%՝ 60 և ավելի տարեց հարցվածների շրջանում):

Ինչ վերաբերում է **կրթությանը**, ապա դրա մակարդակը միանշանակ ազդեցություն չի թողնում հարցվածների կարծիքի վրա. այդ գործոնի ազդեցության որևէ օրինաչափություն չի նկատվում:

Ինչ վերաբերում է **քաղաքաբնակ** և **գյուղաբնակ** հարցվածներին, ապա վերջիններիս շրջանում դրական ազդեցություն նշողների տոկոսը 10-15 կետով ավելի բարձր է, քան քաղաքաբնակ հարցվածների շրջանում, բացառությամբ քաղաքական երկխոսության մեջ փոխզիջման և հանդուրժողականության սկզբունքի, որի դեպքում երկու խմբերում էլ տոկոսը նույնն է (մոտ 22%):

**ՀԿ-ի** կամ **քաղաքական կուսակցության անդամության** գործոնը հստակ կապված է վերը նշված դրական ազդեցության մասին կարծիքի հետ: ՀԿ-ների կամ քաղաքական կուսակցությունների անդամների և համակիրների շրջանում հարցվածների տոկոսը, ովքեր այդ կարծիքին են, ավելի բարձր է (5-13 տոկոսային կետով), քան նրանց, ովքեր ՀԿ անդամ չեն (ոչ մեծ բացառությամբ կոռուպցիայի վերաբերյալ հարցի դեպքում):

Այսպես, օրինակ, ՀԿ-ների անդամների և ՀԿ-ների համակիրների շրջանում համապատասխանաբար 53,2%-ը և 53,0%-ը կարծում է, որ պետական կառավարման վերին օղակներում կանանց թվի մեծացման շնորհիվ կանանց նկատմամբ սոցիալական արդարություն կհաստատվի, մինչդեռ ՀԿ-ի անդամ չհանդիսացողների շրջանում՝ 39,9%-ը: (Կուսակցությունների անդամների, համակիրների և անկուսակցականների դեպքում՝ համապատասխանաբար 48,4%, 53,1% և 38,2%:)

ՀԿ-ների անդամների 29,0%-ը և համակիրների 38,8%-ը կարծում են, որ այդ թվի մեծացման շնորհիվ կմեծանա վստահությունը քաղաքական կառույցների նկատմամբ, մինչդեռ ՀԿ անդամ չհանդիսացող հարցվածների շրջանում այդ կարծիքին է 22,7%-ը: (Կուսակցությունների

անդամների ու համակիրների և անկուսակցականների համապատասխան տոկոսները՝ 30,5%, 39,7% և 19,7%):

Բացահայտված միտումը հաստատվում է նաև «հոռետեսների» (հարցվածներ, ովքեր կարծում են, թե դա «ավելի բացասական փոփոխությունների կհանգեցնի») և «թերահավատների» (ովքեր կարծում են, թե իշխանության վերին էշելոններում կանանց ավելի մեծ ներկայությունը «ոչինչ չի փոխի» ) տվյալներով: ՀԿ անդամ, համակիր և ոչ անդամ հարցվածների շրջանում առաջին կարծիքի կողմնակիցների տոկոսը համապատասխանաբար կազմում է 4,8%, 3,9% և 6,5% (կուսակցությունների անդամների, համակիրների և անկուսակցականների դեպքում՝ համապատասխանաբար 3,1%, 4,3% և 7,0%): ՀԿ անդամ, համակիր և ոչ անդամ հարցվածների շրջանում երկրորդ կարծիքի կողմնակիցների տոկոսը համապատասխանաբար կազմում է 12,9%, 8,9% և 19,9% (կուսակցությունների անդամների, համակիրների և անկուսակցականների դեպքում՝ համապատասխանաբար 15,6%, 9,9% և 20,6%):

Այլ կերպ ասած, ՀԿ-ների կամ կուսակցությունների անդամների և այդ կառույցների համակիրների շրջանում «թերահավատների» և «հոռետեսների» մասնաբաժինը 1,5-2 անգամ ավելի ցածր է, քան ՀԿ-ների կամ կուսակցությունների անդամ չհանդիսացող հարցվածների շրջանում:

Այսպիսով, ընդհանուր առմամբ հարցվածների զգալի մասը համարում է, որ պետական կառավարման վերին օղակներում կանանց ներկայացվածության ընդլայնման պարագայում սոցիալական և քաղաքական հետևանքները դրական կլինեն: Ինչպես վերը նշվեց, բոլոր պատասխանների ոչ լրիվ 11%-ն է ընկնում չեզոք կամ բացասական կարծիքներին: Կարելի է եզրակացնել, որ հարցվածների նշանակալի մասը (իսկ երբեմն և հարաբերական մեծամասնությունը) կողմ է երկրում քաղաքական և այլ որոշումների ընդունման մակարդակում կանանց թվի մեծացմանը:

Բայց և այնպես, ամեն ինչ չէ, որ պարզ ու միանշանակ է: Զգալի թվով հարցվածներ հանդես են գալիս պետական իշխանության բարձր պաշտոններում կանանց ներկայության ընդլայնման օգտին, բայց ոչ բոլոր պաշտոններում: Հարցվածները բավական տարբերակված մոտեցում են ցուցաբերում՝ պատասխանելով այն հարցին, թե ինչ ղեկավար պաշտոններում կուզենային տեսնել կանանց և ինչ պաշտոններում՝ ոչ:

*Աղյուսակ 1. Կանանց կողմից զբաղեցված լինելու ընդունելիության (ցանկալիության) աստիճանը*

| | Այո | Ոչ |
|---|---|---|
| ՀՀ Նախագահ | 28,7% | 71,3% |
| ԱԺ նախագահ | 45,1% | 54,9% |
| Վարչապետ | 34,0% | 66,0% |
| ԱԺ պատգամավոր | 82,2% | 17,8% |
| ՀՀ նախարար | 76,8% | 23,2% |
| Մարզպետ | 46,3% | 53,8% |
| Քաղաքապետ | 48,6% | 51,4% |
| Գյուղապետ | 47,9% | 52,1% |
| Համատիրության ղեկավար | 67,3% | 32,8% |

Ինչպես տեսնում ենք, աղյուսակում նշված պաշտոնները, ըստ հարցվածների համար կանանց կողմից զբաղեցված լինելու ընդունելիության (ցանկալիության) աստիճանի, բաժանվում են երեք խմբի:

Առաջին խմբի համար (բոլոր հարցվածների մինչև մեկ երրորդը) ընդունելի է, որ կինը զբաղեցնի երկրի նախագահի կամ վարչապետի պաշտոնը:

Երկրորդ խումբը՝ հարցվածների գրեթե կեսը, պատրաստ է կնոջ տեսնելու քաղաքապետի, գյուղապետի, մարզպետի և անգամ Ազգային ժողովի նախագահի պաշտոնում:

Երրորդ խումբը կուզենար կնոջ տեսնել համատիրության (հարցվածների մեծ մասը) և անգամ ԱԺ պատգամավորի (հարցվածների ճնշող մեծամասնությունը) պաշտոնում:

Այլ կերպ ասած, հարցվածների զգալի մեծամասնության կարծիքով կանայք չեն համապատասխանում միայն գործադիր իշխանության բարձրագույն պաշտոններին: Ընդ որում, նշանակալի բացառություն է նախարարի պաշտոնը, իսկ գործադիր իշխանության մի շարք պաշտոններ կանանց զբաղեցնելն արդեն անընդունելի չի համարվում հարցվածների կեսի համար: Այսպիսով, առհասարակ պետական և քաղաքական կառավարման ոլորտում, ներառյալ՝ իշխանության օրենսդիր ու գործադիր ճյուղերում, գենդերային հավասարակշռության հասնելու քաղաքականության համար սոցիալական աջակցության լուրջ ներուժ գոյություն ունի: Տարօրինակ (եթե չասենք՝ «պարադոքսային») իրավիճակ է ստեղծվում. հասարակությունն ընդհանուր առմամբ ավելի առաջադեմ և նվազ պահպանողական է, քան քաղաքական «էլիտայի» մեծ մասը: Նման իրավիճակ չէր կարող լինել ավելի ժողովրդավարական սոցիումում, որտեղ իշխանությունը հաշվետու է հասարակությանը և հետևաբար՝ ավելի զգայուն հասարակական կարծիքի և քաղաքացիների պատկերացումների նկատմամբ:

Հետազոտության մեջ փորձ է արվել որոշակիացնելու հարցվածների ընդհանուր պատկերացումներն ու կարծիքները՝ հնարավորություն տալով նրանց տարածել դրանք սեփական ընտանիքի վրա: Մի բան է, երբ հարցվողները դատողություն են անում վերացարկված (զուտ վերբալ վարքագիծ), և միանգամայն այլ բան, երբ իրավիճակը մոդելավորում են իրենց համար (քայլ դեպի իրական վարքագիծ): Ուստի նրանց հարց է տրվել՝ խորհուրդ կտայի՞ն իրենց ընտանիքի կին անդամին (կնոջը, մորը, քրոջը կամ դստերը) իր թեկնածությունն առաջադրել ստորև նշված ընտրովի պաշտոնների համար:

*Աղյուսակ 2 . Խորհուրդ կտայի՞ն իրենց ընտանիքի կին անդամին (կնոջը, մորը, քրոջը կամ դստերը) իր թեկնածությունն առաջադրել ստորև նշված ընտրովի պաշտոնների համար*

| | Այո | Ոչ | Դժվարանում եմ պատասխանել |
|---|---|---|---|
| ՀՀ Նախագահ | 34,3% | 60,2% | 5,6% |
| Ազգային ժողովի պատգամավոր | 53,4% | 41,6% | 5,0% |
| Տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար | 48,0% | 46,2% | 5,8% |
| Համատիրության ղեկավար | 49,5% | 41,3% | 9,2% |

Համադրելով այս և նախորդ հարցերի պատասխանների տվյալները՝ կարելի է ասել, որ միայն մի դեպքում են հարցվածների կարծիքները համընկնում՝ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի պաշտոնի (այսինքն՝ քաղաքապետի կամ գյուղապետի): Շատ դժվար է բացատրել գրեթե 6 տոկոսային կետով այն հարցվածների բաժնեմասի մեծացումը, ովքեր դրական են պատասխանել երկրի նախագահի պաշտոնում ընտանիքի կին անդամի թեկնածությունն առաջադրելու վերաբերյալ հարցին[42]: Դա պետության ամենաբարձր պաշտոնն է, և եթե անգամ մի կողմ թողնենք երկրում ազատ և արդար ընտրությունների անցկացման հարցը (իսկ Հայաստանում

[42] Այդ տարբերությունը բացատրվում է նախ և առաջ այն կին հարցվածների զգալիորեն մեծ տոկոսով (37,7%), ովքեր պատրաստ են ընտանիքի կին անդամին խորհուրդ տալ իր թեկնածությունը առաջադրելու նշված պաշտոնի համար և, հնարավոր է, փոքր-ինչ ավելի զգայականորեն են վերաբերվել հարցին: Տղամարդիկ ավելի կշռադատված են գնահատում իրավիճակը, և նրանց շրջանում այն հարցվածների բաժնեմասը, ովքեր դրական են արտահայտվել տվյալ հարցի կապակցությամբ (30,2%), փաստորեն համընկնում է նախորդ հարցի պատասխանի միջին թվին (28,8%):

անկախություն ձեռք բերելուց հետո անցած ամբողջ ժամանակահատվածում դեռ ոչ մի անգամ նման ընտրություններ չեն եղել), միանգամայն ակնհայտ է, որ աիռելի քաղաքական և մասնագիտական փորձ և քաղաքական ու ֆինանսական լայն աջակցություն է անհրաժեշտ, որպեսզի թեկնածությունդ առաջադրես այդ պաշտոնի համար: Այդ հակասության հնարավոր բացատրություններից մեկը կարող է լինել այն, որ անհաջող ընտրությունների շարքը և շատ ավելի անհաջող կադրային նշանակումները տարբեր մակարդակներում հանգեցրել են այն պատկերացումների վերածնմանը, թե «յուրաքանչյուր խոհարարուհի կարող է պետություն կառավարել»: Եթե իրոք այդպես է (թեկուզ մասամբ), ապա դա երկրին և հասարակությանը որևէ լավ բան չի խոստանում թե՛ ժողովրդավարացման, թե՛ կայուն զարգացման և սոցիալական արդարության և թե՛ գենդերային հավասարության հասնելու առումով:

Համատիրության ղեկավարի պաշտոնի նվազ գրավչությունը ընտանիքի անդամի, քան առհասարակ կնոջ համար, կարելի է բացատրել նրանով, որ եթե երկրորդ դեպքում խոսքն առնվազն հավասարության և սոցիալական աջակցության մասին է, ապա առաջին դեպքում հարցը որոշակի հարթության վրա է: Բացի այն, որ համատիրության ղեկավարին անհրաժեշտ են գիտելիքներ և անձնական որակներ (շփվելու, նախաձեռնելու ունակություններ, ճկունություն և այլն), այդ պաշտոնը շատ ժամանակ և ուժեր է խլում. բացի այդ, կապված է կոռուպցիոն մեծ ռիսկերի հետ:

Նույնը հիմնականում կարելի է ասել ԱԺ պատգամավորի առնչությամբ: Այս դեպքում գումարվում են իրական մտավախություններ, որ ընտանիքի կին անդամն «կեղտոտ» քաղաքական պայքարի մեթոդների թիրախ, գուցեև զոհ դառնա, ինչը չի կարող չանդրադառնալ նաև ընտանիքի անդամների վրա:

Այսուհանդերձ կարելի է արձանագրել, որ առնվազն դրվում են ժողովրդավարական գենդերային մշակույթի հիմքերը, որն արդեն դուրս է մղում ավանդական հայրիշխանական պատկերացումները: Սակայն, թեպետ առաջընթացն ակնբախ է, գործընթացն ընդհանուր առմամբ շատ հակասական է:

Այսպես, այն հարցին, թե քաղաքական կառավարման համակարգի պաշտոնի թեկնածուների հավասար որակների դեպքում ո՞ւմ կտային իրենց քվեն՝ տղամարդո՞ւ, թե՞ կնոջ, հարցվածների 19,2%-ը պատասխանել է հօգուտ կանանց, իսկ 48,1%-ը, այսինքն՝ 2,5 անգամ ավելի, տղամարդկանց օգտին: Հարկ է նշել, սակայն, որ հարցվածների բավական մեծ տոկոսի համար (27,9%) միևնույն է, թե ում օգտին է քվեարկում՝ կնո՞ջ, թե՞ տղամարդու: Այսինքն՝ 10 հարցվածից 3-ը գենդերային չեզոք դիրքորոշում ունեն, ինչն ինքնին արդեն դրական նշան է:

Հնարավոր է, որ այն հարցվածների ոչ այնքան բարձր տոկոսը, ովքեր կուզենային գործադիր իշխանության որոշումների ընդունման բարձր մակարդակներում տեսնել կնոջ և հաստատ կքվեարկեին կնոջ օգտին քաղաքական կառավարման համակարգի պաշտոնի թեկնածուների հավասար որակների դեպքում, որոշ չափով պայմանավորված է այն հանգամանքով, որ բուն կյանքի իրողություններն իրենց սրբագրումներն են անում: Այսպես, շատ հարցվողներ չեն տեսնում կյանքում այնպիսի կանանց, ովքեր կարող էին համապատասխան բարձր պաշտոններ զբաղեցնել: Միավասիկ, հարցվածների 83,6%-ը չի կարողացել նշել որևէ կնոջ անուն, որը, իրենց կարծիքով, արժանի կլիներ երկրի նախագահի պաշտոնին, 12,1%-ը կարողացել է նշել մի կնոջ անուն, և 4,3%-ը՝ երկու անուն: Գրեթե նույն իրավիճակն է խորհրդարանի պատգամավորի դեպքում (համապատասխան տվյալները՝ 82,3%, 12,0% և 5,8%): Պատկերն ավելի տխուր է կառավարության անդամի (նախարարի) պաշտոնի դեպքում (համապատասխանաբար՝ 87,8%, 10,7% և 1,6%):

Առաջին հայացքից կարող է թվալ, թե հարցվածները խիստ քննադատական և գուցե նախապաշարումով են վերաբերվում կանանց, ուստի արժանի թեկնածուների չեն տեսնում: Բայց բնավ այդպես չէ:

Նախ, ըստ վերը քննարկված տվյալների, հարցվածների զգալի մասը ոչ միայն դրականորեն է տրամադրված պետական կառավարման և քաղաքական համակարգերի բարձր պաշտոններում կանանց ներկայությանը, այլև հակված է աջակցելու կանանց առաջմղմանը քաղաքականության և կառավարման ոլորտներում:

Երկրորդ՝ գրեթե նույն պատկերն է (բացառությամբ նախագահի թեկնածությունների) բացահայտվել նաև տղամարդկանց առնչությամբ: Նախագահի պաշտոնի դեպքում համապատասխան տվյալներն են՝ 57,2%, 27,8% և 15,0%, խորհրդարանի անդամի դեպքում՝ 80,4%, 12,9% և 6,7% և կառավարության անդամի դեպքում՝ 80,4%, 10,1% և 4,0%:

Երրորդ՝ քաղաքական կուսակցություններում, ՀԿ-ներում և առհասարակ հասարակության մեջ շատ ակտիվիստներ կան, փորձառու և գիտակ մարդիկ, որոնք ունեն բոլոր ծիրքերը խոշոր պետական կամ քաղաքական գործիչ դառնալու համար: Բայց դա, որպես կանոն, տեղի չի ունենում: Սրանից էլ բխում է եզրակացությունը, որ հիմնական պատճառը ժամանակավրեպ, ոչ ժողովրդավարական քաղաքական համակարգն է՝ ախտահարված կոռուպցիայով, խնամիականությամբ, հովանավորչությամբ, կլիենտիլիզմով, պաշտոնների բաշխմամբ անձնական նվիրվածության, կլանային և կուսակցական պատկանելության սկզբունքով, այլ ոչ թե ըստ մասնագիտական և անձնական որակների և վաստակի: Նման միջավայրում կանանց համար առանձնապես դժվար է առաջադրվել և դրսևորվել, քանի որ կառավարության կողմից վերահսկվող քարոզչական ապարատը վարկաբեկում է պոտենցիալ հակաէլիտայի կին ակտիվիստներին և քաղաքական գործիչներին, բուն կառավարությունը չի առաջադրում նրանց թեկնածությունը քաղաքական և հայեցողական պաշտոնների համար, իսկ իշխող էլիտայի կազմում գտնվող կանայք ստիպված են մնալ ստվերում և բավարարվել բավական համեստ դերով:

Այս համապատկերում, ուստի, զարմանալի չէ հարցվածների թերահավատությունը, եթե մանավանդ կասկածանքով են վերաբերվում քաղաքական և պետական գործիչներին, որոնք մեկ անգամ չէ, որ հուսախաբ են արել՝ ի դերև հանելով նրանց վստահությունն ու սպասումները:

Քանի դեռ արմատապես չեն փոխվել քաղաքական խաղի «կանոնները», այլ կերպ ասած, քանի դեռ տեղի չի ունեցել քաղաքական դաշտի և հասարակական կյանքի ճշմարիտ, ոչ թե դեկորատիվ ժողովրդավարացում, և՛ տղամարդկանց, և՛ մանավանդ կանանց համար դժվար կլինի համարժեք դրսևորել իրենց և հեղինակություն ձևավորել հասարակության աչքում:

Այս եզրակացությունները հաստատվում են նաև հարցվածների կարծիքների ապշեցուցիչ նույնականությամբ, մեծ մասամբ այն հատկանիշների առնչությամբ, որոնք պետք է ունենան կին և տղամարդ քաղաքական գործիչները: Օրինակ՝ հարցվածների 92,8%-ի կարծիքով՝ մտավոր բարձր ունակություններ պետք է ունենա տղամարդ քաղաքական գործիչը, և 90,7%-ի կարծիքով՝ կին քաղաքական գործիչը: Կամ՝ աշխատանքի բավարար փորձը պետական կառավարման մարմիններում. համապատասխանաբար՝ 75,4% և 72,2%: Ինչպես նաև ազնվությունն ու սկզբունքայնությունը (համապատասխանաբար՝ 77,8% և 77,3%): Անգամ այն դեպքերում, երբ որոշակի հատկանիշը կամ սոցիալական դրությունը չեն կարևորվում հարցվածների կողմից (օրինակ՝ քաղաքական գործչի հավատացյալ, երիտասարդ, ամուսնացած, նյութապես ապահովված լինելը), քանզի հարցվածների մոտավորապես 30%-ը, հազվադեպ՝ 40%-ը և միայն մի դեպքում մոտ 50%-ն են արտահայտվել դրանց անհրաժեշտության մասին, կին և տղամարդ քաղաքական գործիչների տարբերությունը նվազագույն է:

Տարբերություններ եթե կան, ամրագրում են կանանց երկրորդական դրությունը քաղաքականության մեջ: Այսպես, եթե նեղ խմբային և կլանային շահերից վեր լինելու և պետական մտածողություն ունենալու ունակությունը տղամարդ քաղաքական գործչի համար կարևոր է համարում հարցվածների 74,7%-ը, ապա կանանց համար՝ 69,0%-ը, կազմակերպչական կարողությունները՝ համապատասխանաբար 82,0%-ը և 75,3%-ը, իսկ քաղաքական պայքարի փորձը՝ 75,3%-ը և 65,4%-ը, փոխզիջում գտնելու և ճկունություն ցուցաբերելու ունակությունը՝ 78,5%-ը և 74,3%-ը, հռետորական ունակությունները՝ 71,3%-ը և 65,0%-ը:

Դա դրսևորվում է անգամ այնպիսի բացասական երևույթների և ոլորտների դեպքում, որոնք դուրս են բնականոն քաղաքական համակարգից և բարոյապես առողջ, նաև քաղաքական և քաղաքացիական առումով հասուն հասարակությունից: Այսպես, քրեական աշխարհի հեղինակությունների հետ սերտ կապերի անհրաժեշտությունը տղամարդկանց համար նշել է հարցվածների 30,8%-ը, կանանց համար՝ 13,6%-ը, իսկ մաֆիայի և կլանային կառույցների հետ՝ համապատասխանաբար՝ 23,7%-ը և 7,4%-ը:

Ամենայն հավանականությամբ, տրամաբանությունն այսպիսին է. քանի որ կանայք առաջին դերերում չեն և առանցքային որոշումներ չեն կայացնում, նրանց այդ հատկանիշներն այնքան անհրաժեշտ չեն, որքան տղամարդկանց:

Ժամանակակից հայ հասարակության քաղաքական կառուցվածքի ոճի և բնույթի և քաղաքական մշակույթի ընդհանուր մակարդակի մասին է վկայում նաև այն փաստը, որ կանանց համար արտաքին հմայքի և գրավիչ վարվեցողության անհրաժեշտությունը նշում է հարցվածների 70,2%-ը, իսկ քաղաքական գործիչ տղամարդկանց համար՝ ընդամենը 52,4%-ը: Այլ կերպ ասած, կին քաղաքական գործիչը պետք է, դիցուք, ընտրողներին գրավի հմայքով և գրավիչ վարվեցողությամբ, ինչը տղամարդ քաղաքական գործչի համար այնքան էլ պարտադիր չէ, քանի որ նա կխոսի ըստ էության, իսկ ազդեցության լծակները իր ձեռքին են: Դրանք մասկուլինային քաղաքական մշակույթի դրսևորումներ են, որոնք առանձնապես բացասաբար են ազդում կանանց վրա՝ հարկադրելով նրանց խաղալ իրենց համար խորթ ու ժամանակավրեպ (ժամանակակից քաղաքակիրթ հասարակությունների տեսանկյունից) կանոններով, յուրացնել ոչ ժողովրդավարական նորմեր, օտարոտի չափորոշիչներ ու պատկերացումներ և ջանալ հետևել դրանց: Պատահական չէ, որ նման պայմաններում կին քաղաքական գործիչների համար դժվար է համարժեք ձևով ինքնադրսևորվել և ցուցադրել սեփական ունակությունները, փորձը, գիտելիքները, կարողություններն ու որակները:

## 5. Կանանց քաղաքական մասնակցությանը նպաստող գործոնները

Անվիճելի է, որ գենդերային հավասարության հասնելը մեծապես պայմանավորված է պետության քաղաքականությամբ: Այդ ուղղությամբ արդեն որոշ քայլեր արվել են: 2010 թ. փետրվարի 11-ին կառավարությունը հավանություն տվեց և ընդունեց «Գենդերային քաղաքականության հայեցակարգը»: Մշակվել են «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների երաշխիքների մասին» և «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Կառավարությունը նշանակալի ուշադրություն է դարձնում գենդերային բռնության՝ որպես կանանց մարդու իրավունքների աղաղակող խախտումներից և գենդերային հավասարության ճանապարհին ընկած խոչընդոտներից մեկի դեմ պայքարի հարցերին: 2010 թ. մարտին Հայաստանի վարչապետի որոշմամբ ստեղծվել է Հայաստանում գենդերային բռնության դեմ պայքարի հարցերի ազգային միջգերատեսչական հանձնաժողով: Ներկայումս տվյալ հանձնաժողովի աշխատանքային խմբի փորձագետներն ավարտում են 2011-2015 թթ. գենդերային բռնության դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի մշակումը (ամեն տարվա համար առանձին-առանձին):

Գենդերային հավասարության քաղաքականությունը և դրա իրականացման միջոցները մեծապես կարևորվում են ոչ միայն բովանդակային, այլև ձևական առումով: Անգամ զուտ խորհրդանշական քայլերն ու հայտարարությունները, առավել ևս՝ հանրային բանավեճերը, ազգային պլաններն ու գործողությունների ծրագրերն աստիճանաբար սոցիալական իներցիա են ձեռք բերում, փոխում մարդկանց մտածելակերպը և նպաստում հասարակական գիտակցության մեջ նոր պատկերացումների և գաղափարների արմատավորմանը: Սոցիալական գործելակերպի առօրեականության և սոցիալական նոր փորձի ներդրման շնորհիվ սոցիումն ընտելանում է այն գաղափարին, որ գենդերային հավասարությունը քաղաքակիրթ հասարակության կյանքի նորմ է և ըստ էության՝ ոչ այլ ինչ, եթե ոչ հավասար իրավունքների և հնարավորությունների (իսկ հեռանկարում նաև հավասար արդյունքների) ապահովում յուրաքանչյուր անհատի համար՝ անկախ սեռական պատկանելությունից: Բայց միայն պետության և քաղաքական կուսակցությունների պատերնալիստական հոգատարությանն ապավինելը, մեր կարծիքով, ճիշտ դիրքորոշում չէ: Այդ միտքը ճշմարիտ է բոլոր սոցիալական խմբերի համար, այդ թվում և կանանց՝ որպես մեծ սոցիալ-ժողովրդագրական խմբի: Նրանցից ավելի լավ ոչ ոք չի արտահայտի, պատկերացնի և պաշտպանի իրենց շահերը: Պատմական փորձն ակներև ցուցադրում է այդ նպատակներով կանանց սոցիալական ու քաղաքական ակտիվության անհրաժեշտությունը: Միայն այդ դեպքում փոփոխություններն ավելի արագ տեղի կունենան և կլինեն անդառնալի, իսկ պետական մակարդակով ձեռնարկվող քայլերը՝ ավելի հետևողական ու արդյունավետ:

Այդ իսկ պատճառով օգտակար է թվում հարցվածների կարծիքների ուսումնասիրությունն այն առումով, թե **ինչ գործոններ կարող են առավելագույնս նպաստել կանանց քաղաքական մասնակցության մեծացմանն ու ընդլայնմանը**:

Նախ և առաջ հարկ է նշել, որ հարցվածների մի բավական զգալի մասը դժվարացել է պատասխանել տվյալ հարցին. փաստորեն, ընտրանքի յուրաքանչյուր հինգերորդ հարցվողը (20,4%): Հարկ է նշել նաև, որ հարցվածների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները շոշափելի ազդեցություն են թողել. այն հարցվածների տոկոսը, որոնք դժվարացել են պատասխանել, տղամարդկանց շրջանում ավելի բարձր է, քան կանանց շրջանում (համապատասխանաբար՝ 23,3% և 18,0%), առավել մեծ տարիքի հարցվածների շրջանում ավելի, քան երիտասարդների (27,5% 61 և ավելի տարեկանների շրջանում, 22,2%՝ 46-60 տարեկանների, 17,5%՝ 31-45 տարեկանների և 17,6%՝ 18-30 տարեկանների), ոչ լրիվ միջնակարգ կրթությամբ անձանց շրջանում ավելի, քան բարձրագույն կրթություն ունեցողների (համապատասխանաբար՝ 24,5% և 18,0%) և քաղաքի բնակիչների շրջանում ավելի (23,1%), քան գյուղաբնակների (13,2%):

Զարմանալի չէ, որ կանայք, ինչպես նաև առավել երիտասարդ ու կրթված հարցվածները ավելի տեղեկացված են կամ հաճախ են մտածել այդ հարցի մասին և գուցե որոնել ու գտել են պատասխանը: Բայց բնավ հասկանալի չէ նշանակալի տարբերությունը (10 տոկոսային կետով) քաղաքի և գյուղի հարցվածների միջև: Առավել ճշմարտանման է թվում այն ենթադրությունը, որ գյուղի բնակիչները հաճախ են բախվում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների, որոնք սահմանափակում են կանանց քաղաքական մասնակցությունը, ուստի նրանց ավելի շատ են հուզում տվյալ հիմնախնդիրը և դրա լուծման հնարավոր ուղիները:

Ելնելով հարցվածների նախապատվություններից՝ բոլոր գործոնները կարելի է պայմանականորեն դասակարգել 5 խմբի: Նախ և առաջ, նրանց կարծիքով, օրենսդրությունը պետք է համապատասխանեցվի գենդերային հավասարության սկզբունքներին[43] (ստացված բոլոր պատասխանների 20,9%-ը):

Երկրորդ գործոնը կանանց քաղաքական կազմակերպությունների (կուսակցությունների) ստեղծումն է (բոլոր պատասխանների 13,4%-ը):

Երրորդ խումբը. (ա) ընտրությունների մասին օրենքում կանանց քվոտաների ներառումը (10,9%), (բ) կանանց նոր ՀԿ-ների ստեղծումը (9,4%), (գ) քաղաքական կուսակցություններում կանանց ներկայացվածության բարձրացումը (9,1%) և (դ) կանանց ՀԿ-ների համախմբումը (բոլոր պատասխանների 8,8%-ը):

Չորրորդ խումբն ընդգրկում է 2 գործոն. (ա) կրթական ծրագրերի իրականացում կանանց լիդերական որակների զարգացման համար (7,6%) և հասարակական-քաղաքական գործիչ ու գործարար կանանց դրական կերպարի ստեղծում (բոլոր պատասխանների 6,0%-ը):

Վերջապես, հինգերորդ խումբը, որ ընդգրկում է մեկ գործոն՝ զանգվածային բողոքի ակցիաների կազմակերպում գենդերային բռնության և խտրականության դեմ (բոլոր պատասխանների 3,8%-ը):

Մեկնաբանելով ստացված տվյալները՝ հարկ է նախ ընդգծել, որ մի շարք գործոնների առնչությամբ տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերից հարցվածների կարծիքները համընկնում են կամ բավական մոտ են, իսկ մյուս դեպքերում, ընդհակառակը, բավական տարբերվում են: Դա զարմանալի չէ, քանի որ փորձագետների շրջանում էլ միասնական կարծիք գոյություն չունի նշված գործոններից յուրաքանչյուրի նշանակության վերաբերյալ:

Ամեն դեպքում, չի կարելի չհամաձայնել, որ համապատասխան օրենսդրությունը առաջնահերթ դեր է խաղում: Ինչպես երևում է, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին վերը նշված օրենքի ընդունման պահանջը կա, և այն կարող է դրական դեր խաղալ: Ինչ վերաբերում է քվոտաներին, ապա իշխող

[43] Դա իրոք շատ կարևոր գործոն է: ՄԱԿ-ի վերը հիշատակված հետազոտությունում փորձագետները նշել են, որ «ազգային օրենսդրությունը գենդերային հավասարության պաշտպանության և առաջմղման միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելը, ինչպես նաև ԿՆԽՎ կոմիտեի հանձնարարականների իրականացումը … նպաստում են կանանց քաղաքական մասնակցությունն ապահովող իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդմանը»: Տե՛ս Enhancing Women's Political Participation: A Policy Note for Europe and the Commonwealth of Independent States, էջ 2:

քաղաքական ուժի՝ ԱԺ ընտրություններում կուսակցական ցուցակների ներկայիս 15-տոկոսանոց քվոտան (ըստ Ընտրական օրենսգրքի 100-րդ հոդվածի) մինչև 20% բարձրացնելու առաջարկը լուրջ քննադատության է արժանանում կանանց և իրավապաշտպան կազմակերպությունների կողմից, որոնք պահանջում են, նախ, տոկոսը բարձրացնել գոնե մինչև 30 (որպեսզի ապահովվի նվազագույն կրիտիկական զանգվածը), երկրորդ՝ ոչ թե ցուցակներում, այլ խորհրդարանում արդեն ընտրված անդամների թվում[44]:

Ուշագրավ է կանանց քաղաքական կազմակերպությունների (կուսակցությունների) ստեղծման գաղափարի պաշտպանությունը: Ամենայն հավանականությամբ, կանանց «Շամիրամ» «գրպանային» կուսակցության բացասական փորձն աստիճանաբար մոռացվում է: Իրոք, շատ երկրներում կանանց քաղաքական կազմակերպությունների առկայությունը նպաստել է կանանց ակտիվացմանը և քաղաքական մասնակցության ընդլայնմանը: Չի կարելի չհամաձայնել նաև, որ հասունացել է քաղաքական կուսակցություններում, հատկապես՝ առաջատար, ազդեցիկ կուսակցություններում կանանց ներկայացվածությունն ու կարգավիճակը բարձրացնելու անհրաժեշտությունը:

Հարցվածները միանգամայն արդարացիորեն շեշտադրում են կանանց հասարակական կազմակերպությունների առանցքային դերը: Իրոք, որպեսզի դրանք քաղաքական ուժ ներկայացնեն և արդյունավետ ձևով նպաստեն կանանց քաղաքական մասնակցության ընդլայնմանը, զգալիորեն ավելի շատ պետք է լինեն և ցանցերի, դաշինքների ու համաժողովների միջոցով համախմբվեն միասնական լայն սոցիալական շարժման մեջ:

Պակաս կարևոր չեն կրթական ծրագրերը կանանց լիդերական որակների զարգացման, նրանց գիտելիքներ հաղորդելու և սոցիալական ու տեղեկատվական տեխնոլոգիաներ սովորեցնելու համար: Հայաստանի կանանց հիմնահարցերով զբաղվող առնվազն երկու հասարակական կազմակերպություններ ստեղծել են կանանց լիդերության դպրոցներ և ակտիվորեն աշխատում են քաղաքական կուսակցությունների կամ հասարակական կազմակերպությունների ակտիվիստ կանանց հետ:

Ինչ վերաբերում է դրական կերպարին, ապա հասարակական շատ կազմակերպությունների ջանքերով, այդ թվում և լրագրողական, միջազգային հիմնադրամների և այլ կառույցների աջակցությամբ գենդերային հիմնախնդիրների լուսաբանումը հայկական ԶԼՄ-ներում նկատելիորեն բարելավվել է[45]: Սակայն հասարակական կամ քաղաքական գործիչ կանանց, ավելի նվազ չափով նաև գործարարության ոլորտում զբաղված կանանց (նրանց թիվը շատ փոքր է) գործունեությունը լուսաբանելիս դեռևս գերակշռում են քաղաքական կոնյունկտուրային նախապատվությունները, պատվերն ու այն անձանց նախատրամադրվածությունը, ովքեր որոշում են տվյալ լրատվամիջոցի քաղաքականությունը: Հաճախ կին քաղաքական գործչի գործունեության հավասարակշռված, հիմնավորված և բովանդակալից լուսաբանումը փոխարինվում է ցածրորակ PR ակցիաներով կամ «սև փիարով», ինչը, վերջին հաշվով, վնաս է հասցնում բոլոր շահագրգիռ կողմերին:

Թեև զանգվածային արշավների անցկացումը գենդերային բռնության և խտրականության դեմ եզրափակում է գործոնների ցանկը, սակայն հարկ է նշել, որ բոլոր պատասխանների 3,8%-ն իրականում նշանակում է, որ այդ պատասխանը տվել է հարցվածների 8,4%-ը (կին հարցվածների շրջանում տոկոսն ավելի բարձր է՝ 9,4%, ինչպես և գյուղական վայրերում ապրողների շրջանում՝ 11,1%): Այլ կերպ ասած, թեև այդ գործոնը հիմնական չէ, այսուհանդերձ հարցվածներն այն հաշվից դուրս չեն նետում: Եվ դա ճիշտ է, եթե հաշվի առնենք հասարակության մեջ առկա ընդվզող տոկոսը և այն փաստը, որ զանգվածային բողոքի ակցիաների կազմակերպումը քաղաքական գործչի փորձառության կարևոր բաղադրիչ է և քաղաքական մասնակցության ամենաակտիվ ձևերից մեկը:

---

[44] Ընդ որում, նրանք միանգամայն իրավացիորեն հիմնվում են Հայաստանի երրորդ և չորրորդ միացյալ պարբերական զեկույցների վերաբերյալ ԿԽԿՎ կոմիտեի եզրափակիչ դիտողությունների 17-րդ կետի վրա (2 փետրվարի 2009 թ., փաստաթուղթ CEDAW/C/ARM/CO/4/Rev.1):

[45] Այդուհանդերձ, դեռևս հազվադեպ չեն որոշ լրագրողների և ԶԼՄ-ների կողմից անհամապատասխան, երբեն պարզապես տգետ մոտեցումները գենդերային հիմնախնդիրներին:

## 6. Քաղաքացիական և քաղաքական ակտիվության մակարդակը

Հասարակական և քաղաքական ակտիվությունը սոցիումի կյանքի կարևոր բաղադրատարրն է: Ժողովրդավարության համախմբումը, կայուն զարգացումը և իրավական ու սոցիալական պետության կերտումը հնարավոր են միայն թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց քաղաքացիական ակտիվ մասնակցության պարագայում: Հասարակության զարգացման և իրական վիճակի գնահատման համար անհրաժեշտ է իմանալ, թե որքանով են ակտիվ քաղաքացիները: Տվյալ հետազոտության մեջ դիտարկվել է քաղաքացիական և քաղաքական մասնակցության այն բաղադրիչը, որը կապված է ոչ հաճախ գրանցվող՝ ընդվզման ձևերի հետ: Հարցվածներին հարց է տրվել, թե մասնակցե՞լ են նրանք կամ կարո՞ղ էին մասնակցել հետևյալ քաղաքացիական և քաղաքական ակցիաներին. հավաքական հայտարարությունների ստորագրում, մասնակցություն թույլատրված հանրահավաքների, մասնակցություն չթույլատրված հանրահավաքների և մասնակցություն պիկետների կառավարական շենքերի մոտ:

*Աղյուսակ 3. Մասնակցե՞լ են կամ կարո՞ղ էին մասնակցել հետևյալ քաղաքացիական և քաղաքական ակցիաներին*

| | Մասնակցել եմ | Կարող էի մասնակցել | Չեմ մասնակցի ոչ մի դեպքում |
|---|---|---|---|
| Կոլեկտիվ դիմումի ստորագրում | 35,2% | 30,3% | 34,6% |
| Մասնակցություն թույլատրված ցույցերի | 21,9% | 28,5% | 49,6% |
| Մասնակցություն չթույլատրված ցույցերի | 6,0% | 18,3% | 75,8% |
| Մասնակցություն պիկետների կառավարական շենքերի առաջ | 2,3% | 15,8% | 82,0% |

Ստացված տվյալները հստակ հայտածում են հետևյալ միտումը. որքան ավելի արմատական է «ակցիան», այնքան քիչ տոկոսով հարցվածներ են մասնակցել դրան կամ պատրաստ կլինեին, գոնե տեսականորեն, մասնակցելու: Այս եզրակացությունը ճիշտ է հարցվածների բոլոր սոցիալ-ժողովրդագրական խմբերի դեպքում՝ ընտրանքում առանձնացված ըստ սեռի, տարիքի, կրթության մակարդակի, տարածաշրջանի ու բնակության վայրի և անգամ հասարակական կազմակերպության կամ քաղաքական կուսակցության անդամության:

Համաձայն ստացված տվյալների՝ այն **կանանց** տոկոսը, որոնք մասնակցել են կամ կմասնակցեին քաղաքական կամ քաղաքացիական ակտիվության վերը նշված առճակատման ձևերին, զգալիորեն ցածր է, քան **տղամարդկանց** շրջանում: (Նրանց թվում աննշան չափով մեծ է այն հարցվածների տոկոսը, ովքեր հավաքական հայտարարություններ կստորագրեին): Այսպես, եթե տղամարդկանց շրջանում 27,1%-ն է մասնակցել թույլատրված հանրահավաքների, իսկ 8,2%-ը՝ չթույլատրված, ապա կանանց շրջանում՝ համապատասխանաբար ընդամենը 17,5%-ը և 4,2%-ը:

Բավական անսպասելի է **տարիքի և** այդ միջոցառումների մասնակցության աստիճանի ուղղակի կապը: Այլ կերպ ասած, որքան տարեց են հարցվածները, այնքան բարձր է նրանց տոկոսը, ովքեր մասնակցել են նշված ակցիաներին:

*Աղյուսակ 4. Տվյալ տարիքային խմբերում այն անձանց տոկոսը, ովքեր մասնակցել են ստորև նշված միջոցառումներին*

| | Տարիքային խմբեր | | | |
|---|---|---|---|---|
| | 18-30 | 31-45 | 46-60 | 61 և ավելի |
| Կոլեկտիվ դիմումի ստորագրում | 22,8% | 35,6% | 43,3% | 45,0% |
| Մասնակցություն թույլատրված ցույցերի | 14,6% | 21,6% | 24,1% | 32,1% |
| Մասնակցություն չթույլատրված ցույցերի | 4,1% | 5,2% | 6,3% | 10,1% |
| Մասնակցություն պիկետների կառավարական շենքերի առաջ | 1,1% | 2,6% | 3,0% | 2,9% |

Սրանից թելադրվում է այն եզրակացությունը, որ երիտասարդությունն այնքան էլ ակտիվ չէ, որքան ավելի մեծ տարիքի անձինք: Փաստորեն, ամենաերիտասարդ խմբի անձինք (որոնք տեսականորեն քաղաքական և քաղաքացիական առումով առավել ակտիվ պետք է լինեին) երկու անգամ ավելի քիչ ակտիվ են, քան ամենաավագ տարիքային խմբի անձինք: Եթե երիտասարդության քաղաքացիական իներտության և քաղաքական չեզոքության միտումը հաստատվի մասնակցության ամբողջ սպեկտրի դեպքում և թեկուզ միջնաժամկետ հեռանկարում, ապա դա հասարակությանը որևէ լավ բան չի խոստանում: Ժամանակակից աշխարհում հենց երիտասարդությունն է նախաձեռնում, պաշտպանում և իրականացնում բարեփոխումների և այլ առաջադեմ փոփոխությունների գործընթացը:

Նշված միջոցառումներին մասնակցության աստիճանի` կրթության մակարդակով և բնակության տարածաշրջանով պայմանավորվածության միասնական կայուն միտում չի բացահայտվել:

Ինչ վերաբերում է մասնակցության աստիճանի պայմանավորվածությանը հարցվածների բնակության վայրով, ապա Երևանի և մյուս քաղաքների բնակիչների շրջանում նշված միջոցառումների մասնակցության տոկոսը զգալիորեն ավելի բարձր է, քան գյուղական բնակիչների շրջանում: Երևանի և մյուս քաղաքների բնակիչների միջև այդ հարցում տարբերություններ գրեթե չկան, բացառությամբ չթույլատրված հանրահավաքների, որոնց մասնակցել է Երևանի բնակիչ հարցվածների 8,5%-ը և մյուս քաղաքների հարցվածների 5,9%-ը (գյուղական բնակիչ հարցվածների 3,6%-ը): Այդ տարբերությունը, ամենայն հավանականությամբ, բացատրվում է նրանով, որ հանրահավաքների օրերին, որոնք անցկացնում էր ընդդիմությունը վերջին տարիներին, մեծ մասամբ երթևեկությունը դեպի Երևան շրջափակվում էր (հասարակական տրանսպորտը չի աշխատել, ավտոտեսչության աշխատակիցները մարդատար ավտոմեքենաների վարորդներին ստիպել են հետ դառնալ Երևանի ճանապարհից, այն մարդիկ, ովքեր փորձել են մոտակա բնակավայրերից ոտքով հասնել Երևան, նույնպես ստիպված են եղել հետ դառնալ, և այլն): Այս եզրակացությունը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ մյուս քաղաքների հարցված բնակիչների 20,7%-ը և գյուղական բնակավայրերում բնակվողների 19,7%-ը չեն մասնակցել, բայց, ըստ երևույթին, կարող էին մասնակցել չթույլատրված հանրահավաքների, եթե նման հնարավորություն ունենային:

Բավական կանխատեսելի էր հասարակական կազմակերպության կամ քաղաքական կուսակցության անդամության և նշված միջոցառումներին մասնակցության հստակ կապը: Այսպես, եթե հասարակական կազմակերպությունների անդամների շրջանում հավաքական հայտարարությունները ստորագրող, թույլատրված և չթույլատրված հանրահավաքներին մասնակցող հարցվածների տոկոսը համապատասխանաբար կազմել է 51,6%, 37,1% և 12,9%, ապա ՀԿ-ների անդամ չհանդիսացողների շրջանում` համապատասխանաբար` 33,9%, 20,1% և

6,2%: Այլ կերպ ասած, առաջինների շրջանում ակտիվությունը 1,5-2 անգամ ավելի բարձր է, քան երկրորդների շրջանում:

Նույն միտումն է նկատվում (իհարկե, մի փոքր նվազ ցայտուն) նաև քաղաքական կուսակցությունների անդամների և անկուսակցականների ակտիվության համեմատության դեպքում: Այսպես, կուսակցությունների անդամների շրջանում հավաքական հայտարարությունները ստորագրող, թույլատրված և չթույլատրված հանրահավաքներին մասնակցող հարցվածների տոկոսը համապատասխանաբար կազմել է 38,3%, 30,5% և 10,2%, մինչդեռ անկուսակցական հարցվածների շրջանում այդ տոկոսը համապատասխանաբար կազմել է 33,0%, 18,3% և 5,6%:

Հարցման ընթացքում ստացված տվյալները վկայում են նոր, բավականին անսպասելի միտումների մասին, որոնք դրսևորվում են հայկական սոցիումում: Նախ և առաջ, որքան հայտնի է, վերջին 10-12 տարիներին առաջին անգամ սոցիոլոգիական հարցախույզում քաղաքական կուսակցությունների անդամ հարցվածների թիվը գերազանցում է (իսկ սույն հարցախույզում գերազանցում է երկու անգամ) հասարակական կազմակերպությունների անդամների թիվը (համապատասխանաբար՝ 10,7% և 5,2%): Դա անվերապահորեն վկայում է ժամանակակից հայ հասարակության հարաճուն քաղաքականացման մասին: Այդ միտումի մասին են վկայում նաև ուրիշ ոչ պակաս անսպասելի տվյալներ: Վերը բերված տվյալների համեմատությունը հստակ ցույց է տալիս հասարակական կազմակերպությունների անդամների քաղաքական ակտիվության առավել բարձր մակարդակը անգամ քաղաքական կուսակցությունների անդամների համեմատությամբ (միայն պիկետների դեպքում է, փաստորեն, մակարդակը նույնը՝ 3,2% առաջինների շրջանում, և 3,9%՝ երկրորդների շրջանում):

Այսպես, հասարակական կազմակերպությունների անդամների շրջանում թույլատրված հանրահավաքներին մասնակցող հարցվածների տոկոսը կազմում է 37,1%, իսկ կուսակցությունների անդամների շրջանում՝ 7 տոկոսային կետով պակաս՝ 30,5%, չթույլատրված հանրահավաքների դեպքում՝ համապատասխանաբար 12,9% և 10,2%: Եթե դիտարկենք ակտիվության այնպիսի ձև, ինչպիսին հավաքական հայտարարությունների ստորագրումն է, որը կարող է թե՛ քաղաքացիական, թե՛ քաղաքական մասնակցության ձև լինել (պայմանավորված որոշակի հանգամանքներով և համատեքստով), ապա տարբերությունը շատ ավելի մեծ է: ՀԿ-ների անդամ հարցվածների 51,6%-ն է մասնակցել նման ակցիայի, մինչդեռ կուսակցությունների անդամ հարցվածների 38,3%-ը:

Ընդհանրացնելով արդյունքները՝ կարելի է հասարակության մեջ քաղաքացիական և մանավանդ քաղաքական ակտիվության որոշակի աճ արձանագրել:

## 7. Եզրակացություններ և երաշխավորություններ

Իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս որոշակի եզրակացություններ և երաշխավորություններ ներկայացնել համապատասխան պետական կառույցների, քաղաքացիական հասարկության շահագրգիռ հաստատությունների և միջազգային կազմակերպությունների համար:

- Մասնակցային և ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների իրագործումը մեր երկրում ենթադրում է իրավական-նորմատիվ դաշտի որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝ գենդերային հավասարության մասին համապատասխան օրենքի ընդունում, ազգային օրենսդրության փորձաքննություն գենդերային զգայունության և միջազգային նորմերին ու չափորոշիչներին համապատասխանության տեսանկյունից և դրա արդյունքների հիման վրա համապատասխան փոփոխությունների ու լրացումների կատարում գործող օրենքներում:
- Պետք է ընդլայնել կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման ժամանակավոր հատուկ միջոցների սպեկտրն ու ծավալը և արդյունավետ միջոցներ ձեռնարկել քաղաքականության և հասարակական կյանքի ոլորտի որոշումների ընդունման գործընթացում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին

Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի Rec(2003)3 հանձնարարականն իրականացնելու համար:

- Պետք է հնարավորինս խրախուսել բոլոր մակարդակների ընտրություններում քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական նախաձեռնությունների կողմից կանանց առաջադրումը: Աջակցել կադրային ներուժի զարգացմանը՝ քաղաքական գործունեության մեթոդների, լիդերական և կազմակերպչական հմտությունների զարգացման միջոցով:
- Կարևոր է բարենպաստ միջավայր ապահովել կանանց կազմակերպությունների միավորումներ և դաշինքներ ստեղծելու համար՝ ձևավորելով կանանց շարժում:
- Իրականացնել նպատակային ծրագրեր, որոնք նպաստում են գենդերային հավասարության առաջընթացին:
- Գենդերային իմաստով զուգակշռված ժողովրդավարության սկզբունքների արմատավորման ներկա փուլում անհրաժեշտ է ստեղծել գենդերային հավասարության ազգային մեխանիզմ ազգային ծրագրերի իրականացման վերահսկման ու մշտադիտարկման, ռազմավարության մշակման և գենդերային բաղադրիչը ներառելու հարցում կառավարությանն օժանդակելու համար:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Յուրաքանչյուր հասարակության զարգացման հավաքական ցուցանիշը նրա անդամների շահերի, պահանջմունքների, իրավունքների ու ազատությունների երաշխավորման, դրանց իրականացման հնարավորությունների շրջանակն է: Քաղաքակրթության զարգացման ճանապարհին այդ առումով բազմաթիվ մոդելներ են գործարկվել: Սակայն քննություն է բռնել ժողովրդավարությունը, որը դոգմա չէ, այլ՝ գործընթաց, և ունի զարգացման ու կատարելագործման լայն հնարավորություններ:

Ժողովրդավարության մասին ժամանակակից պատկերացումները հանգում են ներկայացուցչական, գենդերային առումով զուգակշռված և մասնակցային մոդելների, քաղաքացիական հասարակության գաղափարի կարևորմանն ու կենսագործմանը: Հենց այդ սկզբունքների իրագործումը և հասարակության անդամների ակտիվ մասնակցությունն է, որ քաղաքական ու հասարակական գործընթացներին հաղորդում է իրապես ժողովրդավարական բովանդակություն՝ հնարավորինս բացառելով նեղ խմբի կողմից իշխանության յուրացումն ու չարաշահումը, բարենպաստ պայմաններ ստեղծելով հանրության լայն շերտերի իրավունքների ու շահերի առարկայացման համար:

Այնուհանդերձ, քաղաքական և քաղաքացիական մասնակցության ընդլայնումը, մասնավորապես՝ գենդերային հավասարակշռված ներկայացվածությունը որոշումների ընդունման մակարդակում անցումային շրջանի հասարակությունների քաղաքական համակարգում ժողովրդավարության «դեֆիցիտի» հաղթահարման կարևորագույն գործոն է:

Ժողովրդավարության մասնակցային մշակույթի արմատավորման գործընթացը մեկ գործողությամբ իրականացնել հնարավոր չէ: Իրավական-նորմատիվ դաշտի, հասարակական գիտակցության, արժեքային կողմնորոշումների, քաղաքական վարքի ստանդարտների վերափոխման գործընթացները միջոցներ ու ժամանակ են պահանջում՝ ծավալվելով հաճախ ժամանակի միջսերնդային միջակայքերում: Այդ ճանապարհին արժեքավոր են ժողովրդավարության զարգացած ավանդույթներ ունեցող երկրների դրական փորձի յուրացումը և դրա ճիշտ տեղայնացումն ու համադրումը սեփական երկրի պատմամշակութային արժեհամակարգի համատեքստում:

Հասարակական համակարգում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունն էապես պայմանավորված է դրանց մեթոդաբանական հիմնավորվածությամբ և պետք է հիմնված լինի գիտահետազոտական, առկա իրողություններն ու միտումները վերհանող վերլուծական ծրագրերի արդյունքների վրա: Դա թույլ կտա խուսափել փորձի և սխալների, բարեփոխումների գաղափարը ստվերող բարձր գնի վճարման արատավոր պրակտիկայից:

Սույն հետազոտության հեղինակները հույս են հայտնում, որ ուսումնասիրության տվյալները, դրանց վերլուծության վրա հիմնված եզրակացություններն ու երաշխավորություններն արժեքավոր կարող են լինել Հայաստանում ժողովրդավարության զարգացման գործընթացների, գենդերային քաղաքականության մշակման ու իրագործման տեսանկյունից և օգտակար՝ այդ խնդիրներով շահագրգիռ պետական, կուսակցական ու ոչ կառավարական կառույցների և կազմակերպությունների համար:

Հեղինակային խումբը շնորհակալությամբ կընդունի ներկայացված հետազոտության և դրա արդյունքների վերաբերյալ դիտարկումները, դիտողություններն ու առաջարկությունները:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Ցանկում տեղ են գտել այն հրատարակությունններն ու սկզբնաղբյուրները, որոնցից մեջբերումներ են արվել կամ որոնք հիշատակվել են տեքստում)


1. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2002-2007 թթ.: Այլընտրանքային զեկույց: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն: Եր., 2007
2. Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին: Վերլուծական տեսություն: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն: Եր., 2007
3. Կանայք զարգացման մեջ. Ժամանակակից հասարակության գենդերային հիմնահարցեր (ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքների): Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոն: Երևան,1999
4. Համահանրապետական հարցում Հայաստանում կանանց հանդեպ ընտանեկան բռնության վերաբերյալ. 2008-2009: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ: Երևան, 2010
5. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: Երևան, 2010
6. Հայաստանի Հանրապետությունում «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-
ի կոնվենցիայի, Պեկինյան գործողությունների ծրագրի,Հազարամյակի Զարգացման նպատակների ի րականացման մոնիտորինգ: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հե տազոտությունների կենտրոն,Հայաստանի հասարակական կազմակերպությունների «Հանուն խաղա ղության» կոալիցիա, Եր., 2006
7. ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքները: Երևան, 2003
8. ՀՀ մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության զարգացման հայեցակարգային մոտեցումներ: ՄԱԶԾ, ՀՀ ԿԳՆ, 2005: Մաս 6.5: http://www.undp.am/docs/publications/2005publications/edication.pdf
9. ՀՀ օրենսդրության փորձաքննություն գենդերային բռնության տեսանկյունից: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ: Երևան, 2009
10. Շափաղաթյան Հ., Քաղաքական մասնակցության արդի հիմնախնդիրներ: Երևան, 2007
11. Որոշումների կայացման մակարդակում կանանց ոչ բավարար ներկայացվածության պատճառների ուսումնասիրություն: Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ՀՀ ազգային ինստիտուտ: Եր., 2008
12. Տեղական ինքնակառավարման մարմինների գենդերային ինդիկատորները, Երևան, 2007թ.: http://www.crrc.am/index.php/lo/17/73
13. Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. Գենդերային հավասարության չափումը: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Ժողովրդավարության և խաղաղության կենտրոն: Երևան, 2006
14. Օսիպով Վ., Քաղաքական մասնակցությունը և ժողովրդավարությունը. ՀԿ-ների դերը անցումային փուլի հասարակությունում: «Քաղաքական մասնակցությունը անցումային շրջանի հասարակությունում. Գենդերային հավասարության չափումը»: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Ժողովրդավարության և խաղաղության կենտրոն: Երևան, 2006
15. Выборная демократия: Есть ли альтернатива у Армении? Ереван: АЖУО, 2003
16. Грасс Г., О периодах застоя в прогрессе. СПб., 1999
17. Демократизация армянского общества: Гендерная перспектива. Ереван: АЖУО, 2004.
18. Заключительные замечания Комитета CEDAW. Документ CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 (2 февраля 2009 г.)
19. Камю А., Бунтующий человек. М., 1990
20. Мельник А.В., Политология, М., 1996
21. Политическое участие в обществе переходного периода: измерение гендерного равенства. Ереван: АЖУО, 2006
22. Тард Г., Законы подражания. СПб, 1892
23. Шестопал Е.Б., Очерки политической психологии. М., 1990

24. Advancing Equal Rights for Women and Girls: The Status of CEDAW Legislative Compliance in Eastern Europe and Central Asia. New York, UNFPA, 2009.
25. Almond G. and Verba S., The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Prinston Univ.Press,1963
26. "Concepts and definitions." UN Entity for Gender Equality and Empowerment of Women. http://www.un.org/womenwatch/osagi/conceptsandefinitions.htm
27. Duban. E. From Cairo to Beijing and Beyond: the Unfinished Agenda on Gender Equality in Eastern Europe and Central Asia. Background Paper. New York, UNFPA, October 2010.
28. Equality in Politics: A Survey of Women and Men in Parliaments. Geneva: IPU, 2008
29. Enhancing Women's Political Participation: A Policy Note for Europe and the Commonwealth of Independent States. Bratislava, UNDP RBEC, 2010.
30. Is parliament open to women? An Appraisal. Geneva: IPU, 2010.
31. Katz S., Shaping the political structures for Democracy: Introduction, New London, CT, 1998
32. Marcel G., Etre et avoir. Paris, 1935
33. Myers R. Increasing women's political participation. National survey on public perceptions of women in politics. National Democratic Institute, 2003
34. Participation of women in public and economic life. OSCE Human Dimension Seminar. Consolidated summary. Warsaw, 13 – 15 May 2003
35. Pateman C. Participation an Democratic Theory. Cambridge, 1970
36. Recommendation Rec(2003)3 of the Committee of Ministers to member states on balanced participation of women and men in political and public decision making. Council of Europe, 2 March 2003
37. Women's participation in political and public life. OSCE Decision no. 7/09 (MC.DEC/7/09), 2 December 2009
38. Descentralización y participación política de las mujeres. INSTRAW. Santo Domingo, 2009
39. Género en la gobernabilidad democrática. INSTRAW. Santo Domingo, 2009
40. http://www.elections.am/

### Ազգային և միջազգային փաստաթղթեր

1. ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա (1979 թ.)
2. Պեկինյան գործողությունների ծրագիր (15 սեպտեմբերի 1995 թ.)
3. «Հռչակագիր կանանց և տղամարդկանց հավասարության՝ որպես ժողովրդավարության հիմնական չափանիշի մասին», Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի նախարարների 4-րդ եվրոպական խորհրդաժողով, Ստամբուլ, 13-14 նոյեմբերի 1997 թ.
4. Աշխատանքի շուկայում և աշխատավայրում կանանց նկատմամբ խտրականության մասին ԵԽԽՎ-ի Հանձնարարական 1700 (2005)
5. ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիր
6. Եվրոպական սոցիալական խարտիա
7. «Համալիր մոտեցում կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներին», Ստրասբուրգ, մայիս, 1998 թ.
8. «Սեռերի հավասարություն. առանցքային հարց հասարակություն-ների համար փոփոխությունների փուլում», Կանանց և տղամարդկանց միջև հավասարությանհարցերի նախարարների 5-րդ եվրոպական համաժողով՝ «Ժողովրդավարացում, հակամարտությունների կանխարգելում և խաղաղություն. հեռանկարներ և կանանցդերակատարություն», Սկոպիե, 22-23 հունվարի 2003 թ.
9. «Քաղաքական և պետական որոշումների կայացման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասա-րակշռված մասնակցության մասին», Նախարարների կոմիտեի Rec(2003)3 հանձնարարականն անդամ պետություններին: (Ընդունվել է 2003 թ. մարտի 12-ին նախարարների ներկայացուցիչների 831-րդ նիստի շրջանակներում):
10. ՀՀ Սահմանադրություն
11. ՀՀ կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր
12. ՀՀ «Գենդերային քաղաքականության պետական հայեցակարգ» (2010)

# ՀԱՎԵԼՎԱԾ

*«Քաղաքացիական և քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները Հայաստանում» սոցիոլոգիական հետազոտության հարցաթերթը՝ միաչափ տվյալներով*

Բարև Ձեզ, իմ անունը _______________ է, ես ներկայացնում եմ «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոնը:

Մենք ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ միասին իրականացնում ենք ուսումնասիրություն «Հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները Հայաստանում» թեմայով, և մեզ համար շատ կարևոր է Ձեր կարծիքը: Խնդրում եմ Ձեզ տրամադրել 20-25ր. ժամանակ:

Կոնտակտային քերթիկ

| | Այցելության օրը | Ժամը | Հարցվողի հասցեն | Արդյունքը (նշել կոդը) |
|---|---|---|---|---|
| 1. | | | | |
| 2. | | | | |
| 3. | | | | |
| 4. | | | | |
| 5. | | | | |
| 6. | | | | |
| 7. | | | | |
| 8. | | | | |

Այցելության արդյունքները

1. Տանը մարդ չկար - 16,2%
2. Հրաժարվեցին հարցազրույցից-19,4%
3. Խնդրեցին այցելել այլ ժամի – 1,8%
4. Հարցվողը դաշտային աշխատանքների ընթացքում հասանելի չէր- 2,6%
5. Այլ պատճառներ - 4,0%
6. Հարցազրույցն իրականացվեց – 56,0%

1. Ասացեք, խնդրեմ, որքանո՞վ եք հետաքրքրվում հասարակական-քաղաքական իրադարձություններով: (ՆՇԵԼ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ)

- մշտապես հետաքրքրվում եմ -13,2%
- ընդհանուր առմամբ հետաքրքրվում եմ - 36,7%
- առանձնապես չեմ հետաքրքրվում (դեպքից-դեպք )- 33,7%
- բոլորովին չեմ հետաքրքրվում - 16,5%

2. Մասնակցե՞լ եք արդյոք Ձեր համատիրության, համայնքի ղեկավար կազմի (համայնքապետ, ավագանի), Ազգային ժողովի 2007թ. և ՀՀ Նախագահի 2008թ. ընտրություններին: (ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏՈՂՈՒՄ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ)

| Ընտրության տեսակը | 1 | 2 |
|---|---|---|
| Համատիրության ղեկավար կազմի ընտրությանը | 45,4% | 54,6% |
| Համայնքի ղեկավար կազմի, ավագանու ընտրությանը | 67,2% | 32,8% |
| Ազգային ժողովի 2007թ. ընտրությանը | 68,3% | 31,7% |
| ՀՀ նախագահի 2008թ. ընտրությանը | 81,1% | 18,9% |

3.Երբևէ առաջադրել եք արդյոք Ձեր թեկնածությունը Ձեր համատիրության, համայնքի ղեկավար կազմի (համայնքապետ, ավագանի), Ազգային ժողովի  ընտրությունների ժամանակ:

| Ընտրության տեսակը | 1 | 2 |
|---|---|---|
| Համատիրության ղեկավար կազմում ընտրվելու համար | 1,8% | 98,2% |
| Համայնքի ղեկավար կամ ավագանու կազմում ընտրվելու համար | 4,7% | 95,3% |
| Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու համար | 1,7% | 98,3% |

4. Ձեր կարծիքով ինչպիսի՞ վարչակարգ է հաստատվել այսօր Հայաստանում:
(ՆՇԵԼ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ: ՏՐԱՄԱԴՐԵԼ ՔԱՐՏ 4-Ը)

- ժողովրդավարական - 24,6%
- ավտորիտար - 9,2%
- ամբողջատիրական - 13,7%
- խառը - 39,3%
- այլ (գրել)  - 2,9%
- դժվարանում եմ պատասխանել - 10,3%

5. Բարելավվե՞լ է արդյոք քաղաքացիական և քաղաքական իրավունքների ու ազատությունների համակարգը վերջին 3 տարիների ընթացքում: (ՆՇԵԼ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ: ՏՐԱՄԱԴՐԵԼ ՔԱՐՏ 5-Ը)

- շատ է բարելավվել - 1,9%
- որոշ չափով բարելավվել է - 37,3%
- մնացել է նույնը - 30,2%
- որոշ չափով վատացել է - 15,4%
- շատ է վատացել - 10,5%
- դժվարանում եմ պատասխանել - 4,7%

6. Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն է ՀՀ-ում գործող պետական կառավարման ձևը: (ՆՇԵԼ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ)

- նախագահական - 47,9%
- պառլամենտական - 6,2%
- կիսանախագահական - 31,2%
- այլ (գրել) - 2,1%
- դժվարանում եմ պատասխանել - 12,6%

7. Կարո՞ղ  եք ասել,  թե քանի խմբակցություններ կան ՀՀ ներկայիս Ազգային ժողովում:

- տրվել է ճիշտ պատասխան - 27,7%
- սխալ պատասխան - 24,2%
- չգիտեմ, դժվ. եմ պատասխանել - 48,1%

8. Անդամակցում կամ համակրո՞ւմ եք արդյոք ստորև թվարկվող որևէ հասարակական և/կամ քաղաքական կազմակերպության տեսակի, շարժման:

(1 ԿՈԴԸ ՆՇԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ 9-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ՀԱՐՑԵՐԸ՝ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՎ ՆՈՒՅՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՄՅՈՒՍ ՍՅՈՒՆՅԱԿՆԵՐՈՒՄ:  2 ԿԱՄ 3 ԿՈԴԵՐԸ ՆՇԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ 11-ՐԴԻՆ)

9. Ինչպիսի՞ն է Ձեր կարգավիճակը այդ կազմակերպության մեջ:

10. Որքանո՞վ է Ձեր ձայնը ազդեցիկ այդ կազմակերպության ներսում որոշումների ընդունման գործընթացում: Գնահատեք Ձեր ազդեցությունը որոշումների ընդունման գործընթացի վրա 5 միավորանոց սանդղակով, որտեղ "1"-ը նշանակում է, որ "Ձեր ձայնն ընդհանրապես ազդեցություն չունի", "5"-ը՝ "ունի վճռական նշանակություն": (ՏՐԱՄԱԴՐԵԼ ՔԱՐՏ 10-Ը)

| 8. Անդամակցությունը կամ համակրանքը | | | | 9. Կարգավիճակը | | | Հարց 10 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կազմակերպության տեսակը | Անդամակցում եմ | Չեմ անդամակցում, բայց համակրում եմ | Չեմ անդամակցում և չեմ համակրում | Շարքային անդամ | Ստորին կամ միջին ղեկավար կազմի անդամ | Բարձր ագույն ղեկավար կազմի անդամ | |
| Հասարակական կազմակերպություն | 5,2% | 25,3% | 69,5% | 2,8% | 1,4% | 1% | 2,05 |
| Քաղաքական կուսակցություն | 10,7% | 31,1% | 58,2% | 9,7% | 0,9% | 0,1% | 2,02 |
| Հասարակական շարժում | 1,1% | 19,3% | 79,6% | 0,6% | 0,3% | 0,2% | 2,9 |
| Քաղաքական շարժում | 1,1% | 16,9% | 82,0% | 0,9% | 0,2% | 0% | 2,0 |
| Ոչ ֆորմալ (պաշտոնապես չգրանցված) կազմակերպություն | 0,6% | 11,4% | 88,0% | 0,3% | 0,1% | 0,2% | 2,3 |

11. Ի՞նչ գործոններ են խանգարում Ձեզ դրսևորելու ակտիվ քաղաքական և քաղաքացիական մասնակցություն: (ՆՇԵԼ ՄԻՆՉԵՎ 4 ՊԱՏԱՍԽԱՆ: ՏՐԱՄԱԴՐԵԼ ՔԱՐՏ 11-Ը):

| | պատասխանների քվից | հարցվողների քվից |
|---|---|---|
| ֆինանսական սուղ հնարավորությունները | 12,7% | 22,3% |
| աշխատանքային զբաղվածությունը | 8,7% | 15,3% |
| ընտանեկան հոգսերով զբաղվածությունը | 15,8% | 27,7% |
| կենցաղային խնդիրներով զբաղվածությունը | 11,3% | 19,7% |
| գենդերային խտրականության երևույթը | 3,0% | 5,2% |
| անբարենպաստ հասարակական կարծիքը հասարակական, քաղաքական գործիչների վերաբերյալ | 5,0% | 8,7% |
| հիասթափությունը քաղաքական և/կամ հասարակական կյանքից | 14,6% | 25,6% |
| համապատասխան գիտելիքների և փորձի պակասը | 5,7% | 9,9% |
| այդպիսի ցանկության բացակայությունը | 15,0% | 26,3% |
| չկա որևէ խանգարող բան | 5,5% | 9,7% |
| այլ պատասխան (գրել) | 2,7% | 4,7% |

12. Քաղաքական տարբեր մակարդակի ընտրությունների վերաբերյալ հանրային կարծիքում կան տարբեր դիրքորոշումներ ու մտածելակերպի դրսևորումներ: Որքանո՞վ եք համաձայն հետևյալ դիրքորոշումների հետ:

| Պնդումներ | Համաձայն եմ | Հիմնականում համաձայն եմ | Հիմնականում համաձայն չեմ | Համաձայն չեմ | Դժ. պ. |
|---|---|---|---|---|---|
| Ընտրությունների ելքը պայմանավորված է անհատ քաղաքացու | 18,3% | 21,0% | 27,5% | 27,4% | 5,8% |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| մասնակցության և քվեարկության արդյունքով: | | | | | |
| Ընտրություններին անհատ քաղաքացու մասնակցությունը ոչինչ չի որոշում, քանի որ միևնույն է՝ արդյունքները կեղծվում են: | 36,8% | 26,3% | 22,3% | 8,6% | 6,0% |
| Վատ իշխանություններին ընտրում են այն “լավ” քաղաքացիները, ովքեր չեն մասնակցում ընտրություններին: | 29,3% | 22,5% | 17,2% | 13,5% | 17,6% |

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

13. Հետևյալ դատողություններից որի՞ հետ եք համաձայն: (ՆՇԵԼ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ)

- Կանայք և տղամարդիկ պաշտոնեական առաջխաղացման հավասար հնարավորություններ ունեն:- 29,3%
- Պաշտոնեական առաջխաղացման հարցում տղամարդկանց հնարավորություններն ավելի մեծ են, քան կանանց:- 60,9%
- Պաշտոնեական առաջխաղացման հարցում կանանց հնարավորություններն ավելի մեծ են, քան տղամարդկանց:- 4,4%
- դժվարանում եմ պատասխանել- 5,3%

14. և 15. Որքանո՞վ է կարևոր կարիերան տղամարդու և կնոջ համար: Պատասխանն արտահայտեք 5 միավորանոց սանդղակի միջոցով, որտեղ «1»-ը նշանակում է «ամենևին կարևոր չէ», իսկ «5»-ը նշանակում է «չափազանց կարևոր է»: (ՑՈՒՅՑ ՏԱԼ ՔԱՐՏ 14-15-Ը)

| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | միջինը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 14. | Տղամ.համար | 0,9%_ | 0,5% | 5,6% | 19,7% | 73,3% | 4,64 |
| 15. | Կնոջ համար՝ | 7,0% | 11,2% | 24,9% | 25,3% | 31,7% | 3,63 |

16. 17. Ձեր կարծիքով, որքանո՞վ է բարյացակամ հանրային կարծիքը քաղաքական կարիերա անող կնոջ և տղամարդու նկատմամբ Հայաստանում: (ՏՐԱՄԱԴՐԵԼ ՔԱՐՏ 16-20-Ը)

| | 16. կին | 17. տղամարդ |
|---|---|---|
| միանշանակ անբարյացակամ է | 7,8% | 0,8% |
| հիմնականում անբարյացակամ է | 19,2% | 1,5% |
| անտարբեր է | 22,4% | 8,8% |
| հիմնականում բարյացակամ է | 35,0% | 25,1% |
| միանշանակ բարյացակամ է | 11,5% | 60,4% |
| դժվարանում եմ պատասխանել | 4,1% | 3,5% |

18. 19. Ձեր կարծիքով որքանո՞վ է բարյացակամ հայաստանյան հանրային կարծիքը կին և տղամարդ բիզնեսմենի նկատմամբ: (ՏՐԱՄԱԴՐԵԼ ՔԱՐՏ 16-20-Ը)

| | 18. կին | 19. տղամարդ |
|---|---|---|
| միանշանակ անբարյացակամ է | 6,8% | 0,6% |
| հիմնականում անբարյացակամ է | 17,4% | 0,8% |
| անտարբեր է | 19,3% | 6,4% |
| հիմնականում բարյացակամ է | 34,4% | 21,4% |
| միանշանակ բարյացակամ է | 18,3% | 68,3% |
| դժվարանում եմ պատասխանել | 3,8% | 2,5% |

20. Ձեր կարծիքով որքանո՞վ է բարյացակամ հայաստանյան հանրային կարծիքը հետևյալ ոլորտներում կարիերա անող կնոջ նկատմամբ: Պատասխանն արտահայտեք 5 միավորանոց սանդղակի միջոցով, որտեղ «1»-ը նշանակում է «միանշանակ անբարյացակամ է», իսկ «5»-ը նշանակում է «միանշանակ բարյացակամ է»: (ՑՈՒՅՑ ՏԱԼ ՔԱՐՏ 16-20-Ը)

| Ոլորտները | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| Առողջապահություն | 2,5 | 2,7 | 5,4 | 21,9 | 65,5 | 2,0 |
| Կրթություն | 1,4 | 2,3 | 3,7 | 17,8 | 72,7 | 2,3 |
| Ոստիկանություն | 20,3 | 24,3 | 25,6 | 15,8 | 12,1 | 1,9 |
| Դատական համակարգ | 12,3 | 16,4 | 27,4 | 26,3 | 15,1 | 2,6 |
| Տեղական ինքնակառավարման մարմիններ | 13,8 | 17,8 | 25,8 | 26,8 | 13,3 | 2,7 |
| Ազգային անվտանգության համակարգ | 33,3 | 24,7 | 16,4 | 14,2 | 8,1 | 3,3 |
| Բանակ | 40,7 | 20,1 | 14,5 | 14,7 | 8,5 | 1,6 |
| Բանկային համակարգ | 1,6 | 2,3 | 7,8 | 34,0 | 52,4 | 1,8 |

21. Որքանո՞վ եք համաձայն հետևյալ դատողությունների հետ:

| Պնդումներ | Համաձայն եմ | Հիմն. համաձայն եմ | Հիմն. համաձայն չեմ | Համաձայն չեմ | Դժվ. պ. |
|---|---|---|---|---|---|
| Քաղաքականությամբ զբաղվող կնոջ անձնական կյանքում ինչ-որ բան այն չէ | 23,8% | 19,8% | 20,5% | 28,8% | 7,0% |
| Բիզնեսով (մասնավոր ձեռնարկատիրությամբ) զբաղվող կնոջ անձնական կյանքում ինչ-որ բան այն չէ | 17,7% | 19,3% | 25,0% | 31,8% | 6,3% |
| Կին քաղաքական գործչին և թեկնածուին առաջին հերթին թերահավատությամբ են վերաբերվում կանայք | 24,2% | 20,3% | 19,8% | 26,0% | 9,8% |
| Կինը չպետք է քաղաքականությամբ զբաղվի, նրա գործը ընտանիքն ու երեխաները պետք է լինեն | 18,1% | 17,6% | 31,3% | 30,3% | 2,8% |
| Կինը չպետք է մտահոգվի բիզնեսով ու ընտանիքի ֆինանսական խնդիրները լուծելու հարցով, նրա գործը ընտանիքն ու երեխաները պետք է լինեն | 15,3% | 18,4% | 31,7% | 32,0% | 2,6% |
| Կնոջ կարիերայի արդյունքում տուժում է ամուսնու վարկն ու ընտանեկան կարգավիճակը | 14,8% | 17,8% | 27,7% | 33,3% | 6,3% |
| Կանայք չունեն անհրաժեշտ որակներ քաղաքական բարձր պաշտոններ զբաղեցնելու համար | 10,1% | 14,2% | 26,6% | 44,9% | 4,3% |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կանայք չունեն բիզնեսով ու մասնավոր ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար անհրաժեշտ հատկություններ | 7,2% | 15,1% | 27,4% | 46,2% | 4,2% |
| Քաղաքականությունը «կեղտոտ» գործ է, ուստի կանայք այնտեղ անելիք չունեն | 20,2% | 26,2% | 23,3% | 21,5% | 8,8% |
| Կնոջ հաջող կարիերան դրական է անդրադառնում ընտանիքի սոցիալական կարգավիճակի և հեղինակության վրա | 34,0% | 32,8% | 15,6% | 8,9% | 8,8% |

22. Ձեր կարծիքով կա՞ արդյոք Հայաստանում կանանց նկատմամբ խտրականություն:

- այո- 46,6%
- ոչ (ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ 24-ԻՆ)- 41,1%
- դժվարանում եմ պատասխանել (ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ 24-ԻՆ) – 12,5%

23. Եթե այո, ապա նշված ոլորտներից որոնցո՞ւմ է առավել արտահայտվում կանանց նկատմամբ խտրականությունը: (ՆՇԵԼ ՄԻՆՉԵՎ 4 ՊԱՏԱՍԽԱՆ: ՑՈՒՑԴ ՏԱԼ ՔԱՐՏ 23-Ը)

| | հարցվողների ընդհ. թվից | Հ.22-ի 1-ից |
|---|---|---|
| քաղաքական ընտրությունների համակարգում | 23,3 % | 50,1 % |
| պետական կառավարման ոլորտում | 23,1 % | 49,7 % |
| կրթության ոլորտում | 2,4 % | 5,2 % |
| քաղաքական կուսակցություններում | 13,3 % | 28,5 % |
| հասարակական կազմակերպություններում | 3,8 % | 8,3 % |
| մասնավոր ձեռնարկատիրական ոլորտում | 7,2 % | 15,4 % |
| աշխատանքային հարաբերություններում | 11,3 % | 24,4 % |
| բոլոր ոլորտներում | 11,1 % | 23,9 % |
| այլ (գրել)______________________ | 0,3 % | 0,5 % |
| դժվարանում եմ պատասխանել | 1,9 % | 4,1 % |

24. Ի՞նչ գործոններ են խանգարում հասարակական կյանքում տղամարդկանց և կանանց հավասարության հաստատմանը հայաստանյան իրականության մեջ: (ՆՇԵԼ ՄԻՆՉԵՎ 4 ՊԱՏԱՍԽԱՆ: ՑՈՒՑԴ ՏԱԼ ՔԱՐՏ 24-Ը)

| | հարցվողների ընդհ. թվից | պատասխանների թվից |
|---|---|---|
| հասարակության ավանդական, կարծրատիպային մտածելակերպը | 63,5% | 31,1% |
| կանանց և տղամարդկանց միջև ֆիզիոլոգիական և դրանցից բխող դերային առանձնահատկությունները հասարակական համակարգում | 28,1% | 13,7% |
| սոցիալ-տնտեսական դժվարությունները (գործազրկություն, աղքատություն և այլն) | 26,0% | 12,7% |
| ընտանեկան դերերի խիստ անհավասար բաշխումը տղամարդկանց և կանանց միջև | 31,4% | 15,4% |
| իրենց իսկ՝ կանանց բացասական վերաբերմունքը հավասարության գաղափարին | 13,1% | 6,4% |
| տղամարդկանց ագրեսիվ կեցվածքը հասարակական հարաբերությունների դաշտում | 25,1% | 12,3% |
| ոչինչ չի խանգարում | 8,9% | 4,4% |
| այլ (գրել)______________________ | 0,8% | 0,4% |
| դժվարանում եմ պատասխանել | 7,6% | 3,7% |

25. Ըստ Ձեզ, ինչպիսի՞ գործոններով է պայմանավորված քաղաքական կարիերայի բնագավառում կանանց հարաբերական պասիվությունը: (ՆՇԵԼ ՄԻՆՉԵՎ 4 ՊԱՏԱՍԽԱՆ: ՑՈՒՅՑ ՏԱԼ ՔԱՐՏ 25-Ը)

| | Հարցվողների քվից | Պատասխանների քվից |
|---|---|---|
| կանանց անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ | 35,1% | 14,5% |
| հասարակական անվստահությունն ու թերահավատությունը կին գործիչների նկատմամբ | 33,5% | 13,8% |
| չկան կանանց առաջմղման մեխանիզմներ (օր. քաղաքական կուսակցությունների ընտրացուցակներում կանանց ոչ բավարար ընդգրկվածությունը) | 29,2% | 12,1% |
| կանանց ոչ բավարար կրթամակարդակը | 15,4% | 6,3% |
| կնոջ կողմնորոշվածությունը դեպի ընտանիքը | 45,2% | 18,7% |
| կանանց հասարակական կազմակերպությունների ոչ բավարար աջակցությունը | 12,6% | 5,2% |
| հարազատների (ամուսին, ծնողներ) բացասական դիրքորոշումը | 28,3% | 11,7% |
| կանանց շրջանում քաղաքական ակտիվ դիրքորոշման ու նախաձեռնողականության բացակայությունը | 11,4% | 4,7% |
| կանայք մտահոգվում են իրենց հեղինակության մասին, քանի որ ընդունված տեսակետի համաձայն քաղաքականությունը «կեղտոտ բնագավառ է» | 12,9% | 5,3% |
| քաղաքական գործընթացների բնագավառում կանանց ոչ բավարար փորձն ու գիտելիքները | 9,8% | 4,0% |
| ԶԼՄ-ների կողմից աջակցության բացակայությունը | 4,3% | 1,8% |
| կանանց նկատմամբ բռնության երևույթի դրսևորումները Հայաստանում | 3,6% | 1,5% |
| այլ պատճառներ | 1,3% | 0,5% |

26. ՀՀ ընտրական օրենսգրքի դեռևս քննարկվող նոր տարբերակում նախատեսվում են քվոտաներ կանանց համար ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների համամասնական ցուցակներում:
Ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքը քաղաքական և պետական կառավարման տարբեր օղակներում կանանց համար քվոտաներ սահմանելու գաղափարին:

- միանշանակ դրական - 25,3%
- հիմնականում դրական - 31,9%
- ինձ համար միևնույնն է (ԱՆՑՆԵԼ 28-ՐԴ ՀԱՐՑԻՆ) - 24,3%
- հիմնականում բացասական (ԱՆՑՆԵԼ 28-ՐԴ ՀԱՐՑԻՆ) - 6,9%
- միանշանակ բացասական (ԱՆՑՆԵԼ 28-ՐԴ ՀԱՐՑԻՆ ) - 4,3%
- դժվարանում եմ պատասխանել (ԱՆՑՆԵԼ 28-ՐԴ ՀԱՐՑԻՆ) - 7,2%

27. Եթե Դուք դրական եք վերաբերում կառավարման օղակներում կանանց ներկայացվածության քվոտաներ սահմանելու գաղափարին, ապա, ըստ Ձեզ, ՀՀ Ազգային ժողովում կանանց ներկայացվածության ո՞ր %-ը կարելի է օպտիմալ համարել:

| | %-ը |
|---|---|
| ՀՀ Ազգային ժողով | 36,53% |
| Կառավարություն | 32,73% |
| Մարզպետներ | 24,70% |
| Քաղաքապետներ | 25,87% |
| Գյուղապետներ | 25,21% |
| Համատիրությունների ղեկավարներ | 32,32% |

28. Հավասար որակներ ունենալու դեպքում թեկնածուներից ու՞մ օգտին կքվեարկեիք քաղաքական կառավարման համակարգում պաշտոն զբաղեցնելու համար՝ կնո՞ջ, թե՞ տղամարդու:

- կնոջ - 19,2%
- տղամարդու - 48,1%
- միևնույն է - 27,9%
- դժվարանում եմ պատասխանել - 4,8%

29. Արդյո՞ք ընտանիքը խոչընդոտ է կնոջ համար քաղաքականությամբ կամ բիզնեսով զբաղվելու հարցում:

- այո - 48,1%    (577)
- ոչ (ԱՆՑՆԵԼ 31-ՐԴ ՀԱՐՑԻՆ) - 39,8%      (477)
- դժվարանում եմ պատասխանել (ԱՆՑՆԵԼ 31-ՐԴ ՀԱՐՑԻՆ) -12,1%   (146)

30. Եթե «այո», ապա ինչո՞ւ Ձեր կարծիքով ընտանիքը չի աջակցում ու խրախուսում կնոջը քաղաքական և բիզնես ոլորտում կարիերա անելու համար: (ՆՇԵԼ ՄԻՆՉԵՎ 3 ՊԱՏԱՍԽԱՆ: ՑՈՒՅՑ ՏԱԼ ՔԱՐՏ 30-Ը)

| | հարցվողնե րի ընդհ. թվից | պատաս խանների թվից |
|---|---|---|
| ընտանիքը և երեխաները տուժում են ուշադրության պակասից | 74,5% | 34,7% |
| ընտանեկան ու կենցաղային հոգսերը ժամանակ չեն թողնում կնոջը քաղաքական և բիզնես կարիերայով զբաղվելու համար | 56,4% | 26,3% |
| քաղաքական կամ բիզնես ոլորտում հաջող կարիերա անող կնոջ ամուսինը իրեն նվաստացած է զգում | 23,2% | 10,8% |
| ամուսինը և նրա հարազատները չեն խրախուսում կնոջ քաղաքական և բիզնես կարիերան | 33,1% | 15,4% |
| ամուսնու կարիերան համարվում է ավելի կարևոր և կինը ստիպված պետք է մտահոգվի ամուսնու կարիերային աջակցելու խնդրով | 23,9% | 11,1% |
| այլ գործոններ | 1,0% | 0,5% |
| դժվարանում եմ պատասխանել | 2,3 % | 1,1% |

31. Ըստ Ձեզ ինչպիսի՞ որակներ պետք է ունենան կին և տղամարդ քաղաքական գործիչները:

| | Կին | Տղամարդ |
|---|---|---|
| Բարձր ինտելեկտուալ կարողություններ | 90,7% | 92,8% |
| Կոմպրոմիսներ գտնելու կարողություն և ճկունություն | 74,3% | 78,5% |
| Լիդերի կազմակերպչական հմտություններ | 75,3% | 82,0% |
| Արտաքին հմայք,  գրավիչ շարժուձև | 70,2% | 52,4% |
| Քաղաքական պայքարի փորձառություն | 65,4% | 75,3% |
| Պետական կառավարման օղակներում աշխատանքի բավարար փորձ | 72,2% | 75,4% |
| Հռետորական ձիրք | 65,0% | 71,3% |
| Ազնվություն և սկզբունքայնություն | 77,3% | 77,8% |
| Կապեր քրեական աշխարհի հեղինակությունների հետ | 13,6% | 30,8% |
| Նյութական ապահովվածություն | 47,7% | 51,7% |
| Հավատացյալ լինելը | 30,5% | 28,3% |
| Ամուսնացած լինելը | 39,4% | 38,2% |
| Երիտասարդ լինելը | 34,6% | 29,9% |
| Կապեր մաֆիոզ և կլանային կառույցների ներկայացուցիչների հետ | 7,4% | 23,7% |
| Նեղ խմբակային ու կլանային շահերից վեր կանգնելու և պետական մտածողություն ունենալու հատկություն | 69,0% | 74,7% |
| Այլ | 1,6% | 1,7% |

32. Տվեք երկու կին գործչի անուն, ովքեր Ձեր կարծիքով արժանի են դառնալու

| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ Նախագահ | 1. 12,1% | 2. 4,3% | 3.պատ. չկա - 83,6% |
| ՀՀ ԱԺ անդամ | 1. 12,0% | 2. 5,8% | 3. պատ. չկա - 82,3% |
| ՀՀ Կառավարության անդամ (նախարար) | 1. 10,7% | 2. 1,6% | 3.պ.չ. - 87,7% |

33. Տվեք երկու տղամարդ գործչի անուն, ովքեր Ձեր կարծիքով արժանի են դառնալու

| | | | |
|---|---|---|---|
| ՀՀ Նախագահ | 1. 27,8% | 2. 15,0% | 3.պատ. չկա - 57,2% |
| ՀՀ ԱԺ անդամ | 1. 12,9% | 2. 6,7% | 3. պատ. չկա - 80,4% |
| ՀՀ Կառավարության անդամ (նախարար) | 1. 10,1% | 2. 4,0% | 3.պ.չ.-85,9% |

34. Հետևյալ պաշտոններից որոնցում կցանկանայի՞ք տեսնել կանանց, իսկ որոնցում` ոչ:

| | այո | ոչ |
|---|---|---|
| ՀՀ Նախագահ | 28,7% | 71,3% |
| ԱԺ նախագահ | 45,1% | 54,9% |
| Վարչապետ | 34,0% | 66,0% |
| ԱԺ պատգամավոր | 82,2% | 17,8% |
| ՀՀ նախարար | 76,8% | 23,2% |
| Մարզպետ | 46,3% | 53,8% |
| Քաղաքապետ | 48,6% | 51,4% |
| Գյուղապետ | 47,9% | 52,1% |
| Համատիրության ղեկավար | 67,3% | 32,8% |

35. Ձեր կարծիքով ի՞նչ կարող է տալ պետական կառավարման բարձր օղակներում կին գործիչների թվի ավելացումը: (ՆՇԵԼ ՄԻՆՉԵՎ 4 ՊԱՏԱՍԽԱՆ: ՑՈՒՅՑ ՏԱԼ ՔԱՐՏ 35-Ը)

| | Հարցվողների թվից | Պատասխանների թվից |
|---|---|---|
| կհաստատվի սոցիալական արդարություն կանանց նկատմամբ | 43,9% | 21,1% |
| քաղաքական գործիչները կդառնան ավելի զուսպ, կմեղմվեն քաղաքական լարված հարաբերությունները | 36,2% | 17,4% |
| կավելանա քաղաքական կառույցների նկատմամբ վստահությունը | 27,1% | 13,0% |
| քաղաքականությունը կդառնա ավելի բարոյական ու մարդասիրական | 29,0% | 13,9% |
| կնպաստի կոռուպցիայի նվազեցմանը կառավարման համակարգում | 18,8% | 9,0% |
| կնպաստի քաղաքական երկխոսություններում փոխզիջման և հանդուրժողականության սկզբունքի արմատավորմանը | 21,8% | 10,5% |
| կբերի ավելի շատ բացասական փոփոխություններ | 5,8% | 2,8% |
| ոչինչ էլ չի փոխվի | 16,8% | 8,0% |
| այլ պատասխան | 0,9% | 0,4% |
| դժվարանում եմ պատասխանել | 8,2% | 3,9% |

36. Ի՞նչը կարող է առավել չափով նպաստել կանանց քաղաքական մասնակցությունն ավելացնելուն և ընդլայնելուն: (ՆՇԵԼ ՄԻՆՉԵՎ 4 ՊԱՏԱՍԽԱՆ: ՑՈՒՅՑ ՏԱԼ ՔԱՐՏ 36-Ը)

| | Հարցվողների թվից | Պատասխանների թվից |
|---|---|---|
| օրենսդրության համապատասխանեցումը կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքներին | 45,8% | 20,9% |
| կանանց քաղաքական կազմակերպությունների (կուսակցությունների) ստեղծումը | 29,3% | 13,4% |
| կանանց նորանոր հասարակական կազմակերպությունների ստեղծումը | 20,7% | 9,4% |
| կանանց հասարակական կազմակերպությունների համախմբումը | 19,3% | 8,8% |
| ընտրությունների մասին օրենքում կանանց համար քվոտաների սահմանում | 23,8% | 10,9% |
| զանգվածային բողոքի ակցիաների կազմակերպումը ընդդեմ գենդերային բռնության ու խտրականության | 8,3% | 3,8% |
| քաղաքական կուսակցություններում կանանց ներկայացվածության և կարգավիճակի ավելացումը | 19,9% | 9,1% |
| կրթական ծրագրերի անցկացումը կանանց մոտ լիդերական հատկությունների զարգացմանը նպաստելու համար | 16,8% | 7,6% |
| ԶԼՄ-ների միջոցով կին հասարակական-քաղաքական գործչի և կին բիզնեսմենի դրական կերպարի ստեղծումը | 13,3% | 6,0% |
| այլ (գրել) | 1,8% | 0,8% |
| դժվարանում եմ պատասխանել | 20,4% | 9,3% |

37. Դուք կերաշխավորե՞ք արդյոք Ձեր ընտանիքի կին անդամին (կնոջը, մորը, քրոջը, աղջկան) քվերակվելու հետևյալ ընտրական պաշտոններում

| | Այո | Ոչ | Դժ.պ. |
|---|---|---|---|
| ՀՀ Նախագահի պաշտոնում | 34,3% | 60,2% | 5,6% |
| Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնում | 53,4% | 41,6% | 5,0% |
| Տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի պաշտոնում | 48,0% | 46,2% | 5,8% |
| Համատիրության ղեկավարի պաշտոնում | 49,5% | 41,3% | 9,2% |

38. Ասացեք խնդրեմ, երբևէ մասնակցե՞լ եք կամ կմասնակցեիք արդյոք ստորև նշված միջոցառումներին:

| | Մասնակցել եմ | Կարող էի մասնակցել | Չեմ մասնակցի ոչ մի դեպքում |
|---|---|---|---|
| Կոլեկտիվ դիմումի ստորագրում | 35,2% | 30,3% | 34,6% |
| Մասնակցություն թույլատրված ցույցերի | 21,9% | 28,5% | 49,6% |
| Մասնակցություն չթույլատրված ցույցերի | 6,0% | 18,3% | 75,8% |
| Մասնակցություն պիկետների կառավարական շենքերի առաջ | 2,3% | 15,8% | 82,0% |

39. Ստորև նշված հիմնահարցերից որո՞նց վերաբերյալ կցանկանայիք Դուք ստանալ գիտելիքներ: (ԿԱՐԵԼԻ Է ՆՇԵԼ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ)

| | Հարցվողների թվից | Պատասխանների թվից |
|---|---|---|
| լիդերության հմտություններ | 26,1% | 14,6% |
| հասարակական միջոցառումների անցկացման հմտություններ | 14,3% | 8,0% |
| հրապարակային ելույթի հմտություններ | 10,8% | 6,1% |
| քաղաքական գործունեության կազմակերպման հմտություններ | 10,6% | 5,9% |
| իրավական գիտելիքներ | 42,8% | 24,0% |
| կազմակերպության ռազմավարական պլանավորում | 8,3% | 4,6% |
| աշխատանք ԶԼՄ-ների հետ | 9,6% | 5,4% |
| այլ կազմակերպությունների հետ համագործակցության հմտություններ | 5,3% | 3,0% |
| ծրագրերի իրականացման նպատակով ֆինանսական միջոցների հայթայթման հմտություններ | 14,0% | 7,9% |
| այլ | 1,1% | 0,6% |
| չկա այդպիսի ցանկություն | 35,5% | 19,9% |

## ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ

40. Ներկա պահին Դուք ունե՞ք որևէ աշխատանք, զբաղմունք, որը եկամուտ է բերում:

- այո - 42,1%
- ոչ, գործազուրկ է - 20,7%
- ոչ, սակայն իրեն գործազուրկ չի համարում.( ՍՏՈՐԵՎ ՆՇԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ, ԱՆՑՆԵԼ 43-ՐԴ ՀԱՐՑԻՆ)
- կենսաթոշակառու է - 13,3%
- տնային տնտեսուհի է - 16,8%
- սովորող է (ուսանող է) - 4,4%
- անաշխատունակ է -1,0%
- այլ -1,8%

41. Ինչպիսի՞ն է Ձեր աշխատանքը:

- այն կայուն, մշտակա՞ն բնույթ է կրում, թե՞ ժամանակ առ ժամանակ, սեզոնային է
- Դուք աշխատում եք պետական, թե՞ մասնավոր հաստատությունում

| Աշխատանքի բնույթը | | | | | |
|---|---|---|---|---|---|
| կայուն, մշտական աշխատանք | | | ոչ կայուն (ժամանակ առ ժամանակ, սեզոնային) աշխատանք | | |
| 1. աշխատում է պետական հաստատությունում | 2. աշխատում է ոչ պետական, մասնավոր հաստատությունում և այլն | 3. անհատ ձեռներեց, անհատական գյուղացիական տնտեսություն | 4.աշխատում է պետական հաստատությունում | 5.աշխատում է ոչ պետական, մասնավոր հաստատությունում և այլն | 6.անհատ ձեռներեց, անհատական գյուղացիական տնտեսություն |
| 1. - 17,3% | 2. – 8,2% | 3. – 3,1% | 4. – 1,5% | 5. – 6,4% | 6. – 5,3% |
| 59 316,43 | 84 264.71 | 65 833,33 | 53 266,67 | 47 512,20 | 44 188,52 |
| 42. Ամսական միջինացված եկամուտը (աշխտավարձը)՝ՀՀ դրամով: | | | | | |

43.Ձեր ընտանիքի անդամների թիվը:

Գրել - միջինը՝ 4, 39

44. Որքա՞ն է կազմում Ձեր ընտանիքի ամսական միջին եկամուտը:
(ՑՈՒՅՑ ՏԱԼ ՔԱՐՏ 44-Ը)

- մինչև 33 000 դրամ - 12,6%
- 34 000-ից 70 000 դրամ – 25,6%
- 71 000-ից 100 000 դրամ – 18,1%
- 101 000-ից 150 000 դրամ – 15,9%
- 151 000-ից 200 000 դրամ – 8,9%
- 201 000-ից 300 000 դրամ – 4,6%
- 301 000-ից 400 000 դրամ – 1,2%
- 401 000-ից 500 000 դրամ – 1,0%
- 501 000 դրամից ավելի – 0,3%
- պատասխան չկա – 11,9%

45. Ձեր ընտանեկան կարգավիճակը

- չամուսնացած- 17,8%
- ամուսնացած – 71,3%
- ամուսնալուծված – 2,1%
- ամուրի/այրի – 8,8%

46. Սեռը

- արական – 45,8%
- իգական – 54,2%

47. Տարիքը

- 18-30 – 30,3%
- 31-45 – 29,0%
- 46-60 – 22,5%
- 61 և ավելի – 18,2%

48.Կրթությունը

- թերի միջնակարգ - 4,4%
- միջնակարգ – 44,6%
- թերի բարձրագույն – 13,6%
- 4. բարձրագույն – 37,4%

## ՀԱՐՑՎՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

49. Մարզը

- Երևան – 34,3%
- Արմավիր – 19,1%
- Շիրակ – 19,6%
- Գեղարքունիք – 16,4%
- Սյունիք – 10,6%

50. Բնակավայրը

- Քաղաք (մարզային) – 31.4%
- Գյուղ (գրել) - 34,3%
- Երևան - 34,3%

51. Հարցվողի տվյալները

Հեռախոս ______________________________
Հարցվողի անուն/ազգանուն _____________________________________________
Ծննդյան ասաքիվը, տարին _________________________________

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ